



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20065

891.99 + 92
4-93

2003.



391 99-192

Կ-93 ՆՈՐ

ԵՐԳ-ԱՐՄԱՆ

ԿԱՄ

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՈՑ

ԵԽ

ԲԱՆԱՍՏԵՎԾԱԿԱՆ ԳԵՐԹՈՒԱԾՈՑ

ՍԿՄԵԱԼ, ՅԱ.Պ.ԶՆՈՑ ՏԱՐԵԴԱՐՁԵ

ԱԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԻՆՉ ՑԱՅՃՄԱ



Կ. ՊՕԼԻՍ

ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

ԽԵՂՀ

1987 Հ. Խ. Տ. Հ. Հ. Հ.

ՀՀ Վ. Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամեն Ազգ ամեն ժամանակ իւր բանաստեղ-
ծութիւնն եւ իւր երդիչներն ունեցեր է , որք ի-
րենց ապրած ժամանակին հանդամանաց համե-
մատ հասարակութեան զգացման թարգման կանգ-
նելով երգեր կամ ողբացեր են ժողովրդեան մը ,
ազգի մը բարդը կամ թշուառութիւնը : Ուստի
իմաստունք մեծ կարեւորութիւնն կընծայեն եր-
գերու , եւ ազգի մը պատմական ճշգրիտ եւ կեն-
դանի նկարագիրը կը համարին զանոնք :

Ի հարկէ մեր ազգն ալ ունեցեր է իւր ազ-
գային կեանքը քնարներու վրայ երգող բանաս-
տեղներ , որոնց ամենէն ընտրելագոյն եւ հնա-
գոյններէն հազիւ մէկ քանի պատառիկ ազատեր
են ժամանակին ամենածախ ժանեաց ձեռքէն մեր
Խորենացի քերթողահօր չնորհիւ . իսկ վերջին դա-
րերու համար երգերու նշանաւոր հաւագածոյ մը
չէ հնար ընծայել ազգին , բաց ՚ի անոնցմէ որ
ասդիս անդին զանազան զրոց անկիւները ցրիւ
կը գտնուին :

Հատ տարի չկայ , որ Բեդրսպուրկի , Տփխի-
սու մէջ ազգային երգոց հաւագածոյներ հրատա-
րակուեցան , որոնք բոլորն ալ վերջին ժամանա-
կի գործեր են . բայց եւ այնպէս գովելի եւ բազ-
մօգուտ աշխատութիւն :

52 / 84 - ԵԿ. ՆՀ.

Պ 2003

Ի ԼԽՍ ՀԵԽԱՑԵԱԾ
ԳՐԱՎԱՀԱՅԱՆ
ՅՈՎԱՆԵՖ ԳԱՎԱՑԵԱՆ



38630-67

Երանի թէ ուրիշներն ալ, աւելի Հայաստան
աշխարհին զանազան գաւառներն երգուած եր-
գերն հաւաքէին եւ տպագրութեամբ 'ի լոյս ըն-
ծայէին 'ի վայելս բանասիրաց :

Ոյսու մոօք իններորդ անգամ 'ի լոյս ընծայ-
ուեցաւ այս երգարանը՝ որ գլխաւորապէս մօտ
տարիներս Տաճկաստանի եւ Արուսաստանի մէջ
յօրինուած բանաստեղծական երգոց հաւագածոյ
մ'է, ուրիշ ապագայ բանասիրութիւնը մեծա-
պէս լոյս պիտի առնէ մեր ժամանակները հասա-
րակաց վրայ տիրող զգացմանց եւ գաղափարաց
վրայ :

Յ. Գ. ԳԱՎԱՅԵԱՆ



ՆՈՐ
ԵՐԳԱՐԱԿ

ԱՌ


ՀԱՅԱՍՏԱՆ

Ա՛ն Հայաստան, Հայաստան,
Ընդէր կորուսեր տէրըդ .
Եղեր այլոց ապաստան,
Թառամեց վարդ պատկերըդ :

Ոչքեզ պէս բարեպաշտ կար,
Ոչ վանքերիդ պէս գանքեր .
Ոչ գաշտերիդ պէս դաշտ կար,
Ոչ հանքերիդ պէս հանքեր :

Հողըդ պտղաբեր՝ աղնիւ,
Քարերըդ ողջ ակունք են .
Գետերըդ լիքն սնթիւ,
Կարմրախայտ ձկունք են :

Լերինքըդ ծաղիկ հագած՝
Իբր հարսնացեալ օրիորդ .
Եղջերուքըդ վաստակած,
Ի՞նչ շահ որ չունիս որսորդ :



ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Այդեացդ ամեն մէկն ,
Էր դրախտ Եղեմական .
Բայց անբաղդութեան տէգն ,
Խզեաց լարդ կենսական :

Թո՞ղ՝ թշնամիք բերկրին ,
Մեր աչաց արտասուքով .
Յուսամ՝ երկար չի մնան ,
Նրանք էլ ուրախ հոգւով :

Ասոուած ամենագէտ է ,
Անսահման արդարադատ .
Անաչառութեամբ դիտէ ,
Լաւին լաւ տալ , վատին վատ :

Ես եմ Սէյեաթի կինն ,
Վատաթեան տոհմի Ռակին .
Հայրենեաց կաթոգինն ,
Հաւատացէք իմ խօսքին :

1858 մայիս 28

ի Վայոց-Զորն

ՏԵԿԻՆ ՄԱԴԱԹԵԱՅՑ (*)

~~~

ԱԹԱՋԻՆ ՑԱՐԵԹԱՐՁ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԽՑԵԽ ՄԱՅԻՆ ՀՀ

Արիք Հայկազունք , յառաջ ընթանանք ,  
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք .  
Որ Ազգն երբ զԱնի փրկարար գոյեց ,  
Նոր հոգի . նոր կեանք Անոր պարգեւեց :  
Եկայք բարեկամք , առ բարձրեալն Աստուած՝  
Ուղղենք մեր մազթանք սուրբ սրտէ բղիսած .  
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Զրկանք , բռնութիւն , վատթար վարչութեան ,  
Քերին մահն 'ի դուռն Հայոց ազգութեան .  
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց ,  
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց :  
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ ,  
Ուր ամեն վայրկեան գոյեւ պարտ է մեզ .  
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Զնշեց ամենայն կարծիք անձնական .  
Խեղդեց ամենայն ձայն անհատական .  
Հրաւեր կարդաց Աստուծոյ ձայնին ,  
Առաջնորդ լինեւ դորձոց ազդային :

(\*) Ոսկի Յովլէփեան անուն : Էս բարեպաշտուցի ամենապահին քաջահամբաւ երգչի Տ. Պետրոսի Տ. Յովլէփեան Մատաթեանց . Սէյեատ մականուանելոց : Երանի թէ Հայաստան շատ ունենար այսպիսի կաթողինք Հայրենեաց և ուսումնատենչ տիկնայք :

Այն որ Աստուծու ձայն տուաւ մեզի ,  
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի .

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայերս անարգված գրկեց բարձրացուց ,  
Մարդկային կոչման մեզ արժանացուց .  
Ենորհեց մեզի զր ազատն Աստուած ,  
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած .  
Որուն շնորհիւ յարդ ստացանք մենք ,  
Անոր յարդ տալով ապրինք ու երգենք .  
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Դուն ալ Հայաստան , սիրուն Հայրենիք ,  
Ալ այսուհետեւ մի սըդար լոիկ .  
Զի ալ քու որդիք նոր ոգւով բերկրեալ ,  
Զքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ :  
Ալ մի լար մայրիկ , լացդ ՚ի պար փոխէ ,  
Եւ ձայնիւ քաջրիկ որդւոցդ հետ երգէ .  
Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայեր , միանանք մեր մօրն հետ օրհնենք ,  
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք .  
Սահմանադրութեան բարեաց փոխանակ ,  
Թող վարեն ուրախ կեանք մի փառ ունակ :

Թող և մեր որդիք հետ անոնց անուան ,  
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան .

Կեցցէ , Կեցցէ , Կեցցէ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Յ. Գ. Ազգային



## Ե Ր Գ.

### Ա Զ Ա Տ ՈՒ Թ Ե Ա Ն

Ազատ Աստուածն այն օրից ,  
Երբ հաճեցաւ շունչ փչել .  
Իմ հողանիւթ շինուածքին ,  
Կենդանութիւն պարգեւել :

Ես անբարբառ մի մանուկ ,  
Երկու ձեռքս պարզեցի .  
Եւ իմ անզօր թեւերով ,  
Ազատութիւն գրկեցի :

Մինչ գիշերը անհանգիստ ,  
Օրօրոցում կապկապած .  
Լալիս էի անդադար ,  
Մօրս քունը խանդարած :

Ես մինչ ՚ի մահ , կախաղան ,  
Մինչև անարդ մահու սիւն .  
Պիտի գոռամ պիտ՝ կրկնեմ ,  
Անդադար , ԱԶԱՏՈՒԹԻՒՆ (\*):



## ՆՈՒԱԳ

ԶՈՐՅՈՐՅ ՑԱՐԵԴԱՌՉԻ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա.

Ահա յերկնից ժպտի Աստուած քաղցր առ մեզ,  
Մինչ ձիթենեաց ոստ ՚ի ձեռին դանք հանդէս .  
Ուխտ ՚ի բագին սիրոյ՝ դնենք ոհ սիրոք մեր ,  
Իշք մեր թաշն թող ՚ի լուսոյ կամարներ :

Ամպերուն մէջէն ,

Կիզանուաղ ասողեր .

Պըսակ մեզ սփուեն ,

Ու զուարթ նայուածքներ :

Սանոնք Արամեան ՚ն առեք ՚ի նուագ ,  
ԶԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ Հայուն յոյս ու փառք :

—42—  
Խնդրում էի նորանից ,  
Բազուկներս արձակել .  
Ես այն օրից ուխտեցի ,  
Ազատութիւնը սիրել :

Թոթով լեզուիս մինչ կապերը ,  
Արձակուեցան բացուեցան .  
Մինչ ծնողքս իմ ձայնից ,  
Խնդացին ու բերկրեցան :

Սախկին խօսքն որ ասացի ,  
Չէր հայր կամ մայր , կամ այլ ինչ .  
Ազատութիւն , դուրս թռաւ ,  
Իմ մանկական բերանից :

“ Ազատութիւն , ինձ կրկնեց ,  
Ճակատագիրը վերեւից .  
“ Ազատութեան դու զինուոր ,  
Կամի՞ս գրվիլ այս օրից :

Ոհ , փշոտ է ճանապարհու ,  
Քեզ շատ փորձանք կ'սպասէ .  
Ազատութիւն սիրողին ,  
Այս աշխարհս խիստ նեղ է ” :

—Ազատութիւն , — գոչեցի , —  
Թող որոտայ իմ գլխին .  
Փայլակ , կացակ , հուր , երկաթ ,  
Թող դաւ դնէ թշնամին :

Զուարձացիք որդիք սիրոյ Հայութեան,  
Ահա ձեր ձայնք հասին երկնից ՚ի խորան .  
Փոխան վշոց՝ վարդք փթթեցան բռ դաշտեր,  
Եւ իրաւանցդ արդար՝ ՍՍՀՄԱՆ քեզ ետ Տէր :

Թողլ աչքերդ դադրին ,  
Արցունք ցողելէն .  
Զի Հայկայ Ճակտին ,  
Աստեղք ըողօղեն :

Որդիք Արամեան , ծագի՛ Արշալոյս ,  
Դրօշմըն ՚ի Ճակատ երկնաճաճանչ ՅՈ՛ՅՈ :  
Գ.

Երբ յաւերակս լուռ հսկես մայրդ Հայաստան,  
Աչքերդ ուղիէ , արդ՝ ՚ի կամար Աստուածեան .  
Տես աստղն Հայուն ինչպէս խայտայ լուսավառ ,  
Կիսբերան օրհնէ՛ զորդիսդ փրկարար :

Օ՛ն մուսայք Մասեաց ,  
Ի մէջ դարերուն .  
Հնչէ՛ք Հայկազանց ,  
ՍՍՀՄԱՆՍՊՐՈՒԹԻՒՆ :

Որդիք Դիցազանց , օ՛ն գրկենք զիրար ,  
Օրհնենք մեր Սուլթանն՝ ԱԶԻՉ վեհափառ :

## ԵՐԳ

Բ Ա Գ Ո Ս Ի

Ակոռիին մեծ կարասին բոլորտիքն են բազմեր .  
Աւագ իշխանք , ծեր պարոնայք ժողովք են  
Հոն կազմեր ,

Այն այն ժողովք են հոն կազմեր :

Ասստիկ է վէճն մեծ է խնդիրն զոր հոն տեղ  
կ'խորհին ,  
Թէ ի՞նչ կերպով դարման լինէր հիւանդ մեր  
աշխարհին ,

Ա. Յ. այն հիւանդ մեր աշխարհին :

Մէկն այս կ'ըսէ մէկն այն կ'ըսէ կ'ծագի լցոն  
առտուն ,

Ինձ լսեցէք տեաբք կը գոչէ աւանին պետն  
արթուն ,

Ա. Յ. այն աւանին պետն արթուն :  
Թողլ թագն առնու կ'ըսէ բագոս և փառօք  
ապրի շատ ,

Իսկ ցնծութիւնն ըլլայ դշնոյ և գահն ալ  
յԱրտաշատ ,

Ա. Յ. այն և գահն ալ յԱրտաշատ :  
Այսպէս մեզի նոր ցնծութեան արեւներ կը  
ծագին ,

Առողջ կըլլայ մեր ժամանակ և նոր մեր աշ-  
խարհին .

Ա. Յ. այն և նոր մեր աշխարհին :

# ԵՐԳ

ՈՒԽԱԽՈՂԻԹԵԱՆ

ՍԱՀԱ բաժակ ու ըախութեան ,  
Ի սէր յաւերժ միութեան .  
Զ Բ Վայելուչ՝ որդիք Հայկեան ,  
Մէկտեղ հրձուին և ցնծան :

ԿԵՋՋԵՇ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Վ ԵՐՋՈՒՐ աչքըդ յերկնից կամար ,  
Փայլի հեռուն աստղ մի պայծառ .  
Եւ դու ՚ Հայ զարթիր սիրտ առ ,  
Հայոց բաղդըն ալ չէ խաւար :

ԿԵՋՋԵՇ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Բ ԱՆ Է այսչափ բաժանում ,  
Ըլլամք ու ըախ և խնդում .  
Նախանձ , վրէժ , ձեղ թողում ,  
Անդունդք և վիճք անհասնում :

ԿԵՋՋԵՇ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

38630-67

Փորձ մը ըրինք բաժանման ,  
Փորձ մ'ալ ընենք միութեան .  
Լեցուի վափաբդ Հայաստան ,  
Տես որդիք քո միանան :

ԿԵՋՋԵՇ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք ,  
Ո՞ ըլ գիտաց թէ մեք Հայ եմք .  
Ո՞ ըլ գիտեր թէ եղբայր եմք ,  
Արեք ծիծաղ գիմօք երգեմք :

ԿԵՋՋԵՇ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ո՞ր բոնաւոր ՚որ օրէնքներ ,  
Կը պատուիրեն թէ մի սիրեր .  
Ազգիդ օգուտն ու բարեքներ ,  
Ակրոյ գահն է յերկինս ՚ի վեր :

ԿԵՋՋԵՇ սէր և միութիւն  
Կրեմք մի սիրտ մի արիւն :



ի Մինիթիկն ՀԱՅՈՑ

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալքար  
ձուստ երկնաձեմ,  
Հայոց բաղդին հեծեալ՝ ի կառու բարձր գոչը  
զուարթադէմ.

Հզօր պատդամ,  
ի վերուստ դամ.  
Միութիւն Հայք,  
Եւ նոր ձեզ կեանք :

Տրոփեն ուժգին և լանջք և սիրտք,  
Խաղայ արիւն ՚ի թինթ ՚ի թինթ .  
Մեղք կաթէ սուրբ սէրն ՚ի խինդ,  
ՋԱՌԱՔԻՆՅՈՆ ՚ի Հայու սիրտ :

Սիրաբորբոք համբոյր բղիւեն,  
Որտասուաթոր աչկունք ցօղեն :

Արիք Հայկազունք,  
ի սէր փութասցուք .  
Եռանդուն մատիք,  
ի համբոյր հեզիկ :  
Տուք համբոյր մի եւս,  
Բացէք զձեր թեւս .  
Տուք համբոյր մի եւս ,  
Սիրոց է պարդեւս :

ԿԵցցեն յաւերժ վեհ Հայկազունք,  
Անմահութեան սիրուն սերունդք .  
ԿԵցցէ յաւերժ Հայկայ ոդին,  
ՄԵԴ են վիայ երկիր երկին :

Անկաւ պարիսալ ժանտ նախանձուն ոչ ՚ի  
շանթից ահարկու ,  
Ա.Ջ յակնարկի եւ եթ սիրոց վերաստացեալ  
կենսատու .

Երկին երկիր ,  
կան ՚ի յակճիւ .  
Ընդ Հայ ազդիս ,  
Բիւր հրաշալիս :

Բացցին անդունդք սեաւ անյատակ,  
Ծածկել զբաղդին հին յիշատակ .  
Տիեզերաց բացցին մատեանք,  
Անդէն դրոշմել Հայոց պարծանք .

ԿԵցցէ Հայոց սէր պանձալի .  
Բերող փառաց նախանձելի :

Արիք Հայկազունք ,  
ի սէր փութասցուք և լն . և լն :

Գ. ԱՊՏՈՒՐԱ:

Ո ՀՅԱԼԻ ԲԱՆՔ  
ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ  
Ա.Ռ. ՀԱՅՈՎ.ԶԳԻ ՈՄՆ

ՈՐ ԳՆԱՑԵԱԼ, ԿՐ ՆՄԸ. Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անի քաղաք նստէր՝ կուլայ,  
Զկայ ըստ՝ մի լայ, մի լայ.  
Կ'ըսես քիչ է, թող, մնայ՝ լայ,  
Ան, երբ լսեմ՝ մի լայ, մի լայ։

Շատ ցաւերով կայրիմ տապիմ,  
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ.  
Որ խղճալոյն գայ մօտենայ,  
Հեջէ ըսէ մի լայ, մի լայ։

Յորդորակ

Ան հայ տղայ, խղճա ինձի.  
Տես թէ քո Անին ի՞նչպէս է.  
Հերիք ես լամ դու չգթաս,  
Չէ քո Անին ափսոս է։

Ան ու վախով օրերս անցաւ,  
Լալէն աչքերս կուրացաւ.  
Որբ մնան ինձ վիճակեցաւ,  
Բախտս բնաւ զիս մոռացաւ։

Կորուցեր եմ թագաւորներ,  
Ժողվեր եմ գլխուս քէօս բուվեր.  
Որք միշտ կերգեն “ Անին անցաւ,  
Անին անտէր աւերեցաւ ”։

Անին իմ շատ մարդաբնակ,  
Մնացեր եմ դառն աւերակ.  
Իմ լացն իմ կոծն իմ աղաղակ,  
Անտէր որբերու նմանակ։

Երբեմն էի շատ աննման,  
Հայոց քաղաքն Արեւելեան.  
Աւերեր եմ սեփահատակ,  
Նստէր կուլամ, ես միայնակ։

Եկար տեսար դարձեր կերթաս,  
Լալով կըսես “ բարեւ հաս ”.  
Աստուած սիրես չ'մոռանաս,  
Մասիս սարին ե՛րբ մօտենաս։

Ըսես իմ քաջ Արարատին,  
“ նոդէր իւլայ + իւղճ Անին ”.  
Կ'ըսէ, երբ աւետիք կ'ըստաս,  
Քէ “ իւ Անէ հերէ + է լա ”։

Նոր քնար Հայաստանի  
՚ի Մոսկուա

# ԵՂՋ

Ա Թ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Առ ընկալ 'ի գիրկդ մայրդ Հայաստան,  
Զորդիս .քո սիրուն ցրուեալ աստ և անդ .  
Տես՝ ի՞նչպէս սիրովդ և .քու կարօտովդ ,  
Վառուած բորբոքած .քու տեսցդ յանկան :

Յորդորակ

Արի կաց ուրեմն ով մայր Հայաստան ,  
Նոր ոգի զգեցիր փառօք անվախճան :

Օն զրահաւորիմք ով որդիք Հայկեան ,  
Մեր մօր ալցունքներն ջնջել յաւիտեան .  
Զօրանանք սիրով և սուրբ միտւթեան ,  
Ըլլանք ախոյեան ընդդէմ թշնամեաց :

Յորդորակ

Հապա գործելու ժամանակն հաստւ ,  
Հայրենասիրին կոյ փառօք անզըրաւ :

Ա. Պ. Պ. ՓԱՓԱԶԱԱՆ



# ՆՈՒԱԳ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԵՐԻՐՈՐԴ ՑԱՐԵՖԻԱՐՁԻ

Արեք Հայկայ քաջ սերունդք ,  
Թորգոմայ վեհ զաւակունք .  
Թեւ թեւ մտած առնունք պար ,  
Եւ բարեւենք այս ափունք :  
Բարեւենք քաղցր երգերով ,  
Մեք միացեալ սուրբ սիրով .  
Ուխտենք մնալ մինչ ցմահ ,  
Ազգանուեր սրտերով :

Ուխտենք ով Հայեր ,  
Մէունէւն և Սէր :

Եկէք եղբարք միաբան ,  
Մի սիրտ ըլլանք անբաժան .  
Առաջնորդէ մեզ Օրէնտ ,  
Քաջակիրթ ազգաց նման :  
Այս միտւթեան մեր վկայ ,  
Թող աշխարհի որոտայ .  
Դարուց ի գարս յիշատակ ,  
Տորերունք այս ներկայ :

Ուխտենք ով Հայեր ,  
Մէունէւն և Սէր :



**Զար** նախանձու վատ կիրքեր ,  
 Աւ չը պղծեն մեր սիրտեր .  
**Ի բաց** 'ի բաց թշնամանք ,  
 Առնունք ո՞ւր համբոյրներ :  
 Ընկեր զընկեր թող գրկէ ,  
 Եւ իւր սրտին կցորդէ .  
**Զերմ** արտասուաց կաթիլներ ,  
 Ուխտիցը վկայ գոչէ :

Ուխտենք ո՛վ Հայեր ,  
 Մէունէն և Սէր :

**Մօր** մեր թշուառ կաթողին ,  
 Հայրենեաց տիսուր ոդին .  
 Տեսնէ զմեղ սուրբ սիրով ,  
 Ու չ'հեծէ լալագին :  
 Զուարթ գէմքով մեր վրայ ,  
 Հաշտ ակնարկէ ու խնդայ .  
 Մատունքն ՚ի լար քաղցրալուր ,  
 Ընդ մեղ երգէ ու ցնծայ :

Ուխտենք ո՛վ Հայեր ,  
 Մէունէն և Սէր :

Եղէ , ողջոյն դիւցազանց ,  
 Նուիրական դամբանաց .  
 Աւետելով թող սփռէ ,  
 Մաղկանց փունջեր հետն առած :

Ողջոյն ընդ ձեզ դիւցազունք ,  
 Պաշտելի քաղցր աճիւնք .  
 Աւետեմ Սէր Մէունէն :

**Զոր** ուխտեն արդ Հայկազունք ,

Ուխտենք ո՛վ Հայեր ,  
 Մէունէն և Սէր :

Կ. ԿԻՒՐՃԱՆ

## ԽՄԲԵԱԿՆ

( Կ ՆԵՐՔՈՒԹԸ ՍԿԸՆԵԱԼ )

**Արկածք** Հայոց ժամանակին ընդ անիւ .  
 Փշբին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ .  
 Ուխտեմք ՚ի Սէր Եղբօր՝ զկեանս գնել գրաւ ,  
 Օ'ն անդը ՚ի մէնջ այր ընկերին լարել դաւ :

Սրացաւ ՚ի մէնջ բաղդն անհամբոյր .  
 Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր .  
 Եղբայր զեղբայր գգուէ Ակրով ,  
 Ճոխն աղքատին մատչի Գթով :  
 Էանց գիշեր՝ արդ առաւօտ ,  
 ՚ի ցող ժպտին Մասեաց արօտ .  
 Եւ վառ ՚ի վառ շողշողելով ,  
 Լոյսն արեգին ծըփայ ՚ի ծով :

Հապա մանկունք ,  
 Վեհ քաջազրւնք .  
 Ի գլուխ պըսակ ,  
 Ի յաղթանակ ,  
 Առեալ նուագու ,  
 Արաքս արագու ,  
 Օ՞ն փութացուք ,  
 Օ՞ն երգեսցուք :  
 Սէր և դութ ,  
 Մէր պըսակ .  
 Առ մէր բաղդ ,  
 Հրաւիրակ ,  
 Ցնծացեն ,  
 Որբ լըսեն .  
 Թէ՞ ուր Հայ ,  
 Զէք՝ անդ վայ » :

ԵՐԱԿԱՐ ՄԵԼԻՔԵԱՆ

**Ի ՀԱՆԴԵՍ**  
 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ  
 ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արթնցի՞ր ՚ Հայ , Նոր արշալուսով ,  
 Տե՞ս ծագումն արփոյն պայծառ երեսով ,  
 Դարձած տարեւոր զուարթ շրջանէն ,

Գայ պանծալ Հայոց վեհ բաղդին վրան .  
 ՊՃՆԵԼ զՃակատ Սահմանադրութեան ,  
 Ի փառս սիրատենջ Հայ ոգւցին վաեմ .  
 ԿԵցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
 ԿԵցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :  
 Ե՛կ Արեւելեան խրախճանաց Քնար ,  
 Բաղժիէ կնտնտոցդ ՚ի թել սիրահար .  
 Ճշմարիտ Հայուն շրթանց հետ երգել ,  
 Օրս մեծ տարեդարձ օրէնսդրութեան :  
 Համնի՛ արձագանքդ Հարցըդ գերեզման ,  
 Ազգային ազատ Սահմանադրութեան .  
 ԿԵցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
 ԿԵցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :  
 Ո՞ր Հայ մոռնալով յիշատակդ արդար ,  
 Կրնայ ուրանուլ պարգեւներդ հազար .  
 Դու լոկ միսիթար Հայ սրտից տխուր ,  
 Դու ազատութեան սկիզբն և պաշտպան .  
 Իրաւանց ծորան , Սիրոյ կերպարան ,  
 Օրէնք Ազգութեան Սահման երկնատուր .  
 ԿԵցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
 ԿԵցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Բնութեան ամենէն գեղեցիկ ամիս ,  
 Ծնաւ քեզ անձկով ծաղկապսակ Մայիս .  
 Օրորոցի մէջ ամբողջ մէկ տարի ,

Լացի՛ր կղկղալով դառն հողմոց բերան .

Բայց գգուելով ձեռք Ազգասիրական ,

Հասուցին փառաց աւուրս տօնելի .

Կեցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,

Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Արդ ՚ի բաց մեզմէ սեւ թշնամութիւն ,  
Մերձենամք ՚ի պերճ Սահմանադրութիւն .

Տալ սիրոյ համբոյր Ճակտին Հայկազնեան ,  
Եւ ՚ի փառս Ազգիս , Հայրենեաց միակ .

Ուխտել միշտ մնալ ազատ թեւին տակ ,  
Մաղթել կալ հաստատ մինչ աւուրց վախճան .

Կեցցէ՛ Միութեան Սիրոյ կենսատուն ,  
Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն :

Օ՞ն հապա եղբարք Սահմանադրական ,  
Պարենք թեւ ՚ի թեւ մէկ սիրտ մէկ բերան .

Եւ դու զարկ սիրոյ թեւերդ ՚ քնար .  
Որ երբեմն տիսուր հեծէիր ցաւօք .

Օ՞ն ազատութիւն . ցնծութեան փառօք ,  
Երգէ՛ քաղցրանուագ մեզ հետ ծափահար .

Կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւն ,  
Իշնորհս օՍՄԱՆԵԱՆ պետութեան արթուն :

Ն. ՌԵԶԳՈՒՐԵԱՆ

## ԱԻԵՏԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա.Ի.

### ՀԱՅ ՏՂԱՅ

Ահա աղաւնին ,  
Նոյեան տապանին :

Թուած Մասեաց մառախապատ երկինքէն ,

Հրաւէր կարդայ աղատութեան Հայրենեաց .

Ասդիս անդին թափառական Հայերուն ,

Զայն աւետեաց Հայաստանի բերանէն .

Ողջն կուտայ Հայոց , ողջն նոր փառաց ,

Հերիք կըսէ այսչափ հարիւր տարուան քուն :

Օն աչք ,

Մեր Հայրենեաց հրաւիրակին .

Ականջ ,

Զի պատգամէ այս երկնային :

Արթնութիւն արդ սլանդուխտ Հայեր ,

Հասաւ կանցնի Հայոց օրեր .

Առէք ողջնս ազատութեան ,

Ողջն սիրոյ եղբայրութեան .

Վերջ վիճակի գերութեան ձեր ,

Ցերկնից Հայոց այս է պատուէր .

Դարերէ ՚ի վեր արիւն արցունքով ,

Թուաւ Հայրենեաց քաղցր աւերակներ .

Թռչող հրեշտակն ալ ահա՝ ինձ ընկեր ,  
Վկայ է խօսքիս խնդում երեսով :

(ՀՐԵՇՏԱԿՆ)

Այս՝ այս՝ Հայ տղաք .  
Վկայ ես ձեր հրեշտակ .  
Հայաստանի նոր գարնան ,  
Մաղկունքն ահա ձեզ կուտամ :

Օ՞ն արդ քորք և եղբարք որդիք դիւցազանց ,  
Զետ թռչներ գարնան գեղ դայլայլիկով .  
Սուրանք փոյթ՝ դիրկ հայրենի փառաց :

Հոս թռղունք հոս ,  
Վատթար սրտեր .  
Հետ առնունք սէր ,  
Հոս թռղունք հոս .  
Ատելութիւն ,  
Ոսոխն Հայուն .  
Հոս թռղունք հոս :

Ազգերնիս մէկ , Եղունիս մէկ , հաւատքնիս մէկ ,  
Հայրենիք մէկ , հայրերնիս մէկ , փառքերնիս  
մէկ .

Ինչո՞ւ ըլլայ որտերնիս մէկ :  
Եւ արդ հոս ՚ի սեւ կրից դինաթափ ,  
Ամենքս ալ հաւատար Հայ եղբայր .

Մեր զէնքը խաչն ՚ի կուրծս վառ ՚ի վառ ,  
Օն զհետ հրեշտակիս ծափ ՚ի ծափ :

Զարնենք տաւիլ ոսկի քնար ,  
Սրբենք դառն ցաւի աշեր .  
Աշխոյժ ՚ի սիրտ , ձայն վար ու վեր ,  
Ապրի Հայոց Աւետարեր .  
Ուրախութիւն այս Հայոց դար :

Օն պար խաղ ,  
Մէն մ՚ի ձախ .  
Մէն մ՚ի յաջ ,  
Ետ յառաջ ,  
Ուրախութիւն այս Հայոց դար :

ՆԵՐԸՆ ՄԷՋՊՈՒՐԵԱՆ

ՃՅԱ

Ի ՇԱԽԱՐՇԱԿԱՆ ԴԱՇՑԻՆ

Վ Ր Ե Ժ Փ

Բամբ . . . որոտան բարձուստ բոմբիւնք ,  
յԱյրարատեան դաշտն ՚ի վայր .  
Արի արանց արիւն յեռանդն առատանան ՚ի  
հրազայր ,  
Հրաւեըք հայրենեաց հռչակին ՚նդհանուր ,  
Հոգեք Հայկազանց բորբոքին ՚ի հուր .

Որք Երկնաւորին պատկին էք կարօտ,  
Որք Երկնաւորին փառաց Երկնայորդ։  
Հապ՝ օ՞ն արի արանց մանկունք,  
Հայրենավրեժքդ Հայկազունք .  
Հապ՝ օ՞ն ՚ի զէն գունդագունդ,  
Ցեռեալ ՚ի պար թունդ ՚ի թունդ .  
՚ի զէն ՚ի վրէժ, օ՞ն անդր յառաջ,  
՚ի զէն ՚ի վրէժ, մի՛ ձախ մի՛ յաջ։  
Օ՞ն անդր յառաջ,  
Մի՛ ձախ մի՛ յաջ,  
Օ՞ն անդր յառաջ .

Յառաջ, յառաջ .  
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին  
բարբառք մարտագոր .  
Դառնագոռոչ անդրածայնէ Պարսիկ կերկերն  
՚ի շեփոր։

Շարժեն հրեշտակք թեւս լուսադողդոջս,  
Ճիւաղք ՚ի ճիչ սուր կայտուեն ՚ի դըժոխս .  
Շոինդն շանթառաք զեթերօք փարի,  
Սարսափեն սանդարք ՚ի խոլ խաւարի։  
Հապ՝ օ՞ն արի արանց մանկունք և այլն։

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս  
դոդ ձալ ձալ,

Ի Ճակատուց ՚ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց յու-  
րաստ կալ .

Հեծեալ հրանըժոյդ վեհին Վահանայ,  
Վըրէժ կանչէ արեան կարմիր Վարդանայ .  
Փռնչեալ բոցաշունչ գափր ՚ի գարշապար,  
Ռազմամուտ վարդի յանժոյժ երիվար։

Հապ՝ օ՞ն արի արանց մանկունք և այլն։  
Ի գուպարել մարտայարդար գարշապարաց  
Արամայ,

Գոռան Կորդրիք, Մասիք սարսեն, Հանչեն  
սահանք Երասխայ .

Ի գոռհ ՚ի գոռհ տալ բիւրուցն ոտնատրոփ,  
Տատանին դաշտակք, յառնէ շոինդն ապշոպ .  
Կոռուփ առ կոռուփ կոփեն կմբըրեայք, տէգ  
առ տէգ ,

Դզորդ առնուն տարերք կորովեացն ՚ի վէգ ,  
Հապ՝ օ՞ն արի արանց մանկունք և այլն։

## Ի ՀԱՆԴԻՍԻ

ԵՐՐՈՐԹ ՑԱՐԵԹԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ ,  
Զայն ողջունելու ելէ՛ք Հայ զաւակք .

Անցան սեւ օրեր , օրեր մահահոտ ,  
Հայոց նոր բաղդի ծագի առաւօտ .  
Սահմանադրութիւնն ուղղեցոյ կենաց ,  
Սիրոյ դրօշակով եկաւ զարդարուած :

Որ փայլի Արեւ սուրբ Հայաստանի ,  
Որ Հայ Աղդութիւնն փառ քերածնի .  
Կեցցեն անձնուէր որդիք Հայկազունք ,  
Կեցցէ Աղդային Սահմանադրութիւն :

Կաթիլ մ'արտասուք հեղունք աննախանձ .  
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց .  
Կաթիլ մի քրտինք հեղունք անինայ ,  
Ի նպաստ Աղդիս յուսոյն ապագայ .  
Եւ ոչ իսկ խնայենք բոլոր մեր ձգունք ,  
Կրօնի Հայրենեաց և Աղդի սիրոյն :  
Որ փայլի Արեւ . . . և այլն :

Հայեր , միանանք , կ'ընենք առաթուր ,  
Ամեն ուժ և նենդ , պարիսապներ ամուր .  
Երկինք զայս մեր սուրբ կ'օրհնէ Միտրիւն ,  
Ի Աստուած Գրիգորի զօրավիր արթուն .  
Հապա իրախուսինք , կուրծք տանք անվեհեր ,  
Ընկճենք կործանենք , ամեն արդելքներ :  
Որ փայլի Արեւ . . . և այլն :

Ունիմք սիրոտ արի , ոդի եռանդուն ,  
Ժառանգ մնացած բազուկ աննըկուն .  
Դարերու յաղթող Աղդի զաւակ ենք ,  
Ամեն նախատինք օն փութով ջնջենք .  
Անմահ Հայութեան կանգնենք յաղթանակ .  
Հայոց Մօր Ճակտին հիւսենք պերճ պսակ :  
Որ փայլի Արեւ . . . և այլն :

Ա. Պ. Պ. ՓԱՓԱԶԱԱՆ

### ԱՐՏԱԿԱԶՄ

ի Վ. Ի Հ Ն Մ Ա Ս Ե Ա Յ

Գարունն էր կենացս դեռ ,  
Երկինք ինձ նայէր հաշտ .  
Ինձի համար ձորն լեռ ,  
Կ'ծաղկէր և դալար դաշտ :

Թագն էր զարդն իմ վարսիս ,  
Քաջաց մէջ էի պերճ .  
Շուտ զիս զրկեց Մասիս ,  
Փառքիս վաղ հասաւ վերջ . . . :

Հեծայ ՚ի սեաւ իմ վեհ ,  
Անցայ յուրջ մարդերէ .  
Որսալ ՚ի գինայ դեհ ,  
Ցիռ և պարարտ երէ :

Ողջյն լերինք ու ձոր ,  
Ողջյն տուին ծառեր .  
Անշունչ նիւթերն բոլոր ,  
Լեզու էին առեր :

Բարեւ , յանկարծ կասեաց ,  
Ոտք իմ աշխոյժ սեւոյս .  
Կալան զիս քաջը Մասեաց ,  
Տարան ՚ի վիճն անլոյս :

Փախաւ , թռաւ արեւս ,  
Ողբայ զիս , Սաթինիկ .  
Առ իմ վերջին բարեւս ,  
Ազնիւ իմ Հայրենիւ :

Ինչու բոլոր մարդիկ ,  
Ինձի դէմ են ելեր .  
Ինչու այնպէս սաստիկ ,  
Կ'գուան մըհեր , սալեր :

Անզերծ եմ իմ կապէս ,  
Ի զուր Ազգս կ'խորհի .  
Կրնայ հետ մ'ինձի պէս ,  
Վախճան տալ աշխարհի :

Անէծք կը կապեն զիս ,  
Շընիկս , զուր կը մաշես .

Ակռագ , զանուր վզիս ,  
Կապեց հայր Արտաշէս :

Խիստ , խիստ են հօր մ'անէծք ,  
Դառն են և ահագին .  
Անով կըլլան ու մէծք ,  
Ոչ ինչ փառք ձեր թագին :



## ՄԱՆՈՒԿ

ԵՒ

## ԱՐՏՈՒԻՏԻԿ

1. Դարանամուտ կամ վազուց ես լըռիկ ,  
Եւ ոչ դիւրով քեզ բերի ձեռք հիմիկ .  
Պէտք է երգես իմ սիրուն Արտուտիկ ,  
Որ դու տաս սըրտիս զուարթ քու դայլայլիկ .  
Մի՛ գողար ՚ի տես վանդակիս անել ,  
Ծաղկօք եմ պատած ես անոր թելեր .  
Դու քեզ մարգերու կրնաս մէջ կարծել ,  
Երգէ ինձի հետ թըռչնիկ սիրաւէր :

2. Երբ դայ նոր դարուն բընութեան նոր ոյժ ,  
Եւ մեզի պայծառ օրերու տայ յոյս .  
Գողուրիկ մարմանդին մէջէն ձայնդ անոյշ ,

Զամբեհծ .քու սիրայդ կը տօնէ զիմնձցու :  
 Ա. Ա. իմ քովս այժմիկ ընդէ՞ր կաս լըռած ,  
 Կա՞մ Մինչ ես ձայնովս եմ քեղ աղերսարկու .  
 Ա. Հ. գուցէ ես քու ձայնիկ չեմ լըսած ,  
 Թող ես փորձ փորձեմ, օ՞ն երգէ՛ և գու .  
 Կա՞մ Ո՞հ . գուցէ ես քու անուն չեմ ուսած ,  
 Թող ես փորձ փորձեմ, օ՞ն երգէ՛ և գու :

3. Վախ , այսքան աղերս չը գըտին շնորհ ,  
 Եւ դու կաս մնաս միշտ խուլ ու պապանձ .  
 Արդ թրոքի՞ր գնա՞ հաւիկդ ապաշնորհ ,  
 Չուզեմ քեզ ընել գերի իմ կամաց :  
 Բայց խիստ հովանեաց տակ մէջ մ՞որ նետուիս ,  
 Առ երգերդ խակոյն ու հեշտ զուարթեքդ .  
 Զի անտառներու տեսնեմ պէտք ունիս ,  
 Որ զազատութիւն երգես անդորրիկ :

Ն. ԱՊԻՄԵԱՆ

~~~

Խ Բ Ա Խ Ա Յ Ս

Ի Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Դու նոր Հայրենիք , դեռ նոր ազգութիւն ,
 Դարուս շնորհիւ պարտք և իրաւունք .
 Սահման և կշիռ թոթովիւ որ գիտցանք ,
 Ավ Հայաստանի պանդուխտ զաւակունք :

Կրնանք արդ դպհել կրնանք ամեն բան ,
 Անձնական կրից մատնել անխընայ .

Եւ Օտարին շահն Ազգին վնասող ,
 Ո՞վ կրնայ խնդրել , որ այն եղեռն Հայ :

Զգոյշ , ով Հայեր , զգոյշ կենանք միշտ ,
 Քանզի ազգադաւ սլանան նետեր .
 Մեր խոցուած սրուերն կրկին խոցելու ,
 Պահենք զայն ամուր սիրոց վահանաւ :

Միութիւնն ըլլայ զըրահ անվտանգ ,
 Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ .
 Այլոց միջամուտ ներենք ոչ երբէք ,
 Ազատ ու հաւսար , ամենքս ալ եղբայր :

Նեռատես , զգոյշ և գործն անդուլ ,
 Ազգային կամաց հըպատակ անխօս .
 Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը ,
 Այսպէս պատրաստուի պատանեկութիւնն :

Ու երիտասարդութիւնն ըլլայ աննըկուն .
 Անտէր ախոյեան Ազգին իրաւանց .
 Ու թող ծերութիւնն հսկէ լրջամիտ ,
 Հայոց բաղդն ու Արեւ յուսով ողջունել :

Ա. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

~~~~~

ԳԱՏՐԻԼ

Ա. ԶԵՒ

ԶԵՌՔ ԶԵՌՔԻ

Դուք մէջէն ես քովլէն ,  
Անցնինք դիմաց փոխենք տեղ .  
Նցն ձեւով տեղերնիս ,  
Դառնանք միատեղ :

Աւեծածան մէկ մ'առաջ ,  
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք .  
Ապա տանք աջ ՚ի յաջ ,  
Կլոր մը ձեմենք :

Ո՞ն ձեռք ձեռքի բարեկամք ,  
Ընկեր թեւ տուր շուրջ դառնանք .  
Արդ կրկն մեր նախնի ,  
Ընկերին երթանք :

Հապա ոստաստենք դիրկ գրկի ,  
Երթանք անդին պարելով .  
Ետ դառնանք նցն ոտքով ,  
Կայնինք քովլէ քովլ :

Մէկ մը առաջ երկու բնիս ,  
Մէկ մ'ալ դառնանք տեղերնիս .  
Իսկ այս անգամ դուն ասդին ,  
Ես դիմաց անցնիմ :

Մէկ մը աջ երթանք հիմակ ,  
Մէկ մ'ալ ետքը դէպ ՚ի ձախ .  
Ասկէ մեր տեղն ընթանանք ,  
Զուարթ կայթեմք և ուրախ :

Աւեծածան մէկ մ'առաջ ,  
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք .  
Հիմայ ալ տանք աջ ՚ի յաջ ,  
Կլոր մը ձեմենք :

Զորսս ալ արդ առաջ խաղանք ,  
Կրկն տեղերնիս դառնանք .  
Յետոյ փոխն ՚ի փոխ անցնինք ,  
Դիմացը կայնինք :

Գ. ԶԵՒ

Քալենք հիմայ դէմ դէմի ,  
Հապա բռնենք թեւ թեւի .  
Յետոյ մէկ մ'ասդին դառնանք ,  
Մէկ մըն ալ անդին :

Մէկ մը յառաջ դէմ դէմի ,  
Պարենք երկուքս ու դառնանք .  
Մէկ մ'ալ պարենք նոյն ձեւով ,  
Երթանք ընկերնուս բով :

Կապենք շղթայ չորսերնիս ,  
Մէկ հոս մէկ հոն ծածանինք .  
Ապա ամենայն ընկեր ,  
Դիմացի կողմն անցնինք :

Չորսս ալ արդ առաջ խաղանք ,  
Կրկին տեղերնիս դառնանք .  
Յետոյ փոխն ՚ի փոխ անցնինք ,  
Դիմացը կայնինք :

Դ. ԶԵՒ

Դէպ ՚ի առաջ քով քովի ,  
Հիմակ երթանք դառնանք մերովի .  
Յետոյ մէկ մ'ալ հոն անցնինք ,  
Դուն հոն ես հոս զատուինք :

Արդ ես մինակ վաղեմ ձեմեմ ,  
Մէկ ոսք մը հոս մէկ հոն նետեմ .  
Կայթեմ ոստնում զերթ մ'ուրախ ,  
ՌԱՄՍ հանդէս ուրախ :

Արդ նոյն բայլով յիս եկեք ,  
Երեքդ մէջ մ'ետեւ գացեք .  
Կրկին ամենդ դէպ ինձի ,  
Յետոյ նոյնպէս դէպ ետի :

Չորսս կէս կլոր արդ դառնանք ,  
Յետոյ քիչ մը հեռանանք .  
Ետքն ալ ասկէ հոն անցնինք ,  
Մեր բուն տեղիկը կայնինք :

Ե. ԶԵՒ

Հիմակ ալ առաջ քով քովի ,  
Երթանք դառնանք մերովի .  
Յետոյ մէկ մ'ալ հոն անցնինք ,  
Հոն հոս քաժնուինք :

Ալեծածան մէկ մ'առաջ ,  
Մէկ մ'ալ ետեւ քայլ փոխենք .  
Հիմայ ալ տանք աջ ՚ի յաջ ,  
Կլոր մը ձեմենք :

Ընկերք իրար քալեցեք ,  
Հոս եկէք մէկ մը դարձէք .  
Մէնք ալ ընկեր ընդ ընկեր ,  
Յետոյ օտաքն երթայ ետ :

Չորսս ալ արդ առաջ խաղանք ,  
Կրկին տեղերնիս դառնանք .  
Յետոյ փոխն ՚ի փոխ անցնինք ,  
Դիմոցը կայնինք :

2. ԶԵՒ

Անցնինք երթանք շխտակ առաջ ամենքնիս ,  
Դառնանք դիմենք այր և ընկեր տեղերնիս .  
Թեւ թեւ դէմ դէմ երկանաքար դարձնենք ,  
Փոխենք ձեռքեր այս կողմ ալ շրջենք :  
Ձեռք ձեռք տանք ընկեր թեւ տուր շուրջ  
Հապա ոստոստենք գիրկ դրկի հոն անցնինք ,  
Անկէ դարձեալ մեր ընկերին քովն երթանք ,  
Յետոյ նոյն ոորով պարելով ետ քաշուինք :

4. ԶԱԳՐԱՄԱՆԱԿ

Ա. Բ. Ս. Ս. Ո. Ւ. Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես դալար ծառ մի տնկեալ ՚ի Հայկայ ;  
Պաղաբերութեամբ ինձ նման չկայ .  
Զէմ ես սնափառ՝ իբրեւ սարդենի ,  
Հողմն ատելութեան փշեաց՝ ես անկայ :

Յորդորակ

Ուր է սէր , ուր է սէր զի նորոգեցայց :

Փաղցրահամ պտուղ իմ էր անքանակ ,  
Զաշխարհ լիացցաց երկար ժամանակ .  
Ոստք իմ և արմատք ՚ի բնէ խղեցան ,  
Դառն ատելութեամբ՝ անսուր՝ անդանակ :

Տերեւք իմ կանաչք վաղթառամեցան ,  
Երակք անդամցու ՚ի ջրոյ քամեցան :  
Կեղեւն իմ քննքուշ որդնակեր եղեւ ,  
Գուցէ այդեպանք այսպէս կամեցան :

Ի գալ ամարան ազգ իւրաքանչիւր ,  
Ցնծալով փութաքաղել զայդին իւր .  
Իսկ ազգն Հայկայ ձեռն ՚ի ծնօսի ,  
Աւաղէ , հոսէ արտասուեաց ալբիւր :

Ակյեաղն ազգասէր յազգէն բամբասէր ,  
Գիշեր և ցորեկ ողբալով ասէր .  
Հայք զիա՞րդ կարեն ճաշակել զպտուղ ,  
Զի չունին հաստատ հաւատ , յոյս և սէր ,

ՍԵՅԱԿ

## ԿԻԼԻԿԻԱ.

Երբոր բացուին դռներն յուսոյ,  
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.  
Զքնաղ երկինս մերս Արմենիոյ,  
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր :  
Երբոր ծիծառն ՚ի բոյն դառնայ,  
Երբոր ծառերն հագնին տերեւ .  
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Տեսի դաշտերն Ոնուրիոյ,  
Լեռն Լիբանան և իւր մայրեր .  
Տեսի զերկինս իդալիոյ,  
Վենետիկ և իւր Կոնսոլներ :  
Կղզի նման չեթ մեր Կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ .  
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,  
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Հասակ մը կոյ մեր կենաց մէջ ,  
Ուր ամենայն իղձ կ'աւարտի .  
Հասակ մը ուր հէգին ՚ի տենչ ,  
Յիշատակաց իւր կարօտի :  
Յորժամ քնարս իմ ցըտանայ ,

Սիրյն տալով վերջին բարեւ .  
Երժամ ննջել յիմ Կիլիկիա ,  
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

## ԵՐԳ

Հինգերը ըրի ՑԱՐԵԹԱՐՁԻ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին ,  
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին .  
Իջաւ յԱրարատ՝ հասաւ ՚ի Տիգրիս ,  
Դարձաւ դադրեցաւ կեցաւ ՚ի Մասիս :

Եւ ձայն տուաւ անկէ Հայոց ,  
Զայն մի թորդոմայ որդւոց :  
Որ մերկանան զցուրտ ձմռան վարագոյր :

Ժամ է արդ Հայեր ,  
Ընկեր առ ընկեր .  
Տամբ սիրոյ համբոյր :  
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան ,  
Սահմանադրութեան :

Եւ շիջելափառ Հայրենեաց խորան ,  
Բացաւ տիսրագին զիւր քող ճգնութեան .  
Հասին հոն Սուսայք , և Յուսոյ հրեշտակք ,  
Ախորթ երդեցին խնդութեան նուագ :

Եւ սիրտ տոռին անկէ Հայոց ,  
Սիրտ մի Թորդոմայ որդւոց :  
Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր :

Փամ է արդ Հայեր ,  
Ընկեր առ ընկեր .  
Տամբ Սիրոյ համբոյր :  
Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան ,  
Սահմանադրութեան :

Ելաւ Հայաստան նոր դարնան 'ի տես ,  
Դարձայ 'ի շքեղ իւր փառաց հանդէս .  
Դարձիր բաղդակոծ Քնարդ իմ հոդւոյն ,  
Դարձէք աւուրք կենազ , դարձէք յայդ յուսոյն :

Եւ լոյս տուէք անկէ Հայոց ,  
Լոյս մի Թորդոմայ որդւոց :  
Որ մերկանան մութ գիշերին վարագոյր :

Փամ է արդ Հայեր ,  
Ընկեր առ ընկեր .  
Տամբ Սիրոյ համբոյր :  
Համբոյր մեր ըլլայ կնկը միութեան ,  
Սահմանադրութեան :

Ս. 4. Թիւիթեան

## ԵՐԳ

### ՄԻՒԻԹԵԱՆ

Եղբայր , մինչեւ երբ այսպէս լրւռ տրխուր ,  
Զերթ թշուառ պանդուխտ հեծեծես վիշտ ,  
Վիշտ .  
Սէրն ու գոնեթ Ազգիր խանձէ սիրտըդ միշտ ,  
Գիտեմ . . . արդ ցրուէ ցաւդ . զուարթ օն  
ձեռքդ ինձ տուր :  
Ա՛ռ քեզ նոր ողջոյն Սահմանադրութիւն ,  
Զոր շնորհեց Հայուն թուական վահնուն .  
Սիրենք Ազգութեան կեանքն ու միութիւն ,  
Սիրենք , որ ապրի Սահմանադրութիւն :  
Այն անմահ օրն երբ մեր սրտերուն մէջ ,  
Սահմանադրութեան ոդին արծարծեց .  
Եւ մինչեւ գաշտերն անոր փառքն երգեց ,

Ծեր, Երիտասարդ, մանկութին յել և էջ:  
Այլ ո՞ր չազգի ձեռք դիմէ զայն ջնջել,  
Հայուն աւերմանն անդութ, անտարբեր:  
Սիրենք Ազգութեան . . .

Հերիք չէ լուսոյ դէմ ապրիլ զերթ կոյր,  
Անտես Վարչութեան Ազգի մը թշուառ.  
Համազգի անուամբ պատակտել զիրար .  
Իրաւանց ձայնին դէմ մընալ միշտ խուլ.  
Տեսնել սա դարուն փոյթն, ընթացքըն յա  
Դեռ բիրտ կամաց հետ յամել անամաչ,  
Սիրենք Ազգութեան . . .

Մոռնանք երեկուան ոխն ատելութիւն,  
Մերժելով վըրէմն պաշտենք Ազգի Սէր .  
Մարին Հայ սրտէն սեւ կըրից բոցեր,  
Գիրկընդխառն, համբոյր, և ուխտ հաշտու:  
Ի փառս մեր յուսոյն Սահմանադրութեան,  
Որ պաշտպանէ մեր հաւատքն, Ազգութիւն.  
Սիրենք Ազգութեան . . .

Հերիք չէ, որ ծաղր ըլլանք օտարին,  
Ուշ չէ, որ կողմնք Ազգութեան պարտքեր.

Երկինք ձայն կուտայ, մենք դեռ չենք լսեր,  
Այլ վըրէմ ձայնենք եղօր ականջին .  
Մէկ արեան կաթլիլ, ծնունդ մէկ հայրենեաց,  
Չուզենք հնազանդիլ Ազգիս Օրինաց :

Սիրենք Ազգութեան . . .

Վ կայեն մեզի մօտ օրերն անցեալ,  
Թէ քանի անդամ ազգի բաժանում.  
Հայ երակներու մէջ լեցուց դառն արիւն,  
Փորձուածը կրկին փորձողն է յիմար .  
Օ՞ն, սրբենք այն խորթ աւուրց արատներ,  
Որ մեր ազգութեան տունն ու տեղըն աւրեր :

Սիրենք ազգութեան . . .

Աստուած Հայութիւն աշխարհին վըրան,  
Որոշ ժողովուրդ մ' ազգի անունով.  
Ընտրեց, որ կ'ապրէր ազատ օրէնքով,  
Իրեն ազգութեանն յարմար և պատկան .  
Եւ զոր բաղդ գողցուց դըժիւեմ ձեռքերուն,  
Պէտք չէ արդ անոր տալ կենդանութիւն :

Սիրենք ազգութեան . . .

Միլիոնաւոր Հայ ձեռքն 'ի ծնօտ մինչ ցարդ,  
Կապասուէր միակ Սահմանադրութեան .  
Ոզոյն տալ դարձեալ և երբորդ անդամ,

Սիրելով անոր սկզբունքն հաստատ .

Արդ ուրախութիւն , անցաւ փոթորիկ ,  
Որ սպառնացաւ անձրեւել սաստիկ :

Սիրենք աղգութեան . . .

Մինչեւ երկնից տակ ասլրի աղգութիւն ,  
Ճշմարիտ Հայերն օքնեն յաւիտեան .  
Հաղար ութն հարիւր վաթսուն թուական ,  
Ուր սովորեցաւ մեր աղգին Վարչութիւն .  
Օրինօք գործել և հաստատ հիման ,  
Վըրայ զետեղել Հայ պարտուց պայման :

Սիրենք աղգութեան . . .

Օ՞ն արդ , ով Հայ Կղեր , աւուրն ականջ տուր ,  
Հաւատոյ դրօշակ ձեռքդ և սուրբ Խաչն յոյս .  
Սիրոյ խոստումներ քանդակոծի կուրծս ,  
Քարողէ ժողովուրդդ որ դընայ յառաջ .  
Զեռք տուր աղգային բարեկարգութեան ,  
Գիտցիր , որ պաշտօնդ է պարտք սրբազն :

Սիրէ աղգութեան . . .

Ազնուական Հայ լսէ ժողովրդին ,  
Որ պատրաստ յարդելքեզ միշտ իբրեւ հայր .  
Եկուր աղգութեան մէջ ըլլանք եղայր ,  
Զայնակցէ , ով մէծդ , փոքրերուն ձայնին .

Հոն է քու պատիւդ , հոն քոյդ ճոխութիւն ,  
Որ պատմութեանց մէջ տան անմահութիւն :

Սիրէ՛ աղգութիւն . . .

Հայ երիտասարդք ցրուենք այն խորհուրդ ,  
Զոր մեր դաշտին մէջ սերմանեցին շուտ .  
Ապագան այնպէս բարօրենք ՚ի փոյթ ,  
Ուր չար դրացիներ չը գտնեն յագուրդ .  
Ասկից ալ յարմար օր կըլլայ Հայուն ,  
Ճանչնալ իրաւունք , Օրէնք , Աղգութիւն :

Սիրենք աղգութեան . . .

Մարդկութեան պարտքը հոս կուզէ օրհնել ,  
Վեչնաֆան ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻՎԼ ԱԶԻԶ ԽԱՆ  
Աբքայն Օսմանեան հըզօր Տէրութեան ,  
Որ է փառք Աղդին և ինքնազօր Տէր .  
Գոլինք , որ շնորհեց Սահմանադրութիւն ,  
Իր հաւատարիմ հպատակ Հայուն :

Սիրենք աղգութեան . . .

ՆԵՐՄԱՆ ՄԷՋՊՈՒՐԱՆ

Էյ սերվէրի կերտուն մէդամ ,  
Վէյ տավիշը տարա զիւլամ .  
Սայէի ատլինստէ ճիւմիլ ,  
Միւլք ու միւլք պուլտի նիզամ :

Ապտիւլ-Աղիղ Շահի Ճիշան ,  
Օլսուն Ճիշանտէ քեամիրան .  
Եվքէթիլէ հէմպէր տէվամ,  
Էյլէ եարապպը միւսթէան :

Շան ու չէլքէթիլէ հէր ան ,  
Թապ'ը Շահի օլա ֆէրհան .  
Պէջլէ ըխաս իլէ հէր կիւն ,  
Օլուր էվլատը պէնտէկեան :

Ապտիւլ-Աղիղ . . .

Մէքտէմինլէ սէնին Շահա ,  
Ճիշանի իյլէտին իհեա .  
Իշթէ միլէթէտէ եէկղէպան ,  
Իթմէքտէյիլ շիւքրին իփա :

Ապտիւլ-Աղիղ . . .

Գըլուպ օլ տավէրի սէյեիտ ,  
Նիզամը միլէթի թէտիտ .  
Հէման օլ Շահը զիշանըն ,  
Օլա հէր բուզի եէվմի իյտ :

Ապտիւլ-Աղիղ . . .

Օ. թ. ՇԱՀԱՆԱՆ



## ԵՐԳ

Հինգեթրորի ծԱրեդԱրջի

### ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Երգ սիրոյ , Երգ Հայրենի , քեզ կուղուի Հայ-  
աստան ,  
Հոն , ուր Հայք ամեն դիէ մի հաւդուէր կը<sup>սայտան</sup> .  
Այն Երկնից դատավըճիու դառն անէծք հընդ-  
դարեան .

Դադրեցաւ ըսե՞նք արդեօք՝ թէ մեր մեղաց  
չափ լըցան :

Զայն տուր ըսէ Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան .  
Մարդկութեան կրկնն օրբան ,  
Վկայդ Երկնից հաշտութեան :

Ծեր , տղայ , Երիտասարդ , հարուստ , աղ-  
քատ , անխտիր ,  
Օրիորդ մատաղերամ . ամենքն անկեղծ ան-  
պատիր .

Ամենուն մի է արիւն , ամենքն ունին մէկ Եր-  
կիր ,  
Երասխայ ձորն հաւդուած , կարծես թէ չեն  
տարագիր :

Զայն տուր ըսէ . . .

Բայց՝ սիրով ըսենք արդեօք . թէ աշնանն  
Սէկ մասկէ մէկ մալ անկէ փչող կոյտ մ'է  
Ո՛չ . . . չէ՛ , չէ՛ , Հայրենի սէրն է շարժառիթ  
Որ եղբայր եղբօր դիմած սուրբ պրտով կու-  
գան՝ ի տես :

Միսիթարուէ Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան .  
Մարդկութեան կրկին օրբան ,  
Վկայդ երկնից հաշտութեան :

Ասինի վեհք , դըլուխ բարձէք ձեր փոշելից  
Ու տեսէք Հայերն ինչպէս զիրար եղբայր  
Դիւցազուն իրենց նախնեաց յիշատակաւ սիրա  
Լրցեալ , ՚ի Աէր անբաժին և միութիւն սերտ  
կուխտեն :

Հապա հըրձուէ Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան .  
Մարդկութեան կրկին օրբան ,  
Վկայդ երկնից հաշտութեան :

Բարձրացան յերկինս ՚ի վեր ձայն կռկռանաց  
Հայորդւոյն ,  
Բարձունքէն դիտեց տեսաւ աննիբի՛ աչաց  
Տէրն արթուն .  
Ժպտեցան դէպ ՚ի երկիրն որ նախ օրբանն էր  
մարդուն ,  
Այցելուն անմիջապէս խրկեց Աէրն իր գր-  
ւարթուն :

Խոյտա խնդա Հայաստան ,  
Նախնեաց մեր սուրբ օթեւան .  
Մարդկութեան կրկին օրբան ,  
Վկայդ երկնից հաշտութեան :

Ա. ՏէՎԱԶԻՐՃԵԱՆ

Զերկնաբարձ դիմով սառնապատ լերին ,  
Ուր դադար առնու նախնակերտ տապան .  
Էր զի՞ սաւառներ հայագրոշ արծուին ,  
Զգել շուք ստուար ցձորայ կապան :

Այլ ուր արփին լուսատու , ուր պողպատին  
ֆայլատու ,  
Յոր թագ կապեր Այրարատ , ՚ի թագադիր  
Բագարատ :

Ո՞վ Թորդոմաձետ աղարծի մանկունք ,  
Հարկ 'ի վերայ կայ փոխելոյ ընդ փոյթ .  
Զգօն լուրջ հոգի սուր յակն յուշ և յունկն ,  
Առ 'ի ժամանել 'ի կատար անքոյթ :

Զի լեառն ահա արիածին  
Որոյ բարձունք փայլ հատին  
Յորդեալ զիւրն բիւր վտակ  
Նոր աւետէ եղանակ :

Ի գողորիկ ծայր մատին  
Թմբկահար պանծասցին  
Ընդ նմին անդադար  
Քերելով զկիթառ :

Բազկացի 'ի շազկապ  
Բերկրեսցուք ծափ 'ի ծափ  
Զբաժակ թաթազուն  
Քամելով մեք հողոյն :

Համարիւն կեցցեն Հայք  
Միշտ մասեաց գոռող կայք  
Եւ 'ի նոր Բագարատ  
Ցնծասցէ Այրարատ :

## ՆԱԽԵՐԳ

Ցերկրարի օրջան

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՒՆԻ

ԺԱՄԱՆԱԿՆ

Եր գու այսպէս . ո սեաւ Գիշեր ,  
Զուարթ բնութեանն աղնիւ պատկեր .  
Տըխրանըկար գունով ներկես ,  
Սըգատեսիլդ ի՞նչ այս հանդէս :

Ո՞վ անարեւ տըխուր Ոգի ,  
Դու էիր ինձ միակ համատի .  
Երբ բեղմնաւոր բնութեան արդանդ ,  
Նըգեղ ծննդովք չէր արդաւանդ :

Թէ իմ շրջանս մերթ տեղի տայ՝  
Որ քու խաւարդ երկար մնայ .  
Ունիմ անկէ և ես բաժին՝  
Իմ անցելոյս յիշատակին :

Երբ ժամն հասաւ՝ եկան 'ի տես .  
Նին անցքերուս ինչ ինչ հանդէս .  
Եր սեւորակ քոյին ըստուեր ,  
Արդ վառվուուն քողէ աչեր :

Ի՞նչ այս գողդոջուն վըսեմական ձայն ,  
Ի՞նչ քաղցրիկ մըմունջ . . . և օտար չէ այն .  
Վեհ ալեւորն է , պատկառելին ծեր ,  
Որ հոն միայնակ կ'երդէ իւր գիշեր :

Յոյսդ գեղաժըլիտ , դիմենք անոր արդ ,  
Դու որ պՃնեցիր մեզ երբեմն ՚ի վարդ .  
Չայն տուր այժմաղէ . խրախցս կարդանոր ,  
Զի հասաւ ահա այն երջանիկն օր :

ՅՈՅՍՆ

Օհ՝ յառաջ , մանկունք , նոյն ինքն է՝ աեսէք ,  
Անհամբեր ոգւով որուն կըսպատէք .

ՏԾԷ՛Ս և դու , հինաւուրց ծերունի ,  
Մանկըտին՝ որ դիմօք սիրանիշ .  
Կարօտով քու տեսոյդ Հայրենի ,  
Գալստեանդ կը մնային ակնապիշ :

Սցն խմբիս պարտաւոր կանդնած աստ՝  
Գեղաղուարձ գամ ահա խոստմնալիր .  
Մինչ ակումբս հանդիսիդ քու պատրաստ ,  
Անցելցդ են եկած ՚ի ինդիր :

Փաջիսկ աղման , մինչ իմանցեալս յորդառատ ,  
Է փորձառու ծեր իմաստնց բեւր խըրատ .  
Մէն մի թերթեն ձակտիս կնճիռք բարդ ՚ի  
բարդ ,

Ուր խառըն զուարթ տըխուր անցքէր տեսնէ  
մարդ :

Զի խիստ օտար են մանկութեան ինձ օրեր ,  
Յաւիտենից եմ ծնունդ , և ծեր անձեր .  
Ա. Ալապատայս անվերջ՝ լը՛է իբր անփուշ վարդ ,  
Ա. յն քու շնորհիւդ է , Օրիորդ գեղազուարթ :

Ապա և դուք , Յարկիս մանկունք սիրական ,  
Որ հընացեալ անցից տաք նոր կերպարան .  
Լըսուին դարձեալ հաճոյական ծեր ձայներ ,  
Առվին լըսողք փորձառութեան միշտ դասեր :

ՅՈՅՍՆ ԵԽՍ ԶՈՒԳԱՆՈՒԱԳ

Լուսապանձ նոր հանդէս ,  
Ալ գիշերըն անտես .  
Կիսալցս արշալցս ,  
Ամպօց մէջ տայ իւր խոյս :

Ողջունիւ Արեւուն ,  
Մինչ ժպտի բնութիւն .  
Ժամէ ձեզ , մի դըլաք ,  
Առեք զայն ձեր նուագ :

ԽՄԲԵԱԿՆ

Ոքաղցր Արփի , մինչ կը բերես առաւօտ ,  
Ո՛չ նախարձակ շառաւիղօքդ անաղօտ .  
Ոսկենկար ցողան լերինք նախալցս ,  
Միմեանց համբոյր տան ցողալիր բոյսն ու լցս :

Այլքաղցրագոյն ես դու այսօր Աչք անքուն ,  
Որ ջերմ լուսովդ ակնարկելով Անցելցն՝  
Կը վերածնես յիշատակաց աճիւններ ,  
Հանդիսադիր ըլլալ կուտաս մեզ հրաւէր :

Ապաքէն մեք աշխոյդ սրտով ,  
Քեզ ընդ առաջ արշաւելով  
Զուարթ դիմոք ՚ի դլուխ նարօտ ,  
Շըքեղ տեսոյդ անձկակարօտ :

Փութամք աստէն միահաղոյն ,  
Անհըրամեշտ մեր նախողջոյն .  
Վեհ ծերունուոյդ տալ ՚ի նուէր ,  
Զի դու տուիր մեզ քաջալեր :

ԵՐԳ

Մ Ո Ն Թ Ո Ն Ի

Ընկերք յաղթութեան ժամն արդ հաս է ,  
Մեզ կ'սպասեն փառք առնունք քաջալեր .  
Արեան ծարաւի մեր հատու սուսեր ,  
Կենաց թշնամոյն թող կտրին թելեր :

Ո՛չ մեր ախոյեան թողին ՚ի տագնապ ,  
Չըլլանք ահարեկ մենք ՚ի զէն , շոապ .  
Փութամք արշաւել այր մի վեհերոտ ,  
Մին օն անդր ՚ի բաց սիրտք վատ և երկչոտ :

Իզէն ՚ի զէն , օն անդր ՚ի բաց ,  
Միրտք վատ և երկչոտ :

  
Թէ իմ ալեւոր հերքս սեւնային ,  
Ոյժս ինձ յետ դար , կտրիմ դառնայի .  
Նժոյդ ձի նստած , բեկիսս ոլորած ,  
Զեռըս թուր առած ես դաշտ կերթայի :

Ես դաշտ կերթայի դաշտ Աւարայրի ,  
Ողողած ցողած Հայոց արիւնով .

Ազգ իմ սիրական , դու աղդ Յորդոմեան ,  
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի :

Կ'ասէի Հայոց օրիորդնելին ,  
“Ծախեցէք հագի ձեր թանդ շորերը .  
Յողէք պաճուճանք , զարդ , մարդարիսներ ,  
Ժանդուաց ու դուլ են մեր թըլերը :

Տուէք բեհեղեայ մեղ ձեր շաղիկը ,  
Որ մենք փաթաթենք մեր մարմու վէրքը .  
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից ,  
Այսպէս յայտնեցէք դուք մեղ ձեր սէրը :

Թռէ ես լինէի հարուստ մեծատուն  
Սընտուկներըս լի ոսկեով արծաթով ,  
Շատերու նման ես չէի լինիլ ,  
Երբէք ազգասէր ունայն խօսքերով :

Շամզանիս գինու Աննա խաչի տեղ ,  
Կառնուի առատ գնտակ ու վառու .  
Արծակ համարձակ կերթայի հանդէպ ,  
Հայատեաց աղդին անթիւ զօրքերով :

Թռէ ես լինէի մի երկրի իշխան ,  
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման .  
Շուտաքայլ երթալ դէպ ՚ի Հայատան ,  
Խղճուկ Հայ աղդին լինէլ օդնական :

Եւրոպ՝ Ասիա արեան գետերը ,  
Կը վազցնէի հեղեղի նման .

Մինչեւ որ թագ , գահ ու ազատ կրօն ,  
Ինձնից չստանար թշուառ Հայաստան :

Բայց՝ եթէ մի օր , մի ժամ , մի ըուպէ ,  
Աստուած լինէի մեր հողագնդին .  
Ի՞նչ սուր ոլաքներ պիտի շող տայի ,  
Մեր արենարբու թշնամեաց գնդին :

Նենդ . . . . . մոլի , Պարսիկ սիսերիմ ,  
Դարեւոր սոսիս գու Յոյն կրօնամոլ .  
Գիտցիք որ՝ իմ սուր երկասյրի սրից ,  
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին :

ՏԱՐԱՐ ՊԱԹԻԳԱՑ

## ՀԱՅՐԵՆԻՔ

Թռէ իմն Հայրենեաց քնար սդաւոր ,  
Հեծէ տիսրագին՝ իմ հոգիս է այն .  
Թռէ նորա բեկրեկ թելեր վշտաւոր ,  
Խօսի ողբածայն՝ իմ սրտիկս է այն :

—Թռէ Հայ մուսային սրտառուչ նուագ ,  
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն .

Թէ Հայաստանիս սեւ բաղդին հագագ ,  
Լայ աղեկոուր՝ հեծեծանքս է այն :

—Թէ իմն Հայրենեաց կիսամեռիկ շունչ ,  
Դեւ ըսի տիսուր՝ իմ ողբերս է այն .

Թէ լոիկ մնջիկ հեծէ անշըշունջ ,  
Ո՛հ անկարեկիր իմ լալիքս է այն :

—Եւ Հայկայ փառաց յօժար ողբերդուն ,  
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն .  
Չորս հազար տարուան պարծտնաց դարուն ,  
Արձագանդ տուողն աղազակս է այն :

—Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր ,  
Ահա այս մաշած իմ կուրծքքս է այն .  
Սեւ սեւ թերթերուն էջ սրտակոտոր ,  
Արտասուօք գրաւած՝ իմ աղիքս է այն :

—Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր ,  
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն .  
Թ'աչքէ անցընես շամփրած նիզակներ ,  
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն :

—Թէ Հայկ և Արամ , Վարդան Վահաններ ,  
Ինկած տեսանես՝ իմ ուժը է այն .  
Թէ զէնք թէ զրահ թէ սուր թէ սուսեր ,  
Փշրած կոտորած՝ ոսկուներս է այն :

—Թէ արեամբ ներկեն ակունք Եղեմին ,  
Նշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն .  
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին ,  
Լեղի հն դարձեր՝ արտասուքս է այն :

—Թէ վճիտ գետերն աղբերքն արծաթի ,  
Լալիք առուակեն՝ երակներս է այն .  
Թէ Տիգրիս Գեհովն Փիսոն մռնջեն ,  
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն :

—Թէ սառնամանիք ձմռան բքաբեր ,  
Լեռներն է պատեր , իմ գագաթս է այն .  
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր ,  
Ցրտագին փչեն , իմ շնչիկս է այն :

—Թէ վտակ վտակ ցողէ զիշատակ ,  
Զայս տրոտմավաստակ , աչքերս է այն .  
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան ,  
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն :

—Թէ մթին խորշերն ու ձորեր լրին ,  
Սեւերով ծածկին , մենաստանս է այն .  
Թէ ողք կը կարդան վայրերն Եղեմին ,  
Ճնշած լերդերուս արձագանդն է այն :

—Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ ,  
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն .

Թէ կը համբուրեն կաթողին խմբիւ ,  
Ո՛չ մայրակարօտ շրթունքներս է այն :

—Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ ,  
Ընկած ապաբաղդ՝ իմ ճակատու է այն .  
Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պսակ ,  
Դրած սգաւոր գլուխիկս է այն :

—Եւ կիսակործան տաճարն Հայրենի ,  
Սեւ սուգ է պատեր՝ տաղաւարս է այն .  
Ուր շիջելավառ կանթեղ դեռ հիւծէ ,  
Նուազ առ նուաղ՝ իմ յցորս է այն :

—Ուր տիսուր նստեր մազերն են ծածկեր ,  
Իւր սեւուկ աչքեր՝ սիրականս է այն .  
Զեռքերն ՚ի ճակատ կռնակն ՚ի հողեր ,  
Յուսով կրթներ՝ Հայաստանս է այն :  
—Գերեզմանս է այն :

—Ուր երբ տեսանեմ զիմ հեգն Հայաստան ,  
Ի գահ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն .  
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական ,  
զիմ վերջին շնչցո միակ ուխտու է այն :

Ա. Հ. Ֆելիքս

## Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի

Թէպէտ ես մեծ տան նշան եմ ,  
Ամենից աղնիւ իշխան եմ ,  
Ո՛չ մեռած եմ , ոչ կենդան եմ ,  
Օգնական չունիմ , ինչ անեմ :

Ով անցաւոր , ինձի նայի՞ր ,  
Անբախտութեանս խնայի՞ր .  
Ի՞նչ կու լինէր՝ փոքըը մնայի՞ր ,  
Իմանայիր , թէ ի՞նչ բան եմ :

Թշնամիք մարդըս մեռուցին ,  
Մէջքըս ծանրութեամբ կեռուցին .  
Որդիքըս ինձնեց հեռուցին ,  
Այժմ այլոց ապաստան եմ :

Զեռումն կոտրվեց սուրըս ,  
Վնասուեցաւ առուտուրըս .  
Լեզի դարձաւ քաղցր ջուրըս ,  
Բայց ես ո՞նց չի հոդոց հանեմ :

Առաջ կէի անձամբ անձին ,  
Այժմ կարօտ այլոց գանձին .  
Աէյեադ , քեզ ասեմ առանձին ,  
Այրիացեալ Հայաստան եմ :

## ՆՈՒԻԵՐ

ԱԹ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ՈՂՋ ԼԵՐ ՔՆԱՐ

ԹԵՇ Հայկազանց ոսկի դարուն ոսկի քնարք լը-  
եւ թէ Հայուն անմիսիթար հեծել պէտք էր,  
ԱԼ Թող դադրին արցունք հերիք լսենք այս  
Զօր նոր երկինք կը զարդարեն ուրախութեան  
թելերով։

ՈՂՋ ՄԵՐ ՔԸՆԱՐ Ճայն տուր թշուառ Հայաս-  
տանի զաւակաց,  
ՈՐՈՆԳ Քաղցր է և սրբազան մեր հայրենեաց  
ՀՆՁԵ քնար և թող խայտան ոսկերք Հայոց  
Դիւցաղակ։  
Լուր տար մեզմէ թէ հոս հոս ըսէ ողջ են դեռ  
Հայք։

Հայկայ պանդուխտ զաւկըներուս կանչէ եր-  
գերդ հայրենի,

Թող յաւիտեան ձայնդ անուշիկ հնչէ Հայե-  
րուն.  
Եւ թէ լսեն ամեն ազգեր եթէ աշխարհքն  
ալ անցնի,  
ԱԼ Հայաստան սուրբ Հայրենիք երգէ դուն։

ՄԵՆՔ այն երկրին,  
Զաւկըներն ենք.  
Որուն նմանն,  
ԱԼ չկայ։

Երկրին որուն,  
Գլխուն եկածն.  
Ուրիշին չէ,  
Պատահած։



## ԽՐԱԽՈՑՈՒ

Ի ՀՈՒՍԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Ժամէ, Հայեր, արիք ձեր բաղդն ողջունել,  
Լուսոյ դարուն վերածնութեան դրօշու տակ.  
Հայրենիք ձեր հրաւեր կարդայ գալ խմբել,  
Ուր ապագան ձեր գրուած կայ փառունակ։

Բայց են ասպարէզք ազատ քայլերու,  
Եւ երկինք լըցող ըզդաստ ուխտերու.

Մի ապա ճարակ մատնէք կոյր մըլլյանց ,  
Քիրտն , արտասուր և տենջ ձեր Հայ դիւցա  
զանց :

Յառաջ , յառաջ ,  
Մեծ է ձեր կոչում .  
Քաջի ծնունդ քաջեր ,  
Մասեաց սարերէն .  
Ալեւոր դարեր ,  
Լուռ ձեզ կը դիտեն .  
Քայլերու շարժում ,  
Յառաջ , յառաջ :

Մայր ձեր սիրուն , մայր դարերու Հայաստան ,  
Զեր է կարօտ , ձեր ժիր ու աղատ ջանքերու .  
Անոր լուսոյն խամբած դարաստ միաբան ,  
Ելք պըճնել , Հայեր ժամէ քրտնէլու :

Զեր ճակտին ցողով ջինջ պիտի ցոլան ,  
Սիւն , կոթող փոշոյ լուսոյ Հայութեան .  
Բաւ է ձեռ զոհեր , բաւ ալ միացէք ,  
Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք :

Յառաջ , յառաջ ,  
Մեծ է ձեր կոչում .  
Քաջի ծնունդ քաջեր ,  
Մասեաց սարերէն :

Ալեւոր դարեր ,  
Լուռ ձեզ կը դիտեն .  
Քայլերու շարժում ,  
Յառաջ , յառաջ :



## ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ ,  
Թէ երեք թուչին սիրողաբար .  
Մատունք կուսին ամենագեղ ,  
Թէ որ զարնեն փափուկ քընար :

Չունին ձայն մի այնքան սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Տնուր ինձ քու ձեռքդդ եղբայր եմք մեք ,  
Որ մըըրկաւ էինք զատուած .  
Բաղդին ամեն ոխ չար ու նենդ ,  
Ի մի համբոյր ցրուին ՚ի բաց :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայր Հայաստան ,  
Տեսնէ զորդիս իւր քովէ քով .

Սրտին խորտանկ վերքըն դաժան ,  
Քաղցր արտասուաց բուժին ցօղով :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

**Մէկտեղ** լացինք մենք 'ի հընում ,  
Եկէք դարձեալ յար անբաժան .  
Խառնենք զարտօսր և ըզինստում ,  
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

**Մէկտեղ** հոգնինք մէկտեղ ցանենք ,  
Մէկտեղ թափին մեր քրտինքներ .  
Ըզհունձք բարեաց յերկինս հանենք ,  
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մ. Պէտրովնեան

Ի վերԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱԼՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ի զուր ամպերն որոտացին ,  
Ու ամենուն սիրու դող առաւ .  
Ի զուր Նրեշտակ Մասեաց սարին ,  
Հայոց բաղդին վրայ լացաւ .  
Սեւ փոթորկաց մէջէն սրավար ,  
Տեսէք ի՞նչպէս կ'ելլէ պայծառ :

Կուգայ ցնծալով ,  
Ցնծայ բերելով .  
Բիւր երջանկութիւն ,  
Սահմանադրութիւն .  
Սահմանադրութիւն :

Ողջին աւուրն այն գերապանծ ,  
Ուր բարձրացաւ 'ի լցո յաղթող .  
Արդարութեան և իրաւանց ,  
Եւ ազգութեան յաւերժ կոթող .  
Արկողն հիմունս անդնդալիր ,  
Եւ մեծ գործոյն հանդիսադիր :

Կուգայ ցնծալով և այլն ,

Կա բարձրացաւ , ու սեւադէմ ,  
Ատելութեան խրոխտ ամբ արտակ .

Ինկաւ կործան , ու լուսաճեմ ,  
Թըռաւ առ մեղ սէր անուշակ .

Որ զամբարտակն այն խորտակեց ,  
Ու զսէրն անուշ մեղի խրկեց :

Կուգայ ցնծալով և այլն :

Ո՛հ , բնագաւառ մեր Հայաստան ,  
Գերեզմանաց դու Հայրենիք .

Նոցա վերայ փըշոց փոխան ,  
Բոււնին զըւարթ հոյլ վարդենիք .  
Ահա ցաւած ձակուէդ թառամ ,  
Կապել պըսակ մի անթառամ :

Կուգայ ցնծալով և այլն :

Միթէ տեսնէք դուք հեռըւանց ,  
Հայոց սրաթեւ մեծ ապագայ .

Որոյ վերայ յԵրկնից բարձանց ,  
Փայլէ հրաշէկ ասուղըն Հայկայ .  
Յայն ասպարեզ մեղ տալ հրաւէր ,  
Եւ առաջնորդ աւետաբեր :

Կուգայ ցնծալով և այլն :

Մ. Պէտրոսիսկան

~~~

ՀԱՅ ՐԵՆԻՔ

Իմ Հայրենիքս զիս կը կանչէ ,
Հեռու եմ Հայաստանէն .
Հայու որդւոյն կը վայլէ ,
Հեռանալ Հայաստանէն :

Միթէ արծաթ ոսկի գոհար ,
Կ'ափոփիէ Հայաստանը .
Այն որ կ'ողբայ որդւոց համար ,
Խղճալի Հայաստանը :

Խոր տիրութեան մէջ է թաղսւեր ,
Թագուհի Հայաստանը .
Բոպիկ ոտքով ազատ մազով ,
Կ'արտասուէ Հայաստանը :

Անգութ երկինք ալ չը յիշեր ,
Մոռցեր է Հայաստանը .
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր ,
Անուշի Հայաստանը :

Ո՛հ թողէք զիս խօսիմ ազատ ,
Երգեմ միշտ Հայաստանը .
Անուշ երկիր կոյս անարատ ,
Աննըման Հայաստանը :

Արեւ ծածկեր է իւր դէմքը ,
Խաւար է Հայաստանը .
Հայոց արեւը ալ մարեր է ,
Եւ հագեր Հայաստանը ,

Թշուառ սրտիս ձայն կը կտրէ ,
Ողբալով Հայաստանը .
Ո՛հ չիկայ Հայ , որ ըսփոփէ ,
Նուաղեալ Հայաստանը :

Թէ և կըտրի իմ վերջին շունչս ,
Պիտի պոռամ Հայաստան .
Պլուիմ մէյ մ'իմ Հայրենեացո ,
Հապա մանեմ գերեզման :

Անդորրութիւն ես կը խնդրեմ ,
Սիրելի Հայաստանին .
Կտրել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող ,
Սոսկումըն գերեզմանին :

Ա. ՀԱՅ.

Ե Ր Գ

Ց Ա. Ի Ա. Գ Ի Ւ

Իմ սիրելի զաւակունքս ,
Կը թափառին օտար աշխարհ :

Ես ուր դիմեմ , ուր փնտըւեմ ,
Կը ծառայեն այլոց խոնարհ :

Եկայք որդեակիք իմ ,
Զեր մօրն այցելութեան :

Դարեր անցաւ լուր մը չառի ,
Իմքաջերս մեռան կորան .
Կ'ուլամ արիւնըս կը սառի . . .
Մէ կը չ'ունիմ տայ ինձ դարման :

Եկայք որդեակիք և այլն :

Արիւնս ցամքած , սիրտըս մաշած ,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան .
Եւ կարօտոյն իմ որդեկաց ,
Պիտի իշնեմ սեւ գերեզման :

Եկայք որդեակիք և այլն :

Եւ դու հովիւ թափառական ,
Կերգես տխուր 'ի մէջ հովտաց .
Ե՛կ արտասուենք թանկ կորստեան ,
Տխուր մահուան մեր որդեկաց :

Եկայք որդեակիք և այլն :

Իսկ դու կռունկի իմ Հայրենեաց ,
Գնա՛ հեռու աչքէս 'ի բաց . . .
Յետին ողջոյնս տար զաւակացս ,
Զի կեանքիս մէջ յօսս է մեռած :
Եկայ.ք որդեակ.ք և այլն :

ՊԱՐԵԲ

Վ Ա Հ Ց

Ի խումբ 'ի պար ,
Հայրենասէր պանդուխտ Հայ.ք ,
Ի թինդ մեր ոտից թող Մասեաց բարձունքն :

Ա.Հ.Ղ.Պ.Ո.Տ.
Առ Հայս հանուր տան գանդիւն ,
Նրաւէր կարդալ Հայ դիւցազներուն :

Ի խումբ 'ի պար ,
Ո'վ Հայրենեաց քաջ որդիք ,
Մեր ոտից տրոփիւն բարէ թնտացուց :

Ա.Հ.Ղ.Ա.Լ.Պ.
Հայ սրաերն բոցակէզ ,
Յաղթական փառաց խմբել զհանդէս :

Ս. Պ. Պ. ՓԱԹԱՋԱՆ

ԲԱԺԱԿ ՈՂ ԶՈՒԻ

Ա.Ռ.

ՍԱԼՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Իջէք զուարթունք՝ և 'ի ձեր թեւս ապաստան ,
Յայց ելցուք այսօր յանձկալին Հայաստան .

Ըղծաղկապսակդ ածէք այսր զքնար ,
Որ երգեր երբեմն 'ի դրախտս Ադենայ .
Հանգուցեալ այժմիկ 'ի շիրմաց մնար ,
Զայն տուք զարթուցէք զորդիս Արամայ :

Ա.Ս.Թ. Դ.Ի.Չ.Ա.Պ.Ո.Ւ.Ն.Ք.
Թողեալ զդաւեան .
Եւ անտի զուարթունք ,
Ողջոյն քեզ ողջոյն ,
Սահմանադրութիւն :

Ո'վ որ յեցեալ 'ի տիսուր սափոր դիւցազանց ,
Գթով յերկինս ածես յաւէտ բիբս աչաց :

Ով Հայաստանեայց ողի սրբանուէր ,
Ահա հաշտ ակամբ ժպտի.քեզ Ա.Ս.Թ.Ա.Ճ.
Պարզի երգներանդ լար կապոյտ յեթեր ,
Գառնալ Աղաւնեակն ոստով ձիթենեաց :

Եփրատ առ Տիգրիս ,
Որմեայն առ Աեւան .

Տալով աւետիս ,
Հնշեսցեն միաբան .
Ողջն՝ քեզ ողջն՝ ,
Սահմանադրութիւն .

Աշ 'ի յաջ՝ սիրտ՝ 'ի սիրտ՝ ոգի խառն յոգի ,
Մատիք օն անդր յառպարէզ՝ սիրտը հայեցի .

Զի չքնաղ տեսիլ պարզի արդ յաջս իմ . . .
Ահա յոյս և սէր՝ որպէս զոյդ հրեշտակ.ք . . .
Առաջնորդէն մեղ . . . ով Տէր . . . խան
բիցիմ . . .

Ո՛չ, զայդ վկայեն սիրոյ այդ բաժակ.ք . . .

Հայկեանք առ Հայկեանս ,
Դաըք դարուց՝ որ դան .
Տալով արձադանս ,
Կրկնեսցեն միաբան .
Ողջն՝ քեզ ողջն՝ ,
Սահմանադրութիւն .

Թ. Թէրանն

Ի ՔԵԶ ԱԵԿԱՅ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ՔԵԶ անկայ Հայաստան ,
Ի ՔԵԶ մընամ Հայաստան .
Ապրիմ մեռնիմ քեզ համար ,
Անձս ու հոգիս տամ յօժար :

Աչքս բացի չբացի , զ.քեզ Հայաստան ես տես
այ ,
Դեռ իմ երես ծաղր չեկած , ես ողբացի քս
վերայ .
Լաց և ցաւեր , վիշտ սաստիկ , զիս պատեցին
չորս դիէն ,
Եւ Հայաստան գոչեցի , աւերակաց առի ձէն :

Մայրս ծընաւ զիս 'ի ցաւ ,
Աչս յաւերակսդ լացաւ .
Բերկրանք և մի ոչ տեսի ,
Երբ Հայաստան զ.քեզ տեսի :

Ա'իս Հայաստան , Հայաստան , անուանդ մեռ
նիմ Հայաստան ,
Երբեմն բերկրանք ցնծութիւն . այժմիկ անչ
կեալ կաս զընդան .
Սրտիւ սիրով կարօտիմ , մատաղ լինիմ քո
հոգւցդ ,

Որ զիս ծնար մնուցեր , և հաներ քաղցրիկ
ծոցոյդ :

Այլ ես զքեզ միշտ լացի ,
Եւ յաւիտեան պիտի լսմ .
Հոգիս հոգւցոյդ փոխարէն ,
Տամնազելի Հայաստան :

Իմ հայրենի Հայաստան , ինձ ոչ երբէք դու
զուարթ ,
Երեւեցար միշտ անփառք՝ դեանին եղած .
Հաւսար հարթ .
Ինչ աչք տեսաւ չարտասուեց , քո հին աւ
ւուրց աւերակ ,
Ինչ սիրտ չպաց քո շէն անշէն ասլարանք :

Աչքըս թարթեմ , արցունք թափեմ ,
Ազի ջըրով հողըդ թացեմ .
Մինչեւ մեռնիմ տապան մըտնամ ,
Ոսկերոտեօքս ողբամ ու լամ :

Իքեզ անկայ ես յարգանդէ մօր իմց ,
Աչք սաստիկ զիս տադնապէ ՚ի դաւ քո .
Օտար երկիր եմ տեսած . ՚ի յաւերակս քո
ծնայ ,
Նուիրական արիւնոտ հողոյդ վերայ զարգան
ցայ :

Տուն Աստուծոյ Հայաստան ,
Ա՛խ քո անուն հոգիս եհան .
Հայոց պարծանք քաջաց մայր ,
Այժմիկ ունայն և զրկեալ :

Երդնում 'ի Հայկ 'ի Մասիս թէ դու փութով
նորոգիս ,
Նարմէ ուրեմն և շարժիր , արի վեր կաց զօ-
րացիր .
Սիրեմ ըզքեզ Հայ անուն , աղանց քաջաց պան-
ծալի ,
Դու Աստուծոյ սիրելի , աղդի մարդկան ցան-
կալի :

Եհաս ահա դար խաղաղ ,
Աւերակներդ կանդնին վաղ .
Որդիքդ լինին լուսաւոր ,
Եւ զքեզ առնեն փառաւոր :



ԹԵՐԵԶՄԱՆՔ

ՀԱՅՈՎՈՅ

Լուռ և տիսուր դաշտեր գեղեցիկ ,
Քաջ որերսն աճիւններով դեռահեղ .
Ուր սուրբ շիրմաց ծածկէ տեսիլ խաղաղիկ ,
Զարմենաղան հաղար ծաղիկ գունադեղ :

Աւաղ Հայոց արեւուն ,
Աւաղ Հայոց քաջերուն .
Որոց կըրեմք մեք արիւն ,
Օրհնեալ է Հայք , Զեր անուն .

Ա վեհ նախնեաց , կտրիչ եղբարց սուրբ շի
Շայն մը տուէք , որ մեր արտասուքը ցամքի .
Վանկ մը հերիք ցաւած սրտից որ բերկրիմք ,
Մեղ ժըպտեցէք շիջեալ աստղ Հայրենի :

Աւաղ Հայոց և այլն :

Բացէք . բացէք մամուռտ սավորք սրբակիրք ,
Ցուցէք քաջացն ոսկերոտիքն համբուրեմք .
Եւ համբուրէ մեր և սգաւոր Հայրենիք ,
Մեք հարազատ որդիքս ողբամք ու երդենք .

Աւաղ Հայոց և այլն :

Գետք հայրենիք քանի ՚ի Զեղ կան ալիք ,
Եւ դուն , լուսին , քանի կանդեղդ վառ մնայ .
Դուն ալ սոխակ քանի ունիս դայլայլիկ .
Երդեցէք զՀայն , լըսեն սերունդք ապագայ :

Աւաղ Հայոց և այլն :

ԽԱՆ 2024 ՊԵ

ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ

Կար ժամանակ , որ և Հայերն .
Արբայ իշխող ունեին .
Եւ զինավառ անթիւ զօրքեր ,
Իւրեանց երկրում պահեին :

Կար ժամանակ որ և նոքա ,
Նման ծաղկած աղդերի .
Զարդարելով աշխարհ Հայկայ ,
Փայլում էին անուանի :

Բայց այժմ անտէր , անթագաւոր ,
Գերի , ծառայ ցաւագին .
Այս տեղ այն տեղ խիստ չքաւոր ,
Զարչարվում են գլխովին :

Այժմնոքա անմիսիթար ,
Հայրենիքից զրկուելով .
Վայ են կանչում թշուառաբար ,
Հալածանքներ կրելով :

ԵՐԳ Ո-ԱՄԿԱԿԱՆ

Կըռունկ ուստի կուգաս ծառայ եմ ձայնիդ ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ .
Մի՞ վազեր երամիդ շուտով կու հասնիս ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ :

Թողեր եմ ւեկեր եմ մըլքերս ու այդիս ,
Քանի որ ախ կանեմ կու քաղվի հոգիս .
Կըռունկ պահ մի կացիր՝ ձայնիկդ ՚ի հոգիս ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ ;
Զայնիկդ անուշ կուգայ քան ըղթի տօլապ .
Կըռունկ Պաղտատ իջնուո՞ կամ թէ ՚ի Հալապ ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Արտերնիս կամեցաւ ելանք գընացանք ,
Այս սուտ աս տընլորիս տէրտէրն իմացանք .
Աղու հացկեր մարդկանց կարօտ մընացանք ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Աս տընլորիս բաներն կամաց կամաց է ,
Եթէ Աստուած լըսէ դունակն բացցէ .
Ղարիպին սիրտն է սուգ՝ աչերն ՚ի լաց է ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Աստուած՝ քեզնէ ինդրեմ մուրվէթ ու քէրէմ .
Ղարիպին սիրտն է խոց , ձիկէրն է վէրէմ .
Կերած հայն է լեզի՝ ու ջուրն է հարամ ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Ոչ զլուր օրըն գիտեմ ոչ ըգկիրակին ,
Զարկած է զիս շամփուրն բռնած կրակին .

Այրիլս չեմ հոգար՝ ձեզնէ կարօտ եմ ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մը չունիս .
Հաւատով պառկեր եմ , ներքեւս է ֆըշափ ,
Հոտոյն այլ չեմ գարշիր կը թըլի մուշկի .
Շատ հասրէթ մընացանք անկողնու տօշկի ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Պաղտատու կուգաս՝ կերթաս ՚ի սէհրատ ,
Թղթիկ մի գրեր եմ տամքեզ ամանաթ .
Աստուած թող վկայ լինի քո վերադ ,
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Գըրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի ,
Օրիկ մի օրերուն զաշերս չի բացի .
Սիրելիք ձեզանէ կարօտ մընացի .
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Աշունն է մօտեցեր գնալու ես թէպտիր ,
Երամ ես ժողովեր հազար և բիւր .
Ինձ պատասխան չի տ' ւիր ելար գընացիր ,
Կըռունկ մեր աշխարհէն գընացիր .

Այսօր զարիսրութիւնն միակ միաւոր ,
Հոգւով և մարմնով ես եմ մեղաւոր .
Սուրբ Սարդիս օդնական ձերմակ ձիաւոր ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս .

Ա Խ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան երկիր գրախտավայր ,
Գու մարդկայնոյ ցեղիս որբան .
Գու եւ բնիկ իմ հայրենիք ,
Հայաստան , Հայաստան , Հայաստան .

Ի վեհ անունդ սիրու իմ ո՛հ յոյժ ,
Ուեւորի ՚ինոր խրախոյս .
Եւ անձկայրեաց ՚իքեզ յօւսամ ,
՚իքեզ , ՚իքեզ յօյս իմ միայն .
Հայաստան , Հայաստան , Հայաստան .

Հայաստան անուն փարելի ,
՚իքեզ հանդիստ նոյեան տապան .
Եգիս և քեւ ապրեցաւ նոյ ,
Հայաստան , Հայաստան , Հայաստան .

Գետք քաջառաջք աղենաբուզն ,
Զհողդ բարի առնեն յուռթի .
Գեւ ապրիմ ես , քեւ միշտ ցնծամ ,
Գեւ , քեւ պանծամ փառք իմ միայն ,
Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Հայաստան ծնող դիւցազանց ,
Եւ հրաշալեաց հանդիսարան .

Քո զեփիւռին քաղցր է շընչիւն .

Հայաստան , Հայաստան , Հայաստան .

Հայկ , Արմենակ , Արամ , Տիգրան ,
Տրդատ , Ամբատ , Վարդան , Վահան .

Զոր շընչեցին և զօրացան .

Զքեզ յիշեմ զքեզ սիրեմ .

Զքեզ , զքեզ , սէր իմ միայն .

Հայաստան , Հայաստան , Հայաստան :

Յ. ՄԻՐԶՅԱԿԱՆԻՆԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՏԱՃԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի բարձր ու շքեզ սարերէն ,
Սաւառնաթեւ կը սրանայ սիրու ՚ի խինդ .
Սուրբ հրեշտակն աւետաբեր արդ ձեպով ,
Ողջունել զօրս այս միութեան Հայերուն .
Զեզ աւետիս բերէ զուարթ բերկրութեան ,
Հայեր , ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

ԵԼԷՔ Տաճատեանք ,

Որդիք սիրարծարծ .

Տօնելքաղցր ՚ի ձայն .

Զօրը ցնծազգեաց :

Ահա պայծառ կը շողջողի սուրբ աստղըն ,
Ի ջինջ բեւեռ մեր ցանկալի Հայրենեաց .
Հրձուի Մասիս , ցնծան Եփրատ և Տիգրիս ,
Ազնիւ Նախնեաց խայտան ոսկերքն ՚ի շիրիմն .
Խրախոյս տալով Հայոց չքնաղ միութեան ,
Հայեր՝ ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատ . . . և լն :

Դրօշակն ահա սուրբ Վարդանայ կը բացուի ,
Օն ՚ի հանդէս ելէք , դոչէ ձեղ Տաճատ .
Օն ՚ի հրձուանս , արդ մերժեցաւ սուդ և կոծ ,
Եւ Հայրենիք նոր ցնծութեան առաւ ձորձ .
Զեղ աւետիս կուտայ յաւէտ բերկրութեան ,
Հայեր՝ ուրախ , ալ չէ տրտում Հայաստան :

Ելէք Տաճատ . . . և լն :

Կ. Վ. ՊԱՂԱՆԻԱ

—

ՅԱԿՈՒՐ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

20 Օգոստոս 1860

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր ,
Ի՞նչ կը յապաղէք Ելնել ՚ի հանդէս .

Ի՞նչ կը յապաղէք . — սիրո կը դիմանայ ,
Սիրո որ ազդասէր ըլլալ կը ցանկայ :
Տեսնել Հայրենեաց այսքան բիւր աղէտ ,
Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ .
Խեռ ատելրութեան և չար նախսնածու ,
Սերմերն ու ոգին հեռու մղենք հեռու :
Սիրո սրտի կապուած , թեւ թեւի տուած ,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բայցուած .
Օն վաղենք յառաջ ՚ի սուրբ Խաչն վստահ ,
Օն երթանք յառաջ , և անձնանուէր ,
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր :
Հայ մի վհատիր , սիրո առ և սիրո տուր ,
Տկարք զօրանան , քաջք իրախուսին .
Վատերը բացուին , վատերը զատուին ,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին :
Խաչ , սէրն են նշան ճշմարիտ Հայուն ,
Խաչ , սէրն են պարծանք ճշմարիտ Հայուն :

Սիրոյ գըրօշներ ,

Թող արդ պարզուին .

Հաշտութեան ձայներ ,

Թող արդ հնչուին :

Հայն մէկ սիրո եղաւ ,

Սիրով միացաւ .

Սուտ են որ ըսեն ,

“Հայք վիրար կատեն ,” :

Առւրբ Արարատեան մայր աթոռոյն գիրկը ,
Եկէք , հայկազունք եկէք միանանք .
Եւ սիրովենք մեր վշտացած մօր սիրով ,
Օրհնելով Տէրը , որ մեղ պարգեւեց :

Մէր Ազգին կապն ու հոգին ,
Ազգային Սահմանադրութիւն .
- Յաւերժացի արդիւնաւեա :

Ս. Գ. Գ. ՖԱՓԱՅԱՆ

ԱՐՇԱԼՈՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Ի ԶՈՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍՊՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայաստանեայց սեւ տիսրագին օրերը ,
Փարատեցան , նոր հորիզոն բացուեցաւ .
Մեզի համար չեն այն մթին ամսկերը ,
Զի արշալոյս պայծառ դարձեալ փայլեցաւ :

Ցուրախութիւն , ո՛ Հայեր ,
Որդիք Հայկայ և Արամայ .
Զեզ փառաւոր պողոտայ ;
Հորդեն երկինք լուսաբեր :

Դուք դիւցազանց ձետ էք , Հայեր , քաջ եղիք ,
Յառաջ գացէք , յառաջ , ահա ասպարէզ .
Մայր Հայաստան ձեզ կը նայի աւասիկ ,
Մեղմացուցէք իր արտասուքն աղեկէզ :

Թշուառութեան բաժակը ,
Մինչեւ տակը քամեցինք .
Արդ ուղարկեց մեզ երկինք ,
Աւետաբեր հրեշտակը :

Այն հրեշտակը որ Վարդանայ վեհ ոգին ,
Ի՞նչւարայրի նահատակաց սուրբ գունդը .
Ներկայացոյց Ամենակալ Արքային ,
Մինչ կրակազաշտ Պարսիկն երթայր անդունդը :

Արդ՝ ձեզ կուգայ , հայկազունք ,
Նոր աւետիս բերելով .
“Զէ այլ ձեզ բաղրըն խռով .
Դուք քաջարեաց , ո՛ մանկունք” :

Օ՞ն խայտացէք , Գողթան երգեր թող հնչեն ,
Թող արձագանք տան և հովիտք , բլուրներ .
Մեր սիրտերը , որ սուրբ սիրով կը արովեն ,
Թող միանան ու կորնչի անսուրբ հեռ :

Ի'ամեն տարի ցնծութեամբ ,
Մէք այս շքեղ հովտին մէջ .
Հեշտին պարուց ելեւէջ ,
Ընեմք դարձեալ միութեամբ :

Գ. Վ. ՊԱՌԱԽԱՆ

Ի ՀԱՆԴԵՍ
ՀՈՐՌՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
Հրեշտակ Մասեաց մրտենիներ ՚ի ձեռին ,
Արդ մեզ ձօնէ համբոյր սիրոյ կաթոդին .
Մեղքը հոսին իր գեղեցիկ շրթունքէն ,
Վարդեր ծըլին իր զուարթագին ժըպիտէն :

Իւր մատունք կը հիւսէն ,
Դիւցաղանց պերճ պսակներ .
Հայ բաղդին վրայ սփռեն ,
Յուսաշող նշոյներ :

Յաւերակաց Հայաստանի երդ հնչենք ,
Տան արձագանք այն սրտերուն որք քաջ են :
Ալիք՝ դալիս հեղահամբոյր ողջունեն ,
Ծաղիկք՝ ծաղկանց թեթև թեւօք կը դդուեն :

Ա. Ջ քնքոյց վարդենիք ,
Զոր Երկինք մեզ տըւին .
Ո՛հ եղան հովանիք ,
Անմեղաց սեւ բաղդին :

Հայուն սրտին խորին վերքերն թաղուեցան ,
Ժամանակին հզօր ձեռօք ՚ի դամբան .
Հայուն աչքին ալ քաղցրանան գառն արցունք ,
Մէր կը հնչեն մինչդեռ իրեն պարզ շբթունք :

Վարդանայ վեհ դափնիք ,
Թո՛ղ նորէն ալ ծըլին .
Մինչ Հայկայ քաջ որդիք ,
Զուարթ երդեն Հայրենին :

Մէր արտասուաց մէջ մարեցան ով Հայեր ,
Աստուածային այն ահաւոր կայծակներ .
Երբ հաշտութեան ձայնք կրկնեցին ամեն սիրտ ,
Երբ քաղցր աչօք մեզ ժպտեցաւ ոհ Երկինք :

Անդ դարձաւ Աղաւնեակն ,
Տալով մեծ աւետիս .
Զուարթ բերաւ յաղթանակն՝
Հաշտութեան վեհ Ազգին :

Զարթնուն քաջերն ՚ի բնագաւառն ՚ի հանդէս ,
Ուր պերճ վառաց եղեւ որբան ւասպարէզ .

Հըճուի երկիր , յնծան երկինք զուարթաղէմ ,
Մինչ դայ յուսոյն չքնալ հրեշտակ երկնաձեմ :

Երկնային զուարթունք ,
Ո՞հ սիրոյ երդերով .
Կը նետեն մեղ ծաղկունք ,
Անուշիկ նայուածքով :

Անհուն վշտացդ մէջ տես Ոգիր կուսական ,
Որդիքդ ինչպէս արցունքդ սրբել խոստանան .
Լանջք Հայկազնց քաղցրիկ երդերդ կը կըրկ-
նեն ,
Հայոց կուսանք քայլերուդ տակ վարդք սըփ-
ռեն :

Բրաբիոն մանուշակ ,
Ո՞լ սիրուն Հայրենիք .
Պիտ' հիւսուին քեղ պսակ ,
Մինչ հաշտ են մեղ Երկինք :

Ա. Յ. Աթազես

Ի ՎերՍՀԱՍՏԱՑՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
Հայուն աչքէն ալ չը հոսէ դառն արցունք ,
Հերիք լացաւ , հերիք հեծեց իւր բաղդին .

Հայն իւր վշտերըն մոռցած տայ ընկերին ,
Միրոյ համբոյր , սիրոյ ժըպիտ և ծաղկունք :

Նոյեան աղաւնին ,
Զիթենեաց ձիւղեր .
Սփուելով գետին ,
ՀԱՇՏՈՒԹԻՒՆ բերէր :

Ահա և այսօր ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ,
Իբրեւ աղաւնին բերաւ Հաշտութիւն .
Ուկի թելերըն թող հնչէ՝ Հայ քնար ,
Որոց ննջեն ընդ հովանեաւ սուրբ շիրմաց .
Համբոյր սիրոյ դրօշմեն յերեսս իբրաց ,
Խաղաղութեան ձայնիւ թնդայ թող աշխարհ :

Զայն տոնք դիւցաղանց ,
Որ յԱրտազ ննջեն . . .
Աստեղք Հայկազնց ,
Նորալոյս փայլէն :

Աղէ սիրտ սրտի խառնէ միութիւն ,
Զի յաւերժասցի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

ԵՐԳ
ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՈՐ

ԿԱՏԱՐԵՑԱՀ Ի ԴԱՇՆ ԱԼԱՐԱՅՐԻ
Հուր բարկութեան համայն Հայոց ,
Բորբոքեալ զերդ բոց բարկաձայթ .
Ու կայծականցը բիւր բիւրոց ,
Զարթցց ՚ի մարտ սալու սառնապատ ,
Զե՞ վարանիմք արդ աստ եղբարք ,
Դատարկ ձեռամք , դատարկ ձեռամք .
Ձեռամք յԱրտաղ Տղմուտ օն դրոց ՚ի դրոց ,
Ի դրոց թուչիմք սրանամք , սրանամք , սր-
հուր զէն ՚ի ձեռին
Ու վրէժ ահագին
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան :

Եւ յոր երկինք հանդիսատես
Զաշխոյժ նախնեաց հեղու ՚ի մեզ :

Հապ օն քաջք քաջաց
Ընդ Սասան կուրծս
Միսեսցուք մկունս
Ու ժգին ՚ի հարուած :

Ա. ԱԷՏԵՖԱՆԱՆ

ԱՆՁՈՒԿԻՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ա.

Հայաստան քաղցր իմ Հայաստան ,
Ոգիքս յանունդ հալեցան .
Մինչեւ ցերբ ես ՚ի քէն պանդուխտ ,
Ոգւսո իմ Երբ լըցի ուխտ :

Արդեօք աչքս անձկալից ,
Երբեմն ըզքեղ տեսցե՞ն .
Աչքս այս արտասուալից ,
Երբէք գադարեսցե՞ն :
Շուրթն իմ ՚ի հողդ կենսաւոր ,
Տացէ զհամբոյրն ուխտաւոր .
Արդեօք գլուխս վըշտակս ,
Հանդիցէ քսոց ՚ի ծոց :

Հայաստան սէր իմ Հայաստան ,
Ոգիքս ՚ի տենչդ հալեցան .
Մինչեւ ցերբ ես ՚ի քէն պանդուխտ ,
Մրտիս իմ Երբ լըցի ուխտ :

Բ.

Հայաստան , պերճ իմ Հայաստան ,
Ով երկիր նուիրական .
Հընոց կենաց և որորան ,
Հաշտարար երկնից խորան :

ի քո սուրբ հովանիս ,
Ո՞ զնըժդէնէ տանէր զիս .
Ո՞ ՚ի ստուերադ Երազմոյն ,
Ըզնախնեացս հեղջէ քուն :

Անմահութեանց վեհաբուն ,
Մըծել անդ զօդ և զաւիւն .
Եւ զաստեացըս վրշտաց ,
Գրտանել կատարած :

Հայաստան իմ քաղցր Հայաստան ,
Ոգիքս յանունդ հալեցան .
Մինչեւ ցերք ես ՚ի քէն պանդուխտ ,
Սրտիս իմ երբ լրցցի ուխտ :

Գ.

Հայաստան , սիրուն Հայաստան ,
Յուսոյ խարիսխ մարդկութեան .
Դու ու իմ լոկ ակրնկալեաց վայր ,
Յոր աչք իմ ձըգին յամայր :

Ո՞ զմին գէթ տայր լընուլ ,
Զիմս ըզձից ՚ի քեզ հոյլ .
Ո՞ զփափաքս յարատեւ ,
Իբր ըլսիւդ մի թէթէ :

Հասուցանէր մինչ առ քեզ ,
Եւ զայս ողջունս սրտակէզ .
Եւ զհառաչս ոգւսոյս բիւր ,
Զոր ընդ բլուր տայր ՚ի սփիւռ :

Հայաստան քաղցր իմ Հայաստան ,
Ոգիքս ՚ի տենչդ հալեցան .
Մինչեւ ցերք ես ՚ի քէն պանդուխտ ,
Սրտիս իմ երբ լրցցի ուխտ :

Դ.

Հայաստան , իմ վեհ Հայաստան ,
Երանութեան օթարան .
Ո՞ տայր զաւուրս իմ ցաւալիս ,
Փոխել ո՛հ Երանելիս :

Ոչ փառօք փայլելով ,
Վաղանցուկ ոչ ոսկւով .
Այլ ՚ի զքեզ տեսանել ,
Սուրբ ըզսարտ ողջունել :

Զաւերակօք քո փարել ,
Եւ զհարցս անդուստ ձայն լըսել .
Եւ զնոցին հետս անանց ,
Համբուրել գետնամած :

Հայաստան քաղցր իմ Հայաստան ,
Ոգիքս յանունդ հալեցան .
Մինչեւ ցերբ ես 'ի քէն պանդուխտ ,
Սրտիս իմ երբ լըցցի ուխտ :

Ե.

Հայաստան , անոյշ Հայաստան ,
Դու զոգիս լընուս համայն .
Դու խրախոյս , փառք իմ և վիշտ ,
Ցոր սիրտ իմ թըրուանի՛ միշտ :

Ես պատիւ , զինչ և զերկ ,
Խանդ , ըզըունչ և սին զերդ .
Ի բագինդ արդադիր .
Կախեցից լիաձիր :

Մի լոկ ինդրեալ փոխարէն ,
Զի ըզքեղ աչք իմ տեսցեն .
Զի մի՛ ցմահ անձկալից ,
Զերդ սերկեան գոչեցից :

Հայաստան , իմ քաղցր Հայաստան ,
Ոգիքս յանունդ հալեցան .
Մինչեւ ցերբ ես 'ի քէն պանդուխտ ,
Սրտիս իմ երբ լըցցի ուխտ :

ԱՊՏԻՒԼ ԱԶԻՉ ԽԱՆ

Համու ու սէնա ոլ Խիւտայի գատիրէ ,
Քի սէմատէն լութի լըլէտի ալէմէ .
Զիատարի էնտէր Ճիհան քէրէմրիզ ,
Թաճտարի սուլթան ԱՊՏԻՒԼ-ԱԶԻՉ-ԽԱՆ :

Եէհրի իգպայլ իլէ ատալէթքեարի ,
Օլսուն սէրիր սալթանաթտէ էյեամի ,
Քի խտուպ պէնսի շէֆաաթլէ գուլէրի ,
Բայէթ իտէր մէշագգաթտէն հէր պիրի :

Եյշակիրտան քեաֆֆէմլուտէն եէք տիհան ,
Հագդ ազիզէ շիքը իտէլիմ պի փայան .
Գըլըն հիւանի նազար իլէ ֆիրավան ,
Պէյլէ եէլմի ֆիւրու զայի սոյէպան :

ՆԱԴԱՐԱԹ

Իմրանիյէթ պախչէնտէյի հագդ Ճէլիլ .
Հահըմըզն իթոիւն է օմրիւնիւ թալիլ :

ՅՈՒՆԱՏ Կ. Փ.

ԵՐԵՎԱՆ Ա. Յ.

ԵՐԳ

Գ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԺԱՄ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Հովիտ ծածկեալ ՚ի ծոց լերանց ,
Գողաբիկ պատկեր իմ Հայրենեաց .
Երրորդ անգամ սիրոյ նուագ ,
Քեզ դայ ձօնել Հայ պատանեակ :

Օ՞ն երգեցէք Հայկեան զուարթունք ,
Սիրոյ է ժամս , դադընն արցունք :

Հրեշտակն Հայոց յերկնեց ոլանայ ,
Նայուածքներէն ժըպիտ շողայ .
Եւ անդ ժպտեն վերականգնին ,
Համր աւերակք Հայաստանին :

Հայկեան կուսանք օ՞ն փութացէք ,
Նորածին վարդըս սփռեցէք :

Փայլուն աստղեր ահա շողան ,
Երբ հաշտութեան երկնից նըշան .
Հայկեանն փառաց՝ նոր զարդարել ,
Հայկեան քընար՝ նոր երգը տաւղել :

Հայ պատանէք օ՞ն ձայնեցէք ,
Գողաբիկ ձայնով օրս օրհնեցէք :

Ո՞չ Հայրենիք ալ թող չի լան ,
Մասեաց սարեր արձագանք տան .
Առ Եփրատէս , Տիգրիս գետեր ,
Ուր կան թաղուած քաջաց ոսկերք :

Հայ ծերունիք վիշտ ձեր մոռցէք ,
Մանկանցդ ճակտէն ըզ յցս տեսէք :
ԱՐԱԿԱՌ Յ. ԱԹՎԱԶՅԱՆ



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ափերով ,
Քայլամուլով գնում եմ .
Հին հին դարուց յիշատակ ,
Ալեաց մէջը պղտրում եմ :

Բայց նորա միշտ յեզյեղուկ ,
Պղտոր ջրով եզերքին .
Դարիւ դարիւ խփելով ,
Փախչում էին լալագին :

Արաքս՝ ինչու ձկանց հետ ,
Պար չես բանում մանկական .
Դու դեռ ծովը չը հասած ,
Սգաւոր ես ինձ նման :

Ինչու արցուք ցայտում են ,
Քու սէք հպարտ աչերից .
Ինչու արագ փախչում ես ,
Այդ հարազատ ափերից :

Մի պղտորիլ յատակդ ,
Հանդարտ հոսէ իսայտալով .
Մանկութիւնը քու կարճ է ,
Եռւտ կը հասնիս դէպ ՚ի ծով :

Վարդի թփեր թող բուսնին ,
Քու հիւրընկալ ափի մօտ .
Սոխակները նոցա մէջ ,
Երգեն մինչեւ առաւօտ :

Մշտադալար ուռիներ ,
Սառ ծոցի մէջ քու ջրին .
Ճկուն սատըն ու տերեւ ,
Թող թաց անեն տապ օրին :

Ափերիդ մօտ երգելու ,
Հովիւք թող գան համարձակ .
Գառն ու ուլը քու վճիտ ,
Զուրը մոնեն միշտ արձակ :

Մէջքը ուռցուց Արաքը ,
Փրփուր հանեց իւր տակից .

Ամպի նման գոռալով ,
Էսպէս խօսեց յատակից :

“Խիղմիս , անմիտ պատանի ,
Նիրհըս ինչու դարեւոր .
Վրդովում ես նորոգում ,
Իմ ցաւերը բիւրաւոր :

Արեւելի մահից յետ ,
Երբ ես տեսել , որ այրին .
Ոտից ց' գլուխ պճնուի ,
Իւր զարդերով թանկագին :

Որի համար զարդարուիմ ,
Որի աչքը հրապուրեմ .
Շատերին՝ ինձ ես ատելի ,
Շատերին՝ ես օտար եմ :

Իմ ազգակիր գիւժ քուռը ,
Թէ և այրի ինձ նըման .
Ըստրկօրէն տանումէ ,
Գայթակղիչի կուռ շղթան :

Բայց նա ինձ չէ օրինակ ,
Ես Հայ հայիս կը ճանչնամ .
Օտար փեսայ չուզելով ,
Ես միշտ այրի կը մըհամ :

Կամանակ , որ ես էլ ,
Եքեղազարդ հարսի պէս .
Հազար ու բիւր պչըանքով ,
Փախչում էի ափերէս :

Յատակս պարզ ու վճիռ ,
Կոհակներս ոլորտն .
Լուսաբերը մինչեւ ցայդ ,
Ջրիս միջին էր լողում :

Ի՞նչս մնաց այն օրից ,
Ո՞ր ջրամօտ գեղերս .
Ո՞րը իմ շէն քաղաքից ,
Ո՞ր բերկրալի տեղերս :

Տուբըը ջրի ամեն օր ,
Իր սուրբ ծոցէն Արարատ .
Մայրախընամ ինձ սնունդ ,
Պարգեւում է լիառատ :

Բայց ես այն սուրբ ջրերով ,
Սուրբ Ակոբի աղբիւրին .
Պիտի ցողեմ արտօրայքն ,
Իմ ատելի օտարին :

Կամ կենսատու իմ ջրով ,
Ափերիս մօտ կըկած .

Իր աղօթքը կատարէ ,
Վարդ կամ սրբակն հռուած :

Մինչ իմ որդիք (ով գիտէ) ,
Ծարաւ , նօթի , անտէրունչ .
Օտար աշխարհ յածում են ,
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . .

Հեռնւ հեռնւ քշեցին ,
Բնիկ աղքը իմ Հայկեան .
Նոցա տեղը ինձ տուին ,
Անգութ խուժանըն Պարսկական :

Դոցա համար զարդարեմ ,
Իմ հիւրընկալ ափերը .
Եւ կամ դոցա հրապուրեմ ,
Ճպռոտ , պլշած աչերը :

Քանի որ իմ զաւակունք ,
Էսպէս կու մընան պանդուխտ ,
Ջիս միշտ ադաւոր կը տեսնէք ,
Այս է անխար իմ սուրբ ուխտ . . .

Եւ չիօսեց Արաքսը ,
Ցորձանք տուեց ահագին .
Օղակ օղակ օձի պէս ,
Առաջ սողաց մոլեգին :

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր , երազի նման (1) ,
Անցաք գնացիք , այլ չէք դառնալու .
Ո՛հ դուք երջանիկ , ո՞հ անհոգ օրեր ,
Ընդունակ միայն ուրախացնելու :

Ձեզանից յետոյ եկաւ դիտութիւն ,
Իւր ծանը հայեացքով աշխարհի վերայ .
Ամեն բան ընկաւ մոսածութեան տակ ,
Պոպէ չըմնաց ազատ կամ ունայն :

Գիտակցութիւնը յաջորդեց սորան ,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս . . .
Ապոլոն տուեց ինձ իւր քնարը ,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս :

Աւազ , այդ քնարը իմ ձեռքում հնչեց ,
Նշնպէս լալագին , նշնպէս վշտահար :
Ինչպէս իմ սիրտն էր , իմ զգացմունքը ,
Ուրախացուցիչ չի գտայ մի' լար :

Ես այն ժամանակ միայն զգացի ,
Որ այդ ցաւերից աղատվելու չեմ .
Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ ,
Օտարների ձեռք անխօս տիսրադէմ :

Մանկութեան օրերս ինչո՞ւ այդ պէս շուտ ,
Թռաք գընացիք անդարձ յաւիտեան .
Եւ այն ժամանակ անհոգ ու աղատ ,
Կարծումէի ինձ աշխարհի իշխան :

Տէրութեան շղթան ինձ զգալի չէր ,
Եւ ոչ բոնութեան անգութ ճանկերը .
Զեզանից յետոյ ծանրացան նորա ,
Ո՛հ անիծում եմ ես այս օրերը :

Լուռ կաց դու քնար , այլ մի' հնչէր ինձ ,
Ապոլոն , յետ առ դարձեալ դու նորան .
Տուր մի այլ մարդու , որ ընդունակ է ,
Զոհ բերել կեանքը սիրած աղջրկան :

Ես պիտի գուրս գամդէպ 'ի հրապարակ ,
Առանց քնարի , անզարդ խօսքերով .
Ես պիտի գոչեմ , պիտի բողոքեմ ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով :

Ներկայ օրերում ալ ինչ սեւ քնար ,
Սուր է հարկաւոր կտրիճի ձեռքին .
Արիւն ու կըրակ թշնամու վերայ ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին :

Թռ' պատգամախոսը հնացած Դէլֆի ,
Իւր եռոտանու վերայ փրփրի .

(1) Տես Հետախափայլ . 1859 թիւ 9 .

Թող միջին դարու գաղափարներով ,
Ամբոխը խաբել ճգնի աշխատի :

Թող նա թարգմանէ զբարտութիւնը ,
Թող միսիթարուի ծովի ափերում .

Մենք աղատութեան ենք միայն թարգման ,
Միայն այս խօսքը ունիմք բերանում .

Ո՛վ Հայր , ով դու Հայր , որ երկնքումես ,
Խընայիր թշուառ մեր անտէր ազգին .
Մի տար զոհ գնալ թշնամիների ,
Նա ալ չէ լսում Դելֆեան հարցուկին :

Կ. Ի. Ա. Տ. Ե. Լ.

ՄԻԳԱՅԻ, ԱԱՐԱՆԴԱՑ

ՀՐԱԺԵՇ

ՔԱԶԱՍԻՐՏ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Մեր Հայրենեաց փափուկ հողեր ,
Արեան գետակ են դարձուցեր .
Եւ այն դաշտերն Աղատութեան ,
Թշնամեաց սուբք կը շողշողան :

Բռնաւորին սեւ թեւոց տակ ,
Քանի՛ դարեր հեծենք թշուառք .
Արեւն արցունք գիշերն ամեն ,
Հերեւք իշան մեր աչքերէն :

Քաշած աղէտքը ալ կը բաւեն ,
Վրէժինդրութեան հրաւէքք հնչեն .
Աւչեմ կրնար զղթայից տակ ,
Գերի տեսնալ իմքորքն ու եղբարք :

Այսօր ինձի թող օր մ'ըլլայ ,
Յաղթանակի և կամ մահուան .
Գերի մնալէն քաղցր է ինձ հէ ,
Հանդչիլ փառօք նախնեացս ՚ի հող =

Զի ՚ո՞ն արդեօք իմ հայրերէն ,
Հանդիստ մահուամք լուռ ննջած են . . .
Այլ պատերազմ և յաղթանակ ,
Միշտ թողուցին մեզ յիշատակ :

Օ՞ն խաչանիշ դրօշովս փութամ ,
Հայրենավրէ ժ ՚ի պատերազմ .
Վատ աղդերուն դահն կործանեմ ,
Եւ յաղթական նըւագս երգեմ :

Զի խրախուսեն իմ Հարց ստուերք ,
Ազգիս շղթայք ալ խորտակել .
Իմ Հայրենեաց քաղցր ապագան ,
Արտիս կուտայ ցժ քաջութեան :

Այս՝ հո՞ն տեղ մահն ինձ քաղցր է ,
Աղատութեան երբ փողն հնչէ .

Հո՞ն զոհուեցան շատ մեծ քաջեր ,
Պարզել յեթերս ազատ դրոշներ :

Հո՞ն թշնամւոյն արիւններով ,
Դիականց վրայ անջինջ դըրով .
Իմ Հայրենի փառքըն դրոշմեմ ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ :

Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ ,
Որ օր մ’ուրախ սրտով տեսնեմ .
Ազատութեան յաղթանակով ,
Վերադարձն իմ սուրբ հարցըս քով :



Ա.Ռ

ԱՍՏՂՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մեր սիրուն հայրենեաց ,
Բեւեռը շողովով .
Մեր սիրուն քաջազանց ,
Աճիւններն ցարդ հսկող :
Պայծառ ասուղ որ այժմիկ ,
Լցուդ կընես թափանցիկ .
Մինչեւ Հայ պանդխտոց ,
Սրտերուն կուտաս բոց :

Ովքաղցը Յցս . դու միսիթար ,
Տարագիր Հայոցս թշուառ .
Ի՞նչ աշխայժ նոր ՚ի նոր ,
Ի՞նչ աշխայժ ոգեւոր .
Կարծարծես սրտերնուս .
Ով Հայոցս միակ Յցս :

Զէ , ալ չվհատինք բնաւ ով Հայեր ,
Մեզքաջալեր են Յցս և Ժամանակ .
Զէ ալ չվհատինք բնաւ ով Հայեր ,
Ժամանակին հետ յառաջ ընթաննք .
Յառաջ ընթանանք , հոն ուր հրաւէր ,
Հրաւէր կարդան մեզնախահարց աստղեր :

Թէ Հայկայ որդիք եմք ,
Թէ Հայկայ արիւն կրեմք .
Ամէնքս ալ ՚ի սուրբ սէր ,
Հայրենեաց ՚ի նու էր .
Քաջ որդիք պահճալի ,
Ըլլամք միշտ արժանի :

ՊԱՐԵՐԳ

Հայկաղունք պար բռնենք ,
Թեւ ՚ի թեւ օն ելնենք .
Ցհծութեան ձայներով ,
Եւ զուարթ երգերով :

Զի տհա ՚ի նոր բաղդ,
Զայն կուտայ երկինք արդ.
Ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ,
Անձնուէր գոլ պատրաստ :
Ս. Պ. Պ. ՔԱՓԱԶԵԱՆ

ՅԱՂԹԱՆԱԿ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին,
Յարծաթեայ կառացն ժամուէր զուարթագին.
Ի բարձանց Երկնից սիրոյ հրեշտակներ,
Մեզ կը սփուէին դափնեայ պսակներ :

Բանդռունքն երդէին զվեհն Աղատութիւն,
Որ մեզի բերէր փրկութեան ողջոյն .
ՊՃնէին ծաղկամբք դամբանքն լրուին,
Ուր Հայ դի՛ ցաղանց ոսկեբըն հանգչին :

Երկնքէն ժողովն պաղպաջուն աստղեր,
Երբ կը ծածանին Հայոց դրոշակներ .
Աղատ Մասիսի լեռանց ծայրերէն,
Հայրենահրաւէր ձայներ կը հնչեն :

Դժոխոց դռներըն խորտակելով,
Վարդան և Մեսրովպ ՚ի վեր վազելով .

Կանգնեն յաղթանակ պերճ Աղատութեան ,
Վերանորոգեն փառքեր Հայութեան :
Ո՛չ ինչպէս հրձուին Հայոց զաւակներ ,
Մինչդեռ կը տեսնեն նախնեաց հին փառքեր .
Լուռ կրնայ մնալ մեր միրուն քընար ,
Մինչդեռ Աստղըն Հայկայ շողայ լուսավառ :
ԱԲՐԱՀԱՄ Յ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՊԱՆԴՈՒԽԾ

Ե

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Մինչ հայրենի զուարթ յափանց տարագիր ,
Պանդուխտն թշուառ հեծէ յաղէտսարտմալիր .
Միայնութիւն սուգ և հառաչք անդադար ,
Նա յուսաբեկ գիտէ օտար ՚ի յաշխարհ .
Բիւր սփոփանս աղդէն ՚ի սիրո թշուառին ,
Արմենուհւոյն աշերն ՚ի գութ երբ ժապին :
Ո՛չ, մինչնախնեաց թշուառութեան յիշատակ ,
Բերէ ՚ի տես ըզթշնամոյն յաղթանակ .
Աւերակաց ահեղ բեկորք տիրական ,
Եւ մահաբոյր ցուրտ դամբանաց տեսարան .
Նկուն վիճակ եղբարց , սուսերն անխնայ ,
Թէ պանդխտին չը թողուն յոյս գուզնաքեայ :
Բիւր սփոփանս աղդեն յայնժամ , և այլն :

Թէ չարաշուք բաղդին՝ ՚ի ձեռս խաղալիկ ,
Վճիռ անդարձ են միշտ նմա ողբ լալիք .
Ճնշիլընդ ցաւօք, ծիւրիլյանձուկ հայրենեաց,
Մինչ սգաւոր յաւարտ աւուրց իւր կենաց =
Բիւր սփոփանս ազդեն՝ ՚ի սիրտ, և այն :

Գարուն զուարթ հէք մահացուաց այցելու ,
Ոչ Պանդխտին թուի այնքան կենսատու .
Արմենուհւոյն քան զմբմունջ դողդոջուն ,
Որ ՚ի կիթառ երդէ զՄէր զուարթուն .
Առցգ ՚նդ հուպ յարուցեալ յողբոց տիրա-
նուեր ,
Գուշ սկանդուխտն “ Երկնազդեցիկ է քցդ
Աէր ” :

Բիւր սփոփանս ազդես ՚ի սիրտ թշուառիս ,
Արմենուհիդ , մինչդեռ ՚ի Աէր դու ժպտիս :

Բ. Կ. Թէլեն

→»»»»

ՄԱՐՇ

Մնացես բարեաւ սէր իմ սէր ,
Հրաւեր մարտին որոտաց .
Թէ չեմ քաջաց ես ընկեր ,
Զըկայ բաժին ինձ փառաց :

Մի լար հոգւցս իմ հատոր ,
Գուցէ դառնամ ոհ մի՛ լար .
Թ' անկայց մարտին ես ՚ի գոռ ,
Տեսցուք յերկինս մեք զիրեար :

Եղայրադաւ չէ նախանձ ,
Որ բորբոքեալ յիս վառի .
Ի սուրբ հողոց Հայկազանց ,
Բառնամ զլուծ օտարի :

ԱՍՏԻԿԱՆ

ՀԱՅՈՑ

Մուսայ.ք Մասեաց ելէք ՚ի դաշտ ,
Հայել Հայոց յԱստղիկըն հոշտ .
Ի դաշտ , յորում սիրով Հայեր ,
Կարգան փառաց հըրաւեր :

Տեսէք Հայոց տանն հորիզոն ,
Կոյս մի ըլքեղ և ըղդօն .
Աչք վառվառուն , դէմք գեղանի ,
Հայուն սիրով նա ժպտի :

Կեցցէ միշտ յաւերժ ,
Կոյսն զուարթուն .
Վատին ՚ի վըրէժ ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Տեսէք յաջմէ քոց սիրալոյս ,
Վառենք պատրոյկ սրտերնուս .
Եւ ՚ի ձախմէ սիրոց դրօշակ ,
Հայեր մտնանք անոր տակ :

Ժամանակին խորէն անբաւ ,
Կուսին մասն էր երեւեցաւ .
Ցրուեց մտաց ամպեր մթին ,
Բացաւ սիրոյ սեզ ուղին :

Կեցցէ միշտ յաւէրժ ,
Կյոյն զուարթուն .
Վատին ՚ի վրէժ ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Հայեր յառաջ , նենդ ոխ ՚ի բաց ,
Կուսին ելնենք արդ ՚ի յայց .
Եղբայր եղբօր ձեռք սիրտ տուած ,
Համբոյր մի տանք սիրազգաց :

Կաց հայ աստղիկտ , կաց անսասան ,
Շնորհիւ վեհին Օմանեան .
Եւ քեւ կեցցեն մանկունք Հայոց ,
Ի սիրարծարծ քըին ծոց :

Կեցցէ միշտ յաւէրժ ,
Կյոյն զուարթուն .
Վատին ՚ի վրէժ ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Հ Ր Ա Ժ Ե Ծ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԱՏՐՈՒՆԻ

Յաւարս առաջին եղանակին

ԽՄԲԵՑԿ

Մինչ ծովամած կան ՚ի խշտիս արփւոյն սլաք
բոցեղէն ,
Եւ սեւանկար ամպոց ծածկոյթ զաքկունս երկ-
նից սքօղեն .

Արդ գիշերայն ,
Մինչ լուելեայն .
Նիրհէ բնութիւն ,
Օ՛ն մեք համբուն :

Լզմանկական մեր շրթնեկաց ,
Պարզեալ ըզծիրս յերդ նուագաց :
Ի սոյն ատեան , ուր բիւր մատեան ,
Ժամանակին գան յերեւան :

Եւ ուր անցեալն ՚ի հայելոջ ,
Ի ներկային խուսափի ո՛չ :
Օ՛ն մեք զերկնից սքանչելիս ,
Գեղգեղելով ՚ի դրուատիս :

Զայնքս հնչեսցեն յայս վայր յօրհներդ ,
Զգանդ արձանաց տացեն այերք .

Եւ ժպտեսցի Երկինք ՚ի վեր ,
Որ զտիւն արար և զգիշեր :

Որ զյաւիտեանցն զժամանակ ,
Զափեալ տարւոյն ՚ի յեղանակ .
ՊՃնէ դարնամբ զուարթագեղ ,
Պարուց հաւուց ՚ի բիւր դեղգեղ :

ԺԱՄԱՆԱԿՆ

Առ խմբեակն

Եւ զի՞ զուարթ ձայն մանկական ըզծերուն .
ւոյս խըլովի՞ նինջ ,
Զոր քնէած զեփիւռ դարնան յիմ թարթե-
ւանս որփուէր այն ինչ . . .
Մի՞ , մանկունք , մի՞ երգովիք անժամ ըզժա-
մանակս առնէք դնատ ,
Թէ ձեզ դարուն , ձըմեռն յաւէրժ պատէ
զանշուքն իմ ցուրտ ճակատ :

Թողէք յայս վայր ինձ միայնոյ նուիրական ,
Փակել զաչկունո , աւուրք անցցեն և աշնան .
Այլ ձմերայնոյն հողմունք ուժդին թէ ան-

դէն ,
Ի խոր քնոյս ըզծերունիս զարթուոցեն .

Ի յելս Արփւոյն ըերինք սպիտակ իսառն ընդ
կարմիր մինչ շրղան ,
Յայն երբ աչկունքս ողջունեսցեն զԱրեւելեան
տեսարան .

Իցի՞ւ յայնժամ և դուք ՚ի նուագ գեղաւոր ,
Ողջունէիք ըղծամանակս ալեւոր :

ՑՈՑԸՆ

Առ ժամանակն

Խուն ինչ այլ եւս մնասջիր արթուն . . .
Ես աշակից յաւէրժանեցուն պսակեմ՝ ի գլուխս .

Ի փունջ վարդից քաղցրաբոյր ,

Թմբիր յաշացդ այն ինչ անհետ , զՅոյս ընդ
սոցին ՚ի համբոյր ,

Գեղածինազ տեսցես հաշտ ,
Քընարանիդ քո ՚ի դաշտ :

ԱՌ ԽՄԲԵԱԿՆ

Օն երգեցէք ձայնիւ հեշտ ,
Զալեւորին հրաժեշտ :

ԽՄԲԵԱԿՆ

Ալի՞նջ մահաստուեր որոյ թեւովիք սեւաթոյր ,
Ժամանակին աչկունք ծածկինդ վարագոյր .

Երբեմն զուարթ ,
Վեհ ակնարկինք՝ ողջ ՚ի սեաւ .
Յայտնեն մեղ արդ ,
Ըզտիրալին “մնայք բարեաւ” :

ԱՌ ՅՈՅՍՆ

Օրհնեալ ես Յոյս ջահեալ յերկնից ,
Որ ըսփոփես զիրտ տրտմալից .
Եւ զտիրանաց խաւար տնրոյս .
Փոխես խնդից ՚ի յարշալոյս :

Դու հրաժեշտիս ՚ի տխուր ժամեն ,
Մեզ խոստանաս ըզդարձ անդրէն .
Զուարթ աւուրց յորս Քեւ ցնծան ,
Դըրունք Յարկիս ասպնջական :

Ի Յոյսդ անվլթար ,
Ժպտեսցուք մեք ՚ի յար .
Զի ուխտեմք մընալ ,
Ի գիրկդ հիւրընկալ :

Քեւ առցուք խրախոյս ,
Քեւ մեք ջահալոյս .
Քեւ առցուք խրախոյս ,
Ովքազրիկ մեք Յոյս :

Ի ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ

ՏՐԴԱԾԱՅՑ

ՅԵՏ ԲՈՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՍԱՍԱՆԵԱՆ

Յազատն ՚ի վեր ՚ի Մասիս ,
Արիք որդիք Հայկեան .
Յրուեալք ՚ի մի խումբ պարու ,
Բառից հողմոց փող աղդու՝
Յաստուածախրախոյս ձայն :

Սախնի կամար բազմերփեան ,
Ահա պատի զնովլաւ՝
Ամպրովայցդ մըրըրկաց ,
Հաշտարան պատերազմաց .
Տարփալին ցոլացաւ :

Զայն որոտաց ձայն ահեղ ,
Խորանաձեւ յարկէն .
Արիագունդ տուն Հայկայ ,
Զտապալեալ գահիդ արքայ .
Վերականգնեմ անդրէն :

Երդուեալ յաղեղն երկնածիր ,
Բարձի զբաղդ ձեր ՚ի միտս .
Թաթ ձեր յեթեր սըլացաւ ,

Հակառակորդըն սուզաւ .
Վայր սանդարամետս :

Դիւցաղանց պար թորդոմեան ,
Տըլբազգեաց յ'եղիսեանս .
Ըզըրթագոյն դիմաց մէգ ,
Յաստեղաց բոց վառին շէկ .
Յաւետեաց հրաւիրանս :

Արդ իմ արի սպառաղէնք ,
Տուք կայթս հսկոյաքայլ .
Դաշտք ՚ի սրդինձ բոցացին ,
Լերինք ՚ի նշցլ շլասցին .
Զոկատիցդ , ՚ի զեռալ :

Ահա ձեզ Հայկ երկնաձեմ ,
Հայր ձերում բանակի .
Ասպարափակ հովանեաւ ,
Զձեօք ՚ի բարձանց փարեցաւ .
Անթափանց նիդակի :

Խումբ պար առեալ զարքայիւ ,
Զօրավարք Արամայ .
Բոլորեցէք համերամ ,
Պսակ փառաց անթառամ .
Կեցցէ Տրդատ մեր արքայ :

Բ Ն Ա Կ Ա Ն Օ Ր Է Ն Ք ԿԱՐ

ԱՇՄԱՐՏԱՆՄԱՆ ՊՏՈՒՂ ԵՐԵՒԱԿԱԾՅՈՒԹԵԱՆ

Յաւուր միւրմ մէկ քարահատ ,
Գնաց գործիքով յանապատ .
Որոնելով՝ գտաւ մէկ քար ,
Որ վասն արձանի էր յարմար :

Ակիզբն արար նրան տաշել ,
Այս կողմից միւս կողմքաշել .
Երբ որ քարըն յոյժ նեղացաւ ,
Կամաւ Տէրէն լեզու ստացաւ :

Ասաց քարհատին , ՚ոլ տգէտ ,
Ի զուր են քեզ կոչում վարպետ .
Ընդէր ես չարչարում դու զիս ,
Ինձանից ի՞նչ շինել կուզիս :

Քարհատն տուաւ պատասխան ,
Թէ ՚ոքան որ արարածք կան .

Ամենեքեան են պարտաւոր ,
Լինիլ աշխարհին հարկաւոր :

Իսկ դու անկեալ ես աստ անշահ ,
Իբրեւ յամառեցեալ ադահ .
Աստուած ՚ոչ ստեղծ անշահ բան ,
Որ յաւերժ անպիտան մնան :

Վասն որոյ՝ երբ որ քեզ տեսայ ,
ինքըս ինձ խորհիլ սկսայ .
Որ քեզնից մէկ արձան շինեմ ,
Քաղաքի հրապարակն գնեմ :

Յայնժամ քարի պէս անլեզուն ,
իբրեւ լուսաւորեալ գիտուն .
Ասաց . յիմար , գնա բանիդ ,
Զուր նեղութիւն մի տար ջանիդ :

Առաջ քեզ շինի պիտանի ,
Դու ես գլուխ անպիտանի .
Քանզի արարածք ամենայն ,
Իրանց նախկին դրութեան կան :

Միայն մարդըն իւր չարութեամբ ,
Խսկն ասեմ , յոյժ տգիտութեամբ .
Յաւէտ խոտորնակ հակելով ,
Բնական օրէնքըն քակելով :

Ստեղողըն ստրջացցց ,
Իւր երկար կեանքը կարճեցցց .
Նախ կապրէին ամըս հաղար ,
Այժմ հարիւր ամ էլ դժուար :

Թէ մարդն կեանք ունիլ կարէ ,
Վասն զի միտքըն տկար է .

Քարահատն՝ երբ այս լոեց ,
Քարին աղաչել սկսեց :

Թէ արի , ինձի ովորմի՛ր ,
Ասածներիդ միտքը պատմի՛ր .
Միթէ մեր կենաց կարծութեան ,
Պատճառն է օրէնքն բնական :

Այս , պատասխան ետ քարն ,
Մարդից խելօք է տավարն .
Կամ իւրաքանչիւր անքանն ,
Թռչունն՝ ձուկն՝ գաղանն :

Տարին մէկ ընդ իդականի ,
Պտղաբերութեան սէր կանի .
Խոկ դուք գարձուցիք զայն 'ի խաղ ,
Թէ ծեր և թէ տրղայ մատաղ :

Գիշեր՝ ցերեկ միշտ անդադար ,
Նրանով էք անում մադար .
Ենքան ձնշվում էք՝ թալկանում ,
Մինչ ձեր նիւթըն զուր է դառնում :

Մին պտուղ որ ջրից լինի ,
Նորա կեանքըն ի՞նչ կու լինի .
Տասն . քսան կամ երեսուն ,
Քառասուն , յիտուն կամ վաթուն :

Ահա տեսե՞ր , որ ազգ մարդկան ,
է անբանից գլուխ անբան .

Իսկ դու կամիս զիս տաշելով ,
Յայսկցոս յայնիցս քաշքաշելով :

Կանգնել հրապարակի մեծ արձան ,
Որ ինքը ես կոճզ անսփառան .
Լաւ նայիր սերմանահանին ,
Տես՝ ողբան զգաստ է բանին :

Որ միշտ ցորենի լաւերն ,
Կընտրէ , ոչ թէ որդնակերն .
Վասն զի սերմըն որդնակեր ,
Ո՛չ կարէ լինիլ պաղաբեր :

Յայնպէս թու լայեալ նիւթ մարդկան ,
Պտուղ կուտայ նուաղական .
Զի լրացած հարիւր տարին ,
Կը մնայ կենաց ճանապարհին :

Թէ կատարէք կարգն բնական ,
Կապրէք որպէս Մաթուսաղան .
Սէյեադ ՚ի զուր մի բարբանչել ,
Մարդից ի՞նչ կամիս պահանջել :

1858 մայիս 25

Խ Վայոց Զորն Հայոց

ՊԱՆԴԱՒԽՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Սուաղեալ կենաց իբրեւ յոյս ,
Մութ և տխուր ես ո՛ կցս .
Ել ել լուսին , ո՛հ և դուն ,
Սիրտ մի ունիս զգայուն .
Ազգ մի թշուառ Հայրենիք ,
Որ քող առեր ես զամպիկ :

Բնութիւն գեղսցդ երաժիշտ ,
Քեզ աստեղաց հցլը նաժիշտ .
Ի'անհուն սիրուն ժըպիտ մի ,
Կարգեց դշիսց զքեղ երկնի .
Ցօղէ նշոյր տիրանոյշ ,
Պանդուխտ հոդւցոս ցաւոց բոյժ :

Ո՛հ փշրեցան սիրտս ու քնար ,
Ես ալքեզի պէս զաշխարհ .
Պանդուխտ քայլով չափեցի ,
Ցաղկունք ծրին սոսկ քեզի .
Զեկաւ զեփիւռ մ'անուշիկ ,
Շոհել իմ դէմքս յուսալիք :

Հող մ'ունէի Հայրենի ,
Գըրախտ չքեղ աշխարհի .
Աւերակացն արդ պահպան ,
Քիւրան և անոր հրացանն .

Ցուցուր ժանտից , ո՛լուսին .
Զաղիք ոսկերք վասակին :

Ազգ մ'ունէի այն չայն էր ,
Որ երկրիս վրայ տարուբեր .
Կ'երթար օտար ազգերէն ,
Մուրալ լեզու և օրէն .
Լուսին , ցուցուր Դու հայուն ,
Փառքն իւր նախնեաց շիրմերուն :

Սիրտ մ'ունէի , ան կոյմն էր ,
Որ իմ հոգիս էր գրաւեր .
Ծաղկէ հասակ ծաղկի դէմք ,
Հուր աչքն առին շիրմաց վէմք .
Մեր պանդուխտն ալ , լուսին ,
Դու այցելու եւ շիրմին :

Ա. Հերման

Ա.ՔԼՈՐՆ ԾՆՍԻ ԶԱ.ՔԼՈՐ

Ի հանդէպ «Ա՛խ , Ցովհաննէս վարդապետ .
Բնչ անեմ ձեր աքլորին » յԱշըգ Շիրինէ ասացելոյն :
Կստիր , Շիրին , առեմքեզ . մէկ օր մեր տան
թարքումը ,
Մէկ Ա.Համաւուրք Զարեցի հին գրքերի կար-
դումը .

Էս պատմութիւնս կարդացի աքլորների վար-
քումը ,
Ծափ զարկի ծիծաղեցայ զարմանք մնացի աք-
լուին :

Բայց ինձ հաւատա՛ Շիրին , բովանդակ մէջ
աշխարհին (¹) ,
Բաց յԱսաուծոյ՝ մարդ չգիտէ աքլորիս ծնած
տարին (²) .

Ագամ երբ որ ստեղծաւ , սա տասնուհինդ
տարուան էր ,
Նշյըն երբ տապան մոտաւ , սա փղից մեծ հայ-
վան էր :

Աշխարհակի շինութեանն հազար սա նարդի-
ւան էր ,
Մովսէս գրեց , հաստատեց թիւ ու տարի աք-
լուին .
Յիսուն տարին մէկ անդամ նստած տեղէն կը¹
իսպար ,
Կուկլուկուկու կանչած ատեն՝ երկինք գետին
կը դողար .

Ովկիանոս ծովի մէջ ծընկներէն ցած կ'լողար ,
Ահագին էր տեսութիւնն զարհուրելի աքլորին :

(1) և (2) ամենայն տողին վերջնութեն կրկնեա զայտոսիկ տողաւ

Տեսքն սիրուն , գեղեցիկ , ոսկեթել զումաշի
պէս ,

Փառք ու պատիւն աւելի Մըսըր նստած Փա-
շի պէս .

Պոչումը կա՛ր գերաններ՝ Սօղանլուոյ մէշի պէս ,
Բոլոր գաղանք՝ անսառւնք էին գերի աբլորին :

Աւուր մէկը չափեցի կանդնած աեղէն գար
՚ի վար ,

Ոտէն մինչեւ կտուցը երեք վերստէն աւել էր .
Քըձէ՛ք ըրած ատենը , սարեր՝ ձորեր կ'աւերէր ,
Խելք չեր հասնիր հաստափոր՝ խոր ծերունի
աբլորին :

Աբլորիս գլխի վրայ քիրած ու քար հանեցին ,
Տասն տարի բանեցան հազիւ մէկ բերդ շնե-
ցին .

Կակարթի քեարթերումն մէծկած թօփեր հա-
նեցին ,
Վայ կու գար էն բերդին որ չեր խոնարհիլ աբ-
լորին :

Փարումը՝ թէլցու էին , մէծ քեարվանն էր
Խանի պէս ,
Կիսէն շաաը մնում էր խարաբա վրանի պէս .
Ուռների հաստութիւնն էր ձիթհանքի գերանի
պէս ,

Ոմեն բանն էր կարգէ գուրս այս անձոռնի
աբլորին :

Աշխարհս երբ որ բաժանեց մեծ թագաւորն
Վաղարչ ,

Աբլորս՝ ոտով գլխով վանքին ելաւ բաժին մաս .
Էջմիածնայ ամբարից , Ասունծոյ օր , Ճաշէ Ճաշ ,
Կուտ կուտային ութ սօմար խաշած գարի աբ-
լորին :

Երբ որ ինձ նոր վարդապետ , տարան ձեռ-
նադրեցին ,

Գիր՝ կտակով միաբանք աբլորս ինձ յանձնեցին .
Երբ Մկրտիչ վարդապետը Տնտեսապետ կար-

գեցին ,
Եատ ժլատ էր , վայ եկաւ ծեր խղճալի աբ-
լորին :

Աբլորս այսպէս քչակեր քանի մ'տարի ապ-
րեցաւ ,

Ամսէն աւել թեւ կախած՝ կուտ ու ջրէն կըտ-
րեցաւ .

Յանկարծ այս առաւտօտուս չոռոտեցաւ՝ սատ-
կեցաւ ,

Քիչ մնաց՝ որ ասէի , Տէրն ողորմի աբլորին :

Շուտով մեր սպասաւորիք հարիւր մշակ բըռ-
նեցին ,

Ամենքն առան մէկ մէկ ու թ փըթանոց սուր
կացին .
Մինչև հիմա հազիւ թէ յստակեցին՝ ջարդեւ
ցին ,
Կշռեցին , հազար փութ եկաւ կաշին աքլորին :
Բժիշկներն ինձ ասացին . աքլորէն ով որ ուտէ ,
Համ ծերութեան , համ ցաւի ամեն կերպով
օդուտ է .
Միտք արի յիմարի պէս , թէ չ'առնեմ ինձ ա
մօթ է ,
Կանչեցի միաբանից անփորձ ճաշի աքլորին :
Առաւօտէն մէկ մշակ ձեռքը սուր սաթը մը
առաւ ,
Աքլորէս մէկ հօխա միս ծեծելով հոգին ելաւ .
Պէտք էր՝ որ քոֆթա լինէր , վերջը չոր կաշի
դարձաւ ,
Բարկութենէս քիչ մնաց՝ որ թքէի աքլորին :
Վանիքի աշուն ասացի . եահնուցու լաւ միս
հանէ ,
Ասաց . էն լաւ կտորը խիստ թթուած ու տըա
համ է .
Էս էլ կացին չի կտրէ , ակռայ Էրբ կարնայ ծամէ ,
Վախտին ուրիշ միս ճարէ , յոյս մի անիր աք
լորին :

Յշսս կտրած աքլորից՝ ոչխար ու դառ մոր
թեցի ,
Բովանդակ միաբանից ճաշ տուեցի , ճամբեցի .
Դարձայ՝ տխուր նստեցայ , շատ բարակ մտա
ծեցի ,
Թէ աշխարհումն կայ արդեօք , մարդ արժանի
աքլորին :

Միտքը ընկաւ , որ ես քեզ դառ խոստացեր
եմ , Շիրին ,
Արի՝ դառի փոխարէն հաճոյ եղիր աքլորին .
Կաշի տնւր դաբբաղներին , պօլոճիկն աթտարին ,
Միտք ծախէ՝ սապօնչոց , հախէն արի աքլորին :
Ա. Պ. Ա. ՀԱՅ . ԿԱԹՈՒՆԻ

ԱՊՏ ԻԻԼ ԱԶԻԶ

Նուրու ֆէրրի միհրումահըն ,
Բույի մայի Խաքի բահըն .
Էյ Շահինշահի օէրէմքեար ,
Սատէլէթ տիր պարի կեահըն :

Օլուու կէ մնիւլէր քիւշատէ ,
Խալքի ալէմ հէփ ոէֆատէ .
Զէյլ ու զինեթին կէօրիւրէր ,
Սայէլի պէհանէտ ֆէզատէ :

Պաքս իտէր կէօքտէ մէլէքլէր ,
Միւսթէձապ օլտու տիէքլէր .
Իշպու տէվրի նէվզուհուրի ,
Կէօրմէմիշ չէշմի ֆէլէքլէր :

Եւ չէհի սահիպ աթայա ,
Մաղհէրի թէվփիդի ալեա .
Իտէր սիր ըուզբն հէզար սալ ,
Եումնիլէ հազրէթի Մէլլա :

Նագարամ

Պուլտու տէվրի էմնիւ էման ,
Մայէյի լութֆուն'լա ճիհան :

Յորդորակ

Եւ Խիւտավէնտի Ճիհան ,
Վէյ չէհին շահի զէման .
Էրմէնիան միլլէթի ,
Լութֆուն իլէ շատիւման :

Աւաղմէշյաի խօշ նէվա ,
Հէմչիւ պիւլպիւլ տէր հավա .
Փիւր թէրէննիւմ խլէ մէք ,
Արդու իլէտիք Շահա :

Ճանի ալէմսին , սանա ,
Ճանըմըզ օլսուն ֆէտա .
Հիւսնիւ էնզարըն պիզէ ,
Քիմիայի պի պէհա :

ՅՈՐԻՆԱՑ Հ. Դ.

ԵՐԳԵԱՑ Ա. Թ.

ՅԵՐԿՐՈՐԾ ՑԱՐԵՒՆՈՐԾ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԽԵԶ ՄԱՅԻՍ 24

Ողջցն քեզ ՚ դաշտ և սիրուն ափունք ,
Ուր այսօր սիրով խմբին Հայկազունք .
Հարց Հայաստանեայց սրբազն աճիւնք ,
Թո՞լ ցնծան Հայոց 'ի սուրբ միութիւն :

Ճեք Հայաստանի եմք մեք զաւակներ ,
Հայեր զձեզ հնս հնս կոչողն է Աէր .
Եւ Հայրենիք սուրբ Հայրենիք :


Ճրեշտակն Հայկազնց ,
Հոս կը սաւառնի .
Յառաջ , պատկաց ,
Ճակատք արժանի :

Սահմանադրութիւն ,
Սահմանադրութիւն .
Յորչափ մնայ երկիրս և դու ,
Կեցցես :

Առ հայրենեաց սէր ,
Որդիք անձնանուէր .
Ի շնութիւն տանն Հայկազանց ,
Կեցցեն :

Ոգին միութեան ,
Որ զմեղ միաբան .
Հոս գումարեց սիրոյ հանդէս ,
Կեցցէ :

Խան ԶՈՐԱՊԵՏԱՆ



ՄԻՈՒԹԻԻՆ

Ի ԶՈՐՌՈՐԾ ՑԱՐԵՑԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
Ո՛չ զուարթ գարուն , ոչ օր մի սիրուն ,
Եկաւ ու պարզեց մեղ այդն Հայութեան .
Որ գեղածիծաղ ժպտէր ինդադայն ,
Քան սուրբ արշալոյս Սահմանադրութեան .

Որ առաւօտեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն :

Ո՛չ Արարատայ աւերակներէն ,
Սիրավառ արեւ ծագեց կենսական .
Ո՛չ Մասիս հնցած ծերուկ ծոցերէն .
Քան զանբիծ արեւ Սահմանադրութեան .
Որ ելաւ ծագեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն :

Յան արիւնաներկ վայրերն ուր մէկիկ ,
Մէկիկ անկան փառօք Հայոց ազգութեան .
Ո՛չ շնչեաց հովիկ մի սրտազովիկ ,
Քան զանցը զեփիւռ Սահմանադրութեան .
Որ հեշտիկ վչեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն :

Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ ,
Որ ՚ի սըդապատ հովիտն Աթինեան .
Ո՛չ երգեաց բնաւ թռչնիկ մի զուարթ ,
Քան սիրուն սոխակ Սահմանադրութեան .
Որ իջաւ երգեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն :

Ի պաղուկ լերանց ձիւնապատ ծայրէն ,
Զիջան սոռուակներ արծաթանման .
Ո՛չ վճիտ գետեր հեզիկ խոխոջէն ,
Քան զովուկ նեկատար Սահմանադրութեան .
Որ վազեց յորդեց Հայոց սրտերուն
Սէր և Միութիւն :

Գարուն է եկեր Հայութեան ՚ի դաշտ ,
Ծլեր ու ծաղկեր Սէրն ու Միութիւն .
Ում Աստուած վերէն ժպտելով ՚ի հաշտ ,
Տուաւ պարզեւեց Սահմանադրութիւն .

Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն
Կեանք ու զօրութիւն :

Ա. Հ. Ֆէլիքսն

ՊԱՐԵՐԳ

Ո՞չ ի՞նչ անուշ ի՞նչ գեղեցիկ ,
Մեր Հայրենեաց զեփիւռիկ .
Ենէ զուարթ մեր սրտերուն ,
Տալով աշխայժ զօրութիւն :

Առ ի՞նը կոչէ զմեզ Հայեր ,
Գդուել յիւր ծոց ծնելասէր .
Պար խմբելով երթանք լեռ ձոր ,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր :

Հոն պարզ վճիռ և գեղեցիկ ,
Մեր Հայրենեացըն աստղիկ .
Հորիզոնէն արդ բարձրացած ,
Կուտայ Հայոցըն յոյս փառաց :

Անոր ուղղենք արդ մեր աչեր ,
Անոք վարուինք ովլ Հայեր .
Պար խմբելով երթանք լեռ ձոր ,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր :

Ա. Գ. Գ. ՓԱՓԱԶՅԱՆ

→→→○←←←

ԳԱՐՈՒՆ

Ո՞չ ի՞նչ անուշ և ի՞նչպէս զով ,
Առաւօտուց փչես հովիկ .
Ծաղկանց վրայ գուրգուրալով ,
Եւ մաղերուն կուսին փափկիկ .
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց ,
Գնա անցիր սրտէս ՚ի բաց :

Ո՞չ , ի՞նչ աղու և սրտագին ,
Ծառոց մէջէն երգես թռչնիկ .
Սիրոյ ժամերն ՚ի յանտառին ,
Ըզմայլեցան ՚ի քո ձայնիկ .
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց ;
Գնա թռի՛ր սրտէս ՚ի բաց :

Ո՞չ , ի՞նչ մըմունջ հանես վոտակ ,
Ականակիս և հանդարտիկ .
Քու հայելոցդ մէջ անապակ ,

Նային զիրենք վարդն ու աղջիկ .
Բայց չես վտակ իմ հայրենեաց ,
Գնա հոսէ՛ սրաէս ՚ի բաց :

Թէպէտ թռչնիկ և հովի Հայոց ,
Աւերակաց թռչին վերայ .
Թէպէտ պղտոր վտակն Հայոց ,
Նոճիներու մէջ կը սողայ .
Նոքա՝ հառաջք են Հայրենեաց ,
Նոքա չերթան որտէս ՚ի բաց :

Մ. Պէտականեան

ԵՐԳ

Ա/Բ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ողջն ընդ քեզ Հայաստան ,
Մեր դիւցաղանց գերեզման .
Ողջն Հայոց թագուհի ,
Պատեալ փառօք հայրենի :

Երկինք Խրկէ Քեզ հրեշտակ ,
Բիւր վարդք ծըլին ոտքին տակ .
Իւր մէկ նայուածքն երկնագեղ ,
Քու արտասուացդ ըլլան դեղ :

Ո՛չ ի՞նչ անուշ նըւագներ ,
Պիտի հնչեն սոխակներդ .
Երբ քու ձակատըդ պսակէ ,
Ծաղկեռնեան դափնիե :

Մանուկն յօրրոց կը խայտայ ,
Եւ ծերունւցյն սիրտ ցնծայ .
Երբոր նշոյլք կը ժպտին ,
Հայ աստեղաց նորածին :

Ո՛չ շիրմացդ քով ալ հանգչի ,
Անմահութեան վեհ ոգի .
Մինչ զուարթունք ՚ի բարձանց ,
Պսակս սփռեն Հայկաղանց :

Փափուկ մատունքդ թող դրոշմեն ,
Այն տառերով ոսկեղէն .
Մեր սրտին մէջ “ Մէր և Լոյս ” ,
Մեր հոգւոյն մէջ “ Կեանք և Յոյս ” :

Քու վըշտերուդ փոխանակ ,
Երկինք կանդնեց յաղթանակ .
Քու վէրբերուդ ալ դարման ,
Քեզի օրէնք չնորհեցան :

ԱՄՐԱԿԱՄ Յ. ԱԹՎԱԶԵԱՆ

Ա.ԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ովքաջազունք , ձեզ հրաւեր ,
Փութալ առնուլ զմերկ սուսեր .
Եւ հաստատել մեր Հայրենեաց ,
Գահ սրբազան միշտ անմռոաց :

Ազատութիւն մեր Հայրենեաց ,
Ազատութիւն մեր խեղճ եղբարց .
Ազատութիւն զեզ , վառ սրտեր ,
Ազատութիւն դեռ չեք լսեր :

Երկին , Աստուած տան հրաման ,
Ահ , հրաման ազատութեան .
Շուտ սթափինք , զինուոր գրուինք ,
Եւ անվեհեր պատերազմինք :

Լեռներ , ձորեր , Մասիս անգամ ,
Ազատութեան կուտան պատգամ .
Հապա երթանք 'ի Հայաստան ,
Քաջ նախահարց հանգստարան :

Բաւ է այսչափ , ցած գերութիւն ,
Օն , ովք քաջեր , 'ի յաղթութիւն .
Երկինք , Աստուած մեզ են պաշտպան ,
Ազատ , ազմտ , մեր Հայաստան :

ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԿԵՍՅԱՆ

ՄԱՐԾ ՀԱՅԿԱԿԱՆ

Յառաջ , յառաջ . — Ովք Հայկազունք ,
Յառաջ , յառաջ . — Ովք քաջազունք :
Օն , դիմենք շուտ — 'ի Հայրենիս ,
Եւ գունդագունդ — ընենք դերիս :
Հայկեան ցժն — Առած վահան ,
Եւ կրօնքն — Նաև պաշտպան :
ԿԱՐԱՊԵՏ Դ. ՏԱԿԵՍՅԱՆ

—

ՄՈՒՍԵՅՆ

Ոսպատերեւ յեցեալ նոճցս 'ի ստորառ ,
Զաղիս Հայոց լարեալ 'ի քնար տիրանուեր .
Աջն իմ 'ի լար , աշկունքս 'ի վեր մերթ յարօտ ,
Ցերք հնչեցից 'ի վանդ ողբոցն իմ զայեր :

Ոհմ ժպտեսցին աչկունք բաղդին յիս արդեօք ,
Քէ որպէս ցարդ՝ նոյն և յապայն անողոք .
Երբ ծագեսցէ երջանկութեան քաղցր արեգ .
Եւ փոխեսցի տիրանըւագ ողբս յօրհներք :

Ե՞ր ոչ , լուսնեակդ . վառ 'ի վառ ,
Կիսով յամաց գոլացեալ .
Եւ զերթ կանթել իւղասպառ ,
Մերձ 'ի խաւար գոգ շիջեալ :

Ոհ միայնիկ և մնջիկ ,
Ողբամ ըզբաղդ խաբուսիկ .
Եւ թէ լրուէ իմ հագ ագ .
Լսեմ ձայնիս զարձագանգ :

Հեծէ սրտիս իմ խոռոշ ,
Մատունքս 'ի լար հըպին ոչ .
Այլ զի՞ տեսիլ անսովոր . . .

(առանց եղանակի)

Մինչ կամ աստին մենաւոր :

Աչկօնքս արդեօք զիս խաբեն ,
Այլ ՚չ , դոքա հրեշտակք են .
—Ողջն Երկնից զյգ տատրակք ,
—Ողջն կրկն աղաւնեակք
Սէր են ԳՈՒԹ :

—Ողջն , հրեշտակք ողբերգակ ,
—Ահա՝ դու չես միայնակ ,

Մի արդ խռովիր , չեմը խաբուսիկ երեւոյթ ,
Նա քեզ ծանօթ . Աէր իմ անուն , իսկ սա Գութ .
Կաց դու պահ մի , տըխուր ողբոյ տուր տւարտ ,
Լուր զոր երգեն զաւակք Երկրին , ուր կաս արդ :

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

1. Ով մեծասքանչ դու լեզու ,
Ով հեշտ բարբառ մայրական .
Փափկահնչիւն բառերուդ ,
Նման արդեօք այլ տեղ կան :
Դու նախ ինձ հնչեցիր ,
Նախ սիրոյ , ՚հ՛ , հեշտ խօսքեր .
Այն նախ գըեզ թոթովելս ,
Դեռ իմ մոքէն չէ ելեր :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
Կեաց անսասան , կեաց յաւէտ .
Կեաց միշտ լեզուդ Հայկարժան ,
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :
2. Ի՞նչ դառըն վիշտ է սրտիս ,
Երբ օտար տեղ ու լեզու .
Բռնի իրեն զիս քաշէ ,
Մրտէս արիւն կը հեղու :
Ո՛չ զայն օտարն ես սիրել ,
Բնաւ չեմ կարող 'ի սրտէ .
Չէ այն չէ քաղցր իմ լեզու ,
Որ սիրով զիս կ'ողջունէ :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեաց անսասան , կեաց յաւէտ .
 Կեաց միշտ լեզուդ Հայկարժան ,
 Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

3. **Լ**եզու համակ սիրաշարժ ,
 Քանի ճոխ պերճ ու պայծառ .
 Մինչ կը հնչես դուն քեզի ,
 Սրտերն ամեն դողացար .
 Հնչէ՛ հնչէ՛ յաւիտեան ,
 Վեհ՝ դիւցազանց պերճ երդ դու .
 Թոթուէ փոշիդ խոր մութէն ,
 Ել երեւան պերճ երդ դու :

 Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեաց անսասան , կեաց յաւէտ .
 Կեաց միշտ լեզուդ Հայկարժան ,
 Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

4. **Յ**աւերժական Սուրբ գրոց մէջ ,
 Կեաց միշտ նորէն ու նորէն .
 Կշռեալ անոյշ քու տողերդ ,
 Թող ամեն սիրտ տրծարծեն .
 Շնորհ ունել Արարէն ,
 Կամ պէտք ըլլայ աղօթել .
 Երթունքս սրտէ բորբոքած ,
 Կաղաղակէ անարդել :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
 Կեաց անսասան , կեաց յաւէտ .
 Կեաց միշտ լեզուդ Հայկարժան ,
 Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

Ի ՎԱՀԱՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Որդիք Հայկայ , որդիք փառաց ,
 Զարդիք կոչէ ըզձեղ Աստուած .
 Տեսէք Մասեաց ՚ի գլուխ ազատ ,
 Ըզբաղդ Հայոց նորահըրատ .
 Աչք ձեր ՚ի գյոն լուսացին բոց :

Սիրտք վառեսցին սիրտք Հայոց ,
 Եւ միւեսցին կուռ բազուկք .
 Քան ՚ի հնոց գեղարդունք ,
 Յաղատութեան ասպարէդ .
 Թափել շանթիս սաստկագրէժ :

Օ՛ն փողեցէք . Ելէք ՚ի դպրդ ,
 Աստուած է ձեր առաջնորդ .
 Լուայք , փառք ձեզ կարդան հրաւեքք .
 Տեսէք անդուստ հարց ստուեքք .
 Ոնփրէք առ ձեզ կտուկառեն ձեռու :

Որդիք , խուլ հարցոր էք յաղերս ,
Արիք ընդ ձեզ դաշնաւոր .
Արդարութիւնն է հըզօր ,
Եւ զայնալիձն առեալ հայկ .
Էջ քաջորդւոցն ՚ի բանակ .

Օ՞ն . . . Սք ՚ի հայս մըտին զերդ Բել
Ուսան սա վայր է անել .
Ըստուր մահու ած շուրջ պահպան ,
Տէր յԵղեմեանն հայաստան .
Ասէ . Ո զայն կոխէ սահմանս ,
Մի ողջ դարձցի յիւրն ՚ի վանս .
Որ վան հայոց ած երկաթ՝
Ինք պնդեսցի յայն կաշկանդ .
Եւ զոր կոխել գայր անահ ,
Համբուրեսցէ թոպամահ .
Արեք իմ քաջք . որդիք Հայկայ ,
Վրիժուց ձեր օր հասեալ կայ .
Երկինք զինեալ են՝ դատել հուրբ ,
Պըզծողսն ըզձեր երկիր սուրբ .
Թէ զձեր խնդրեն արդ տէգ , աղեղ ,
Տնեք , թափեցէք կարկտի տեղ ,
Յասումն արդար է ձեր Հայք .
Անցեալ գոչէ , Մի դըլայք ,

Ազատութեան օր սա ձեր .
Նոցա՝ անտիւն հաս գիշեր .
Արիք , ծաւալ տուք բարձր յայեր ,
Քրիստոսապահ ըդրօշ ձեր .
Զէնք ուր Փրկչին նշան կայ կուռ .
Մի եւս անկայի կոր յաթուր .
Օ՞ն զայդ ՚ի վեր ձըդէք յերկինն
Երդումն տուք ահագին .

Մի ձեռքդ իջցեն՝ մի սուսեր .
Դարձցի հանգչել ՚ի յազդեր ,
Ցորչափ դեռ շիթ մի վերջին .
Մընայ յերակս ոսոխին :

Համա իմ քաջք , օ՞ն անդր յառաջ ,
Ձեզ հովանի կայ սուրբ Խաչ .
Բըթեսցին յայն տէգը և փըքին ,
Զոր լարեսցէ թըշնամին .
Վաշ , սց հասին փառք ՚ի վսեմ .
Թըռչիլ գահէդ յերկնից սեմ ,
Ահեակ ոտամբ գլուխս ոսսիս .
Թոպել գլորել ՚ի դժոխս ,
Մուծանել զաջն յերկնից սահման .
Ազատ թողեալ ըզձայաստան :

Խորէն Վարդաքան

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

ԶԵ՞Ն օրերս մեզ օր խնդութեան ,
0ն եկէք մեք միաբան .
Երբ արդէն եմք բազմած սեղան ,
Երգենք զարնենք նուադարան :

Կազմենք երգոց ժողով սիրուն ,
Նուագենք գինիս այս պաղպաջուն .
Տես սիրուն սա փրփուր ,
Ընկեր դուն ալ լեցուր :

ԱՌ , բարձրացուր գինւցդ բաժակ ,
Ահա իմ ալ բարեկամ .
Զարնենք բաժակ տանք երկար կեանք ,
Սեղանակցացս հազար տմ :

Զուարթութիւն սա կը բերէ ,
Գինիս տըխրած ոգիներէ .
Մարդեկ կընէ զուարթ ,
Աղէ ընկեր խմէ արդ :

Տեսար ուրեմն , խնտումերես ,
Թախծութենէդ ելար արդ .
Գինիս կ'ելլէ ուր ասպարէլ ,
Խըրախութեանց կըլլայ զարդ :

Հապա մանուկ լեցուր նորէն ,
Սեղանակցացս համօրէն .
Արդ վայել է խնդալ ,
Ընկեր պարպէ մէյ մ'ալ :

ՏԱՃԿԵՐԷՆ

Պիր թագըմ սատէ եիւրէք մուասուն փաքի
սիւպէան ,
Տէր ինամընէ կելտին տէշէրէք եա բահման .
Օլտու ատլի իլէ ալէմհէմէմ Միլէմէն սէրպէսթ ,
Պու նէ ինսափ վէ նէ նիյմէթ վէ նէ լութ -
ֆու ինայէթ :

Կիւն կիպի տօղոսուղու ան հիւսնիւ միւր -
վէթքէանըն ,
Վէրտի ֆէրմանը իլէ ձիւմէ սէզիմէ տէրման .
Էսմիւնիւ շէլքէթինի պի ատէտ իլէ եա
բապպ ,
Տիւնեա տուրտուգչէ , տուրա Տէվլէթի Ա -
լ-0սման :

ՆԱԳԱՐԱԹ

Եէզտանի սիւպհան ,
Սէն իյէ իհասան .
Եաշասըն պինլէր ,
Ա.ՊՏԻՒԼ Ա.ԶԻԶ ԽԱՆ :

ՀԱՌԱՋԱՆՔ

Սա տիսուր վիճակ տարաբաղդ Ազգիս ,
ինչ արիւն արցունք կը հոսեցնէ .
Նոր յցս տածող Հայոցս աչերէ :
Սա մեր անողորմբաղդին հարուածներ ,
Քանի սրտառուչ հառաջանքներով .
Ճմլեն Հայ սրտերն , դող տան ու երեր ,
Ով Տէր , բաւ չէին ինչոր մինչեւ ցարդ :
Կրեցինք սուր , ցաւ , աւար ու աւար ,
Ոչ դու հաշտութեան ծիածան զուարթ .
Մեր սուրբ Հայրենեաց երկինք պարզեցեր ,
Եւ դեռ չշնորհած զԱրեւն Հայրենի ,
Կը զըկես զմեզ Աստղէն Հայրենի :
Մէկ սիրտ , մէկ ոգի , ամենքս մէկ անուն ,
Մէկ յցս , մէկ հաւատք կըրող մէկ արիւն .
Մէկ ապադայի և ակնկալու ,
Ինչու չմիանանք 'ի մի յօդ սիրոյ :
Մի զմեզ , Տէր , մի պատմեր անաչառ ,
Կեցուրքու շանթերդ բարկութեան արդար .
Զիրար սիրելու , օդնել իրարու ,
Կուխտեմք աւասիկ ուխտ սուրբ ՚ի սրտէ՝
Եւ խաղաղութեան թող դայ հրեշտակ ,
Միութիւն և սէր պահել ՚ի սիրտ մեր :

ՄԱՂԹԱՆՔ

ՎԱՍՆ ԱԶԳԻՆ

Տէր կեցո դու զՀայս ,
Եւ արա զնոսա պայծառ ,
Կեցո զՀայս .
Զողորմութիւնդ վերին ,
Հաճեաց ձօնել նոցին .
Զի նովիմք մարդասցին ,
Ապրիլ յաստիս :

Ով Տէր մեր , Տէր փութա ,
Զազգ մեր համայն փրկեա ,
Իթշնամեաց .

Կափո զաչս նոցուն ,
Հատ զարմատոյ զբուն .
Եւ զազգ մեր արտասուն ,
Արա հզօր :

Աջողդ համատարած ,
Զազգ մեր արտահալած .
Փոյթ դումարեա .

յԱշխարհ արարատեան ,
Ի վայր մեր ծննդեան .
Ուր այժմէ սեփական ,
Օտար ազգաց :

Ի քո իջեալ տեղի .
Զաթոռ հայրապետի ,
Մեր հաստատեա .
Զերկարութիւն կենաց ,
Հօր մեր աստուածազգեաց .
Շնորհեա պետին մեր հարց ,
Որ զմեղ հովուէ :

Ի Ղ Զ Ա Ր Տ Ի Ս

Տուք ինձ ձերմակ ձախրասըլաց ,
Օդապարիկ երիվար .
Տուք , զի սլացեալ թուեայց 'ի բաց ,
Ի Զքնաղիկն իմ աշխարհ :

Այս սլացայց յիմ Հայաստան ,
Ցերկիր յաւերժ ծաղկազարդ .
Ուր խոխոջան անմահութեան ,
Գետք Եղեմայ ալեզարդ :

Ուր բարձրանաց խըրոխտ 'ի վեր ,
Արարատն իմ որորան .
Ուր հոտ բուրէ խնկանուէր ,
Հոս զուարթարար հայութեան :

Ուր և երբեմն պայծառացեալ ,
Քաջ բանաստեղծք Թորդոմեան .
Քնարօք իւրեանց ոսկելարեալ ,
Գեղգեղէին սրբաբան :

Ո՛հ , ածէք ինձ զիմն սիդաբայլ ,
Սիրտ իմ մաշեալ նուաղի .
Քանի ամբ են՝ զի չեմ տեսեալ ,
Ըղհայրենիս ցանկալի :

Հայաստան իմ , անւրբ Հայաստան ,
Հոգւոյս պայծառ յիշատակ .
Ե՛ր թողէր զիս 'ի բացական ,
Վայրս դառնաշունչ , դժնդակ :

Մաշիմ մաշիմ ես աստանօր ,
Ընդ աստեղօք հիւսիսի .
Հալիմ . . . աւաղ ես չքաւոր
Ո՛հ , Հայրենիք քաղցրելի

ՍԱՀԱԶԻՉԵԱՆՑ

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

Տարի մ'ալ անցաւ ,
Գնաց սահեցաւ .
Ա. Ա. Դ ու Հայ զինուոր ,
Թափառական մնաս .

Յերկիր հեռաւոր ,
Սուդ անմիխթար .
Զքեզ շուրջ պատած ,
Եւ դժբաղդ սիրտդ ալ .
Յուսաբեկ եղած ,
Սուրդ ու քու տէդդ .
Ժանդոտ վար դրած ,
Եւ զօրել արմուկդ .
Տիգիդ յեցուցած ,
Դիր դու Հայ զինուոր .
Քու յցսդ առ Աստուած ,
Վեր վերցուր դու Խոդ .
Տես , ով է կանգնած ,
Առ քեզ կ'ակնարկէ .
Ազատիչն Աստուած ,
Յազմութեան պսակ .
Իւր սուրբ ձեռքն բռնած ,
Առ ուրեմն նիզակդ .
Ոտք ելիր կանգնէ ,
Եւ սրտիդ խորէն .
Անոր փառք խրկէ ,
Վհատիր մի բնաւ .
Քաջ զինուոր դու Հայ ,
Զի այսուհետեւ .
Էն Աստուած գթած ,

Ընդ քեզ է յաւէտ .
Յազգասէք մըցանող ,
Կուտայ քեզ պսակ .
Բոլսր ճգնացդ փառք ,
Ցանկալին ազատութիւն :

Մ. Ս. Յ. ԱՆԴՐԵԱՆՆԻ

Ի ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ՎԵՐԱԴԱՐՁՆ

ՅԵՒՐՈՊԱՅԻ

ԳԵՂԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ

ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶ

ԱՐՔԱՅԻՆ

Տանն Օսմանեան արեւ պայծառ ,
Մեր Շահնշահ Արքայն արդար .
Դայ հասանէ զուարթ դիմօք՝
Ցիւրն ՚ի յաթոռ բազմիլ փառօք :

Անդրէն դարձին թագաւորիս ,
Զքերկրառիթ նաւակատիս՝
Ալիք ալեւաց խրախոյս կարդան ,
Մեզ աւետեն կարկաչաձայն :

ՅՈՐԴՈՐԱԿ

Գոռան թնթանօդք . փայլակին վառօդք ,
Բաբախեն անխւը , կարկաչեն ալիք .
Հնչէ փող սրբնէ , որոտան լերինք :

ՀԵՏԵԻԱԿ

Եւկբէթլու Առւլթան ԱՊՏԻՒԼ Ա.ԶԻԶ Խան ,
Կեցցէ 'ի գահուն փառօք մշտնջեան :

Անտառացան սուինք զօրաց ,
Բանակ ստուար քաջ զինուորաց .
Աւագանին վեմափայլ՝
Յոսկեճամուկ համազգեստեալ :
Թափորակապ և խմբովին՝
Զծովեզերբ գան գումարին .
Միրաք 'ի թնդոջ աչկունք 'ի ծով ,
Զոտիւք վեհիս փարել անձկով :

ՅՈՐԴՈՐԱԿ

Ելէք ընդ առաջ ինքնակալիս քաջ ,
Վեհք աւագորեար՝ արքունեաց կաձառ .
զՏէր մեր բարեփառ ածէք յիւր տաճար :

ՀԵՏԵԻԱԿ

Եւկբէթլիւ . . .

ԵՐԳԵԱՑ Ա. Յ. ՅՈՐԻՆԵԱՑ Յ. Ս. Մ.

Բարձրացն Տէր 'ի յերկափի զփառս Օսմանեան ,
Զօդոստափառ մեր իշխան .
Պահեա որպէս բիր ական :

Պաշտպանեա զմեզ ընդ բաղկաւ Արքայիս
գլթած ,

Ինքնակալ մեր վեհափառ ,
Կեցցէ 'ի գահուն բարեբառ :

ՅՈՐԴՈՐԱԿ

ԱՊՏԻՒԼ Ա.ԶԻԶ ԽԱՆ արքայ բարեխնամ ,
Պասկ Օսմանեան հզօր Պետութեան .
Հատու արա Տէր՝ զսորին սուսեր ,
Բազուկ թշնամւոյն եղիցի նկուն :

ՅՈՐԻՆԵԱՑ Յ. Ս. Մ. ԵՐԳԵԱՑ Ա. Յ.



Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

ԳԱԲՐԻԷԼԻ ԵՐԱՆԵԱՆ

Փու ցուրտ շիրմիդ վրայ ուր վահ , կայ
թողուած ,
Առոյգ հասակդ և որտիդ հուր երկնասլաց .
Զէ թէ միայն սփուենք ծաղիկք մի ձեռքով ,
Զէ թէ միայն արցունք սնհուն ցաւերով :

Ա. Ա. և ձօնենք վշտահար ,
Երգերն անոյշ Քընարին .
Որց փափուկ թելերը ,
Գու հիւսեցիր սրտագին :

Ա. Յ. նըւագներն որ քու բերնեդ սըլացան ,
Երթաւ յողջցն աւերակաց ցիր և ցան .
Լըսեց զանոնք ՚ի դակբանացն Հայրենի ,
Եւ սփոփեցաւ Հայաստանեայց վեհ Ոդի :

Լ սէ զանոնք և գու ալ ,
Մահուան քունէն արթնցիր .
Ա. Յ. քնարին թեւերով ,
Ցանմահութիւն ել թռիր :

Մ. Պէտականակեան

Ա. Ա.

Սիր իՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած ,
Անքուն աչօք կամ ցաւած .
Իմ սիրելոյս կարօտած ,
Զկայ մէկն որ կարեկից .
Քլայ ցաւած իմ սրտիս :

Ո՞վ Հայրենիք իմ սիրուն ,
Ա՛հ , տոչորէ զիս անունդ .
Արդեօք պիտի ըլ տեսնեմ ,
Գու լուսափայլ զուարթ դէմքդ :

Հ առաջանք բիւր ՚ի սրտէս ,
Արտօօր հեղում աչերէս .
Իմ սիրելոյս կարօտած ,
Չեն ինձ երեք մըխիթար .
Ոսկի պատիւ սէր օտար :

Ա. Ա. ես անոր սիրուն զոհ ,
Կ'ընեմ զամենիքն սրտով գոհ .
Միայն թէ յոյս մ'ունենամ ,
Իմ սէրս տեսնել միանդամ :

Մ. Պ. Պ. ՓԱՌԱՋԵՆ



Դ. Ա. Ն. Ա. Կ

Առաջն ներկայացուցման

ՀԱՅԿԵԱՆ ԹԱՑՐԱՆԻՒՆ

ՈՐ Ի ԽԱԱԳԻՒՔ

Օ՛ն մէր նախնի դարուց կարդամք հըբաւէր .
Նախնի դաշնեաց՝ սուրբ ձեռաց հիւս պատիօք .

Մեր հայրենի փառաց մանկունքն անվեհեր ,
Գան յերեւան գեղեցկահիւս գիսակօք :

Գունդ՝ ի գունդ ,
Սիրտք՝ ի թունդ :

Փամանակաց՝ անցից՝ վսեմ կըրթարան ,
Եւ նոր դիպաց՝ նոր զդացմանց կարգադիր .
Ահա մեզ նոր՝ արդ կը կանգնի տեսարան ,
Քէ կըթութեան՝ թէ հաճոյից արդադիր :

Հոս ձայն կուտանք մենք ծաղկալից ,
Հայաստանի սուրբ դաշտերուն .
Եւ կը ցրուի սրտիս թախիծ ,
Երբ հայրենեաց յիշեմք զանուն :

Ով սուրբ Հայաստան ,
Փառաց օթեւան .
Որբ զաւկըներդ հոս ,
Քեզ պիտի ողբան :

Հոս երազ՝ անմահ ,
Քո նախնի փառաց .
Մեզ պիտի վառէ ,
Ի սէր հայրենեաց :

Մայրիկ Հայաստան ,
Փառաց գերեզման .

Որբ որդիբդ՝ այրիդ ,
Հոս պիտի ողբան :

Մէկ մայր մ'ունինք մերն Հայաստան և Հոգին ,
Եղայրութեան սրտերնուն մէջ կը սոնգայ .
Օ՛ն չարադէպ մեր բաղդն ու սէր կաթոգին ,
Հոս միութեան ուժոյն ընենք ենթակայ :

Եւ ձեռք , ջանք ,
Միմեանց տանք :

Ընդհանրական սէրն և հոգին հայութեան ,
Մեղ մուսայից օթեւանիս նուիրի .
Հնչեն Հայ փառք՝ անուն՝ նոր՝ սուր յաւիտեան ,
Նորէն Միսակ , Գեղամ՝ ի կեանս հրաւիրի :

Կը վերածնին հոս ոսկի դարք ,
Հոս տեղ մտքեր կրնան սրուիլ .
Կը շտկուին հոս անկիրթ բարք ,
Հոս և ծիծաղ կրնայ գտուիլ :

Ով սուրբ Հայաստան ,
Քաջաց օթեւան .
Հոսկէ որդիբդ հոն ,
Գիրկըդ պիտի գան :

Հոս ոճ Հայ լեզուին ,
Նոր զարդ՝ ձեւ կառնու .

Կեանկը անմեղ ւ երկինք ,
Կազդեն սրտերու :

Քաղցրիկ Հայաստան ,
Սեր հարց օթեւան .
Ծոցդ որդիքդ որ դան ,
Ե՛ր պիտի ողբան :

Դ. Դ. ԶԱԳՐԱՄԱՆԱՆ



ՄԱՅՐ ՅԱՎԻՇԳԻՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Ի ԲԱՐԵՆՇԱԽ ՕՐ

ԻՆՆԵՐՈՐԴԻ ՑԱՐԵԿԱՐՁԻ

Ա Զ Գ Ա Յ Ն Ո Յ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ե Ր Գ.

Ողջոն քեզ, ով երջանիկ օր,
Որ կը ծագիս մեզ՝ ի յերկնից լուսաւոր.
Քեզ հայկաղունք կըսպասէին մեծայոս,
Ե՛կ տալ նոյն կեանք և լոյս :

Խաւար օրեր, օրեր արեան,
շատ մեր թըշուառ հայրեր ո՞հ շատ ունեցան.
Մեզ երանի, Երկինքը բաժին մեզ տուին,
Ըզքեզ, ով օր կենսածին :

Օր՝ որ՝ ի թեւ բոցափետուր,
Բերեր հայոց ազատութիւն երկնատուր.
Եւ ժանդահար տգիտութեան շըղթաներ,
Մեր ոգիէն խըղեցեր :

“Ամենքդ եղբայր էք հաւասար ո ,
Մեզի պատգամ որոտացիր տիրաբար .
Հայ երակաց մէջ վառեցաւ նոր աւիւն ,
Հալածեցաւ բըռնութիւն :

Մեզ վեհ Սահման բերիր Պարտքը ,
Եւ իրաւունք մեղ ճանչուցիր մեր փառքը .
Արթընցան Հայ ոդիք այս մեծ բառերու ,
Զգալ իմաստ կենսատու :

Հայն ինքըզինք և իւր պատիւ ,
Եթէ զգաց՝ և այն է քո՞ շնորհիւ .
Բարձր զգացմունք , որ նոր իրեն տուաւ յսու ,
Եւ աղդութեանց մէջ խրախսոյս :

Դու ըզթեւեր քո լուսահեղ ,
Տարածեցիր մեր խաւարին մէջ ահեղ .
Լսիր . “Մոռցէք անցեալ ողորմ ձեր՝ պայման ,
Դարձուցէք աչքդ ապագան :

Ապագան ձեզ ծիրանազարդ ,
Ոզոյն կուտայ , յայն նայեցէք ոգեզուարթ .
Լալու սովորած այդ աչուբնէր սըրբեցէք ,
Յուսոյ ձեր սիրտը բացէք :

Ձեր հեծութիւնք բազմագարեան ,
Ցաւոց հովտէդ մինչ ՚ի բարձրեալն ամբարձան .

Զուարթնոց երգոյն մէջ ձեր հառաջ խառնեցաւ ,
Եւ ձեր ՚ի գութ շարժեցաւ :

Ակնարկեց Ն’առ Հրեշտակն Հայոց ,
Աւետաւոր ձեզ իջանել սիրաբոց .
Մէկ ձեռք պըսակ , միւսով բերել լուսազգեաց ,
Ըզդաշնագիր ձեր կենաց :

Հայեր , ելէք զըւարթադէմ ,
Ողունեցէք ըզձեր Հրեշտակ սիրաձեմ .
Նորա թեւեր Մասեաց սարէն ծածանի ,
Հայ ազգութեան հովանի :

Աըրտէդ լըքումը մերժեցէք ,
Հայ ըլլալնուդ պատիւն ոհ լաւ հասկացէք .
Ձեր իրաւունքն է սուրբ , ոգւնզ սիրեցէք ,
Ձեր պարտք վըսեմէ , լըցէք :

Վ եհ Պարտք , ձեր սուրբ Կըրօն պաշտել ,
Եւ Հայրենիք քան զամենայն վեր սիրել .
Իրեն տալ զոհ հանգիստ , պատիւ , մեծութիւն ,
Մինչեւ անգամ զնութիւն :

Հայ կրօնից նշանն է Սէ՛ր ,
Հայ Օրինաց գիրք Մասեան տայ պատուէր .
Օ՞ն դուք Սիրոյ և Միւթեան զնուորներ ,
Զարկէք նախանձն և ըզէեռ :

Խաշակրութիւն մի Հայկական ,
Հաստատեցէ՛ք դէմ անմիաբանութեան .
Ով որ ձեր հետ այս սուրբ մարտին չէ կըցորդ՝
Նա չէ՛ Հայոց ժառանգորդ :

Հայեր , այսօր վըկայ երկինք ,
Ուխտեմք սիրել իրաւունք , Պարտք , Հայրենիք ,
Գոչեմք . Մեռնիմք մեք , բայց կեցցես
ՀԱՅԱՍՏԱՆ
ԿԵցցէ՛ ԱՊՏԻՒԼ Ա.ԶԻԶ ԽԱՆ :

24 Մայիս 1869

Խորէն ՆԳԻԾԿՈՊՈՅ ՆԱՐ-ՊԵՏ



Ա.Ի.Ա.Զ Ա.ՂԲԻՒՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ

ԽՂՃՈՒԿ ԶԵՆ

Ընցաւ տարին , Հայոց էլ փառք ընցաւ հիետ ,
Դրախտի սարէն գարուն յետին բարիեւ ետ .
Կտրիճքն առան զէնքերն իջան տակ հողին ,
Վահս մըր գլխուն սեւ՝ մուր էկաւ էն օրին :

Հայու աչքիեր թող միէզ լան .

Ա՛խ միէզ լան , վահս միէզ լան :

Հայեր՝ գերի էղանք բաղդին անողոք ,
Աստուած՝ հրեշտակ՝ մարդ չ'սիէց մըր բողոք .

Մըր լալերու ձէն ծածկուաւ Տարնոյ տակ ,
Մշու դաշտիէր պահին սրափցո հառաջանք :
Հայու աշըղք թող միէզ լան ,
Ա՛խ միէզ լան , վահս միէզ լան :

Մըր աշխարհի քակվուկ շէնքերու ներքեւ ,
Նստուկ մամ՝ պապ՝ ձժեր մանցին անարեւ .
Նօթի՝ տկլօղ . ախ չկայ տիէր տիրական .
Անդութ քրտու զլմին եղած էնք խուրագան :

Խարիսլ աղբերք թող միէզ լան ,
Ա՛խ միէզ լան , վահս միէզ լան :

Մատղաշ աղջիկն՝ ու հարս հալաւ մի չունի ,
Ու իր մարմին անօրէնին դէմ ծածկի .
Էնպէս դրած ձեռքերն աչից ամըկոտ ,
Գութի՝ Աիրու՝ Ողորմութեան է կարօտ :

Հայ աղջիկներ թող միէզ լան ,
Հայու հարսներ թող միէզ լան :

Կեցէ՛ք՝ Մշու դաշտի քամիք , քիչ մ'կեցէք ,
Մըր ողբաձէն բարիեւն էլ ձըր հիետ տարեք .
Ու իէք ընձնիք ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ կամարից ,
Հոնկուց ըսէք խարիսլ մը Հայ աղբերից :

Սըր արտըսունք սրբիէն թող մըր աչվընուց ,
Քընդի տատէն էլ չըլանք էլ չըլանք :

1874 Մայիս 24



ԶՈՅՆ

ՀԱՅՐԵՆԵԱՅ

Օտար ափունք ցրուած 'ի սփեւու ,
Ով սիրասուն իմ զաւակունքս .
Զեր հայրենիք տրտում տիսուր ,
Զեղ կը դիտէ արցունք յաչկունս :

Իմ տաճարներս սէր կը կանգնէ ,
Իմ նախատինքս արիւն սրբէ :

Ո՛չ այս քանի տարի անցաւ ,
Ուխտեցիք ինձ սէր , յօյս և կեանք .
Ամուշ մըցում , հեռ վիշտ և ցաւ ,
Ա. յու իմ բաժին , այս է ձեր ջանք :

Իմ տաճարներս սէր կը կանգնէ ,
Իմ նախատինքս արիւն սրբէ :

Հնոց՝ ով դուք որ օտարին ,
Փառաց պատուց էք ինկարկու .

Անմահութեան դրոշմ , սէր ազգին ,
Նախնեաց քրտինք ծախած շքո :

Իմ տաճարներս դուք չէք կանգներ ,
Իմ նախատինքս դուք չէք սրբեր :

Կանցնին այսպէս անթիւ օրեր ,
Եւ յաւերակս նստած յերեր .
Իբրեւ այրի հրոյ մատնած ,
Կյոյ յըր օժիտն է անարդուած :

Գոչեմ տաճարս ով կը կանգնէ ,
Իմ նախատինքս ով կը սրբէ :

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ



ԱՐՏԱՍՈՒԻՔ ՀԱՅ ՄԱՆԿԱՆ

Ի ՄԱՀ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՎԱՐԴԱՆԱՅ

ԴԻԻՑԱԶՆԵՐՊՈՒԹԻՒՆ

Լացէք պատանիք և կուսանք Հայոց ,
Սուգ առնու Մասիս , և Հայոց լեռներ .
Զի ահա մահուան անդութ գերանդի ,
Որբացեալ թողու զաշխարհ հայրենի . . . :

Հայոց աշխարհիս քաջ բազկաւ որդին ,
Փռուած է Մասեաց շուքերուն ներքեւ .
Շնչառապառ լանջացն հառաջանք յետին ,
Գողէ նա Աստուած , Կրօնք ու Հայրենիք :

Իր սրտահառաչ ձայնից զուգակցին ,
Ահագնատեսիլ դրօշակակիրներ .
Սպիտակազգեաց չորս դին դեգերին ,
Գերեզմաններէն հազար դիւցազունք . . . :

Եւ արիւնլուայ մարմնոյն առընթեր ,
Սեւ քողն երեսին լուռ մունջ շուարած .
Զեռն ՚ի ծնօտ Ղեւոնդ գաղոնի կ'արտասուէ ,
Կը ճմի Յովսէփ ցաւօք տրտմազգաց :

Արեւն ու լուսին ամսի տակ փակուած ,
Լուսոյ Ճակատնին ՚ի մութ են ծածկեր .
Մասեաց արձագանդք կոծեն տրտմագին ,
Սիրուն Հայաստան սեւեր է հագած :

Հրեշտակն Հայրենեաց տրտումթախագին ,
Իջած է այսօր Հայոց գերեզման .
Արիւն արցունքով տապաններ ցողէ ,
Վարդանայ բերնէն խօսք մը կ'սպասէ :

Դրուժանըն Վասակ վատ քան զկայէն ,
Պատրաստ Հայրենեաց տալ դառըն հարուած .

Սրբոյն Գրիգորի որդւոյն հարազատ ,
Փըշանիւթ պսակ հիւսեց Վարդանայ :

Ապշեցան երկինք ընդ սեւ ոճիցն այն . . .
Լրուեցին անմահ կաձառք դիւցազանց .
Եւ սրտաբեկեալ Հայոց զաւակիներ ,
Ի'զէն կ'դիմեն ՚ի վրէժ լուտանաց :

Մասեաց ծիածան ՚ի մութ կ'սքօղի ,
Մութ ախրէ Հայոց սրտեր հաւատար .
Ցողէ տրտմութեան առատ անձրեւներ ,
Հապճէպ կ'խուսէն պարերն ու հրձուանք :

Բօթ գուժեց յանկարծ թէ մատնիչք գունդ
գունդ ,

Գան ասպարավակիք և ըսպառազէն .
Ո'վ իմն Հայրենիք արեանըդ կարօտ ,
Կատղած գաղաններ ՚ի զէն կ'դիմեն :

Եւ գալարելով վիշապանըման ,
Կ'վազէ Մատնիչն աշխարհը քանդել .
Կործաննել տենչայ զԱթոռ և Սեղան ,
Եւ յաւերս նորա իր գահը քանդել :

Տղաք ճիչ բառնան , կ'դողան մայրեր . . .
Ամենքն ալ կ'իյնան ՚ի ծոց սուրբ Փրկչին .
Յառաջ մատչելով ծերերն ալեպսակ
Կրկնեն պատանեաց ընէին յաղթանակ :

Իսկ անդրդուելի պատուարն Հայկազանց ,
Ընտիր զօրապետն ախոյեան կանգնած .
Ահա թշնամին դոչէ անվրդով ,
Հոն կ'սպասէ մեղ Մահ կամ Յաղթութիւն . . .

Անուշ զաւկըներ՝ սիրուն մանկընիք ,
Աղէկ է մեռնիք , արդ ձեր երկընիք մէջ .
Քան թէ այն դաժան վայրի գաղանին ,
Անգութ ճիրանաց Ճարակ փշրուիք .

Փութացէք հապա , չ'անցնի ժամանակ .
Թողունք այս տեղեր վասեր չը հասած .
Բաբէ՛ տիրութեան դառըն վայրկենիս ,
Ըսաւ ու սքօղեց դէմքըն տիրամած :

Եւ յիշատակներ յառնելով ՚ի սիրտ ,
Իջուց այտերէն արտասուաց հեղեղ .
Օն առէ՛ք խրախոյս ու առաքինիք ,
Ժամէ արդ արեան . . . և ահեղ վրիժուց :

Անօրէն Մուշկան դողաց դալկադէմ ,
Երբոր բանակին ցրուկը տեսաւ .
Պահեստի զօրբերն օգնութեան կանչեց .
Եւ յօրինուածովք սերտ Ճակատեցաւ . . .

Հոն ընկաւ Վարդան ՚ի խռան սուսերաց ,
Մխուեցաւ պողպատն աբի վեհ սրտին .

Կարծես կը լողար արեան ծովին մէջ ,
Պարսիկն ահաբեկ կար անոր տեսքէն :

Իսկ նա հեծելով կարեվիէր սրտիւ ,
Ազգատեաց չարին Վասակայ գործեր .
Գոչեց Հայրենիք . . . Հայրենիք սիրուն ,
Առ զվերջին իմ շունչ . . . և զվերջին ողջյն . . .

Փաղցրիկ Հայաստան . . . Վարդանայ երկիք ,
Մի տար սակորներս ՚ի ձեռս օտարին . . .
Ծոցիդ մէջ հանդշիմ Մայր իմ Հայաստան ,
Մեռնիմ թողլով սիրտս Հայ զաւկըներուս :

Գոգցես արեւէ խամրած մանուշակէ
Կիսաբաց աչօք գետինը բռուած . . .
Դարձուց քաջ Վարդան աչք Հայ զաւակաց ,
Զըրկուած տեսաւ իրենց արեւէն :

Ճմեցան աղիք հսկային Հայոց ,
Ընդ ահեղ տեսիլ տիրապաստ քաջաց . . .
Կարկառէ՛ Երկինք , գոչեց , Զեռն Հայուն ,
Կամ կարճեցուր կեանքս , առ շունչըս ազատ :

Շառաչինք զինուց , Հարուաճք սուսերաց . . .
Մոլեգնեալ զօրաց ահեղագոչ ձայն . . .
Հողմերէ գիզուած փոշւոյ կարմիր ամառ . . .
Դիակներէ բլուր . . . Այս եր դաշտն ահա՛ . . .

Հոն, ահա դիւցաղն անվեհեր Վարդան,

Ընդունեց պսակ Երկնային փառաց . . .

Եւ հրեշտակներու ՚ի թեւս ապաստան,

Երկնասլաց Հոգին այսպէս կ'իսօսէր . . . :

«ԱՌ մնաս բարով, Հայոց աշխարհիկ . . .

Ահա ես կերթամ ով իմ հարցս Երկիր . . .

Կոռւեալքաջաբար՝ անվեհեր մեռնիմ,

Այս լոկ է իմցաւ՝ որ Քեզմէ զատուիմ . . . :

Լացէք սպասանիք, օրիորդք Հայոց,

Սուգ հազնի Մասիս, սուգ մտէք լեռներ . . .

Ո՛հ կ'թողում Քեզ անուշ Հայրենիք . . .

Ահա կ'սպասէ զիս մահուան ըստուեր . . . :

ՈՎ կրնայ չողբալքաղդին այս հարուած,

Մթնցաւ արեւս . . . պատեց զիս խաւար . . .

Ուբացող ձեռաց ճարակ պիտի մնայ,

Վարդան զուգաբաղդ ընդ Հայաստանի . . . :

Թա՞զ լայ տիրածայն ողբանուադ Կարապ,

Ողբաջաղնիս աղխողորմ մահ . . .

Ո՛ռ Երկինք թշուառ Հայուն վերջին շունչ . . .

Ո՛ռ Քաջիս սրտիկն անարժան Քեզ ուխտ . . . :

Բասաւ ու գոցեց վեհ արտեւանունքն,

Ցաղթանակին ծոցն ինկաւ լի փառօք . . .

Թաթիսած մատուցներն կրակ արեան մէջ,

Խաչանիշ կնքեց իր լանջքն և ձակատ . . . :

Մեռաւ . . . մեռցնելով անթիւ Վասակներ . . .

Անմահ Յիշատակ թողլով դարերու . . .

Եւ Մասեաց ՚ի ստոր մեծասաստն Ստուեր՝

Դեռ կ'թափառի Պաշտպան Հայերու . . . :

Առաջամ Յ. ԱՅՎԱԶՅԱՆ

ԱՌ

ՄԱՅՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր քաջաղանց, քանի սուգ աչեր,

Ցօղեցին լալեօք Քու քաղցրիկ հողեր .

Քանի լուս հասաչք սրբակց խորերէն,

Անձկաւ քեզ թքուան օտարաց երկրէն :

Դառն է, ոչ զաւկաց մօր գըրիէ կորզիլ,

Եւ դառնագոյն մօր անզաւոկ ծիւրիլ.

Այն ձեռքն որ քեզ տապալեց գահէդ,

Կարող է գըթով կանգնել անկումէդ :

Քամեցիր լըռիկ ՚ի սպառ դառն բաժակ,

Լըռաւ Երկնից կէտ ցասման վրիժակ .

Տես սիրուն որդիքդ ձեռք ձեռքի տըւած,

Գնան յառաջաբայլ ուժով օրինաց :

Համբոյր սուրբ ՚ի շուրթն , սէր վառ ՚ի սրտի ,
Դիմեն սփոփելքեղ ոչ յուսով սնոտի .
Քէ սոյն ձեռքն որ քեղ տաղալեց գահէդ ,
Կարող է գըթով կանգնել անկումէդ :

Թ. ԱԶԱՐԵԱՆ

Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱԼՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1. Ոչ այնպէս հրճուի յօրբանի մանկիկ ,
Ի ծուծ մայրենի ըստեանց ուռուցիկ .
Եւ ոչ այնպէս զուարթ ՚ի տես սիրելոյն ;
Բաբախէ կարօտ սիրտ կուսին զգայուն .
Որպէս մեք Հայերս որբ մօրէքաղըրիկ ,
Դարերով անգութ բաղդին խաղալիկ .
Մէրձ ՚ի շունչ յետին ոգւռով սրտաթունդ ,
Ցնծադին խայտամք ՚ի քոյ վերածնունդ :

Ով յօյս միակ դու Հայուն ,
Սահմանադրութիւն .
Ի Միութեան և ՚ի սէր ,
Կեցցես աներեր :

2. Քեւ Հայոց լերինք դաշտեր արդասու ,
Ծիծաղին ՚ի լոյս պայծառ արեւու .

Նենդ դաւ և զրկանք նախանձու ոգի ,
Իրաւանց սիրոյ քեւ . Ետուն տեղի :

Եղբայր արդ եղբօր ուխտ դընէ հաստատ ,
Սիրալիր շըրթամբ համբուրէ ձակատ .
Քեզիով միշտ ապրիլ և քեզմով գործել ,
Լզքեղ իր խրջին առաջնորդ ունել :

Ով յօյս
.



Փարատէցաւ երկնից կապօտ ,
Ակն անմահին ակնարկեաց .
Յարին Հայկայ սերունդք ընդ փոյթ ,
Հընչել նուագս օրհնութեանց :

Խրախոյս Հայկազունք ,
Յաւէրժ փրկութիւն .
Օ՞ն երգենք , մանկունք ,
Ահմանադրութիւն :

Ճամանակին ՚ի խոր յատակ ,
Արցունքն Հայոց սուզեցան .
Լուաց ովբոց դառն աղաղակ ,
Ալդոյ ծիծաղն աստ վոխան :

Խրախոյս . . .

Ումեն էին սրտեր թափուր ,
Ճակատն՝ յամօթ աղդութեան .
Քաւ . նուաղեալ ժայթքեաց հուր .
Անցոք յանկարծ Հայք յարեան :

Խրախոյս . . .

Որ ՚ի կամարն աստեղազարդ .
Հզօր բանիս ինքնիշխան .
Մեզ տուողին շնորհացն առատ ,
Զաւուրս հայցեմք տուր երկայն :

Խորին մաղթանաց ,
Ուղերձ միաձայն .
Առ պետն Յսմանեանց ,
Ապտիւլ Աղիղ Խան :

ԵՐԳԵԱԼ Ի ԴԻՄԱՑ
Ա. ՀԱՄԱՉՎԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԻ



ԵՐԳ

Ի ԶՈՐՌՈՐԴԻ ՏԱՐԵՒԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ԽՅԵԱ ՄԱՅԻՆ ՃԿ

Նըճուին Երկենք , խայտայ Երկիր անթերի ,
Եւ Հայկաղանցո գէմք կը ժպտին գեղանի .
Զի Տարեդարձ մեր վիրկութեան նոր հասեր ,
Դարձեալ հանգոյն Արուսեկին լուսաբեր :
Յոր հորոդուին մեր սրտեր ,
Կրկին ՚ի յոյս և ՚ի սէր :

Ազգասիրաց վսեմ Ճակտին քրտնաթոր ,
Այսօր Մասեաց հրեշտակն յաշխոյժս նորանոր .
Քառեակ պսակ մալ գայ հիւսել ծաղկափայլ ,
Յոր Եթերին կազմեն մատունք բարեփառ :
Յոր Խրախուսին մեր սրտեր ,
Կրկին հոգի անվեհեր :

Զայն հինաւուրց Փինախնդրին ալ ընդհատ ,
Հնչեն փոխան բարբառքն Հայկեան անընդհատ .
Օրէնք արդար և Միութիւն Երջանիկ ,
Յոր “ մայր բարեաց ” գրեն անշուշտ անջինջ
գիրք :

Յոր կը ցնծան մեր սրտեր ,
Կրկին ՚ի խլնդ անեպեր :

Հապ ՚ն որդիք Հայկեան յայս պէրճ ասպարէզ,
Եկէք տօնել սերկեանս շքեղ մեծ հանդէս .
Նուիրական ըլլայ մեզ օրս յարաժամ,
Ուր միութեան ձանչցանք ոգին ու Ազգու-
թեան :

Եւ յոր լցան մեր սրտեր ,
Կրկին ՚ի լցս անստուեր :

Թող հնչէ աղատ ,
Միշտ վեհն Այրաբատ .
Ընդ նմին երգեն ,
Դաշտք , լերինք ամեն .
Թէ բաղդն Հայերուն ,
Դեռ ողջ է անքուն .
Եւ մեք անդադար ,
Զարնենք Հայկեան քնար .
Որչափ ապրի Հայն ,
Կեցցէ՛ Միութիւն .
Ու փառքն աննման ,
Սահմանադրութիւն :

Խօսք
ՍՊՀԱԿ Ա. ԽԱՆՁԵԱՆԻ

ԵՂԱՋԱԿ
ԲԱՐԹՈՂ. Մ. ԹԱԹԱՐԵԱՆԻ

Ե Բ Գ

ի ՄԵՑԱՄԱՆԵՐՈՐԴԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազն որդիք հապ՝ օն ՚ի դաշտ ,
Զեռք սիրտ համբոյր եղբօր տալ հաշտ .
Հապ՝ օն դէպ հոն՝ ուր միաբան ,
Մենք ուխտեցինք որ անբաժան .

Ալլանք մէկ սիրտ մէկ ոգի ,
ՀԱՅ ԱԶԳՈՒԹԵԱՆ տալ հոգի :

Ամենքս մէկ սիրտ ոգի ւանուն ,
Ամենքս մէկ յցս հաւատք ւարիւն .
Ամենքս զաւակ մէ՛կ Հայրենեաց ,
Ինչու այսպէս եմք օտարցած .

Եկէք ամենքս մէկ ոգի ,
ՀԱՅՈՒԹԵԱՆ տանք նոր հոգի :

Տեսէ՛ք Հայը Հայուն համար ,
Կանդնեք է հոն դափնի կամար .
Մեզ կ'ապասեն Հայկեան կուսանք ,
Վարդ մանիշակ ծաղիկք հազորք .

Օ՞ն ամենքնիս մէկ ոգի ,
ՀԱՅՈՒԹԵԱՆ տանք նոր հոգի :

Վարդից կոկոններ սէր բուրեն ,
կուսին մատններ սէր կը գրեն .

Մանկտիք ուրախ սէր կը գոչեն ,
Մուսայց քնարը սէր կը հնչեն .

Սիրով և մենք մէկ ոգի ,
Առնունք մեզմով նոր հոգի :

Սիրով բացուած անմեղ որտեր ,
Գիտցէք Հայուն նշանն է սէր .
Օտարին պէս ըլլանք դաժան ,
Ի բաց մերժենք սիրտ Մերուժան .

Ատելութեան չար ոգի ,
Թողունք առնենք Հայ հոգի :

Բաւ է ալ բաւ է Եղբարք ,
Հայն բաւ կրեց վիշտ տառապանք .
Մինչ մեր թշուառ աւուրց յաւարտ ,
Ծագի պայծառ արեւն զբւարթ .

Էլլանք մէկ սիրտ մէկ ոգի ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ տանք հոգի :

~~~~~

## ԵՐԳ

Թեւ ՚ի թեւ օն ընկերք ,  
Դէպ ՚ի հոն արշաւենք .  
Ուր մեր եղբարք մեզ համար ,  
Կանդներ են Դափնի կամար .  
Հոն գրկենք մեք զիրար ,  
Երգենք միշտ ւ'ելնենք պար .

Եւ երկինքէն յարատեւ ,  
Մաղթենք ՀԱՅՈՒՆ նոր արեւ :

Աւ հերիք մեր վշտեր ,  
Բաւ աչաց արտսունքներ .  
Ատելութիւն հեռ նախանձ ,  
Թոնդ մընան մեզմէ ՚ի բաց .  
Եղբօր գիրկ միշտ սիրով ,  
Գըրկըլինք հըճուելով .

Եւ երկինքէն յարատեւ ,  
Մեր կենաց մաղթենք արեւ :

Օ՞ն քսյրեր և եղբարք .  
Լարեմք մեր սուրբ քնարք .  
Եւ մեր որտեր անմեկին ,  
Անմաշ հոգւով թոնդ կապուին .

ՄԵՆՔ ԸԱՎԱՆՔ Հայութեան ,  
Նոր դիւցազն ւ'ախոյեան .

Եւ միշտ մաղթենք յարատեւ ,  
ՀԱՅԱՍՏԱՆԻ լոյս արեւ :

**ԵՂԱՆԱԿ**  
Գ. ԳԱԶՐԱՄԱՆԱՆ

**ԽՕՍՔ**  
Գ. Ա. ՀԻՒՏԱՎԵՐԵԱՆ



ԴԻՄՔ ՔՈ ԴԵ ԶԵՑԻԿ ...

ԱԽԱՌԱ ԶԻ ԽԱՄՐԵՑԱՐ

Ա.

Հիատեսիլ դէմքիդ գեղջն ,  
Աշխարհ ամեն սխրացաւ . կոյս .  
Այդ բոցափայլ Աջիդ լուսոյն՝  
Բոլոր սրտից մէջ ծընաւ Յօյս . . .  
Այլ աւաղ զի խամրեցար :

ՈՎ ցանկալին այն թագ շբքեղ ,  
Որ սրբանուէր քոյս գլխոյն .  
Զարդն էր անմահ շընորհագեղ ,  
Ո՛հ ծածկեցաւ նա ընդ հողով .

Եւ դու աւաղ զի խամրեցար :

Դշխոյդ . ո՞ր ձեռք ժպրհեցաւ ,  
Պայծառ դէմքիդ ձգեւ այդ քօլ .

Ու ոսկեծդի պարանոցիդ ,  
Այդ՝ թէ ոսկի՝ այլ վատ շղթայն .

Աւաղ զիարդ խամրեցար :

Եւ քո արեւն այն տենչալառ ,  
Որ Հայրենեաց կեանք՝ ոգի տայր .  
Կոյս՝ պարմանի սքանչանայր ,  
Նըսեմացաւ , էջ ՚ի շերիմ . . .



ՇԻՋԱՌԻ ԱՐԵԽՆ ՀԱՅՐԵՆԻ . . .

Բ.

Բանաստեղծին քնարին թելեր ,  
Ողբացին յօյժ քո աղէտներ .  
Սակայն ափսոս — Երկինք ընդէլը . —  
Ի զուր հնչեց այն եղերքներ .

Շիջաւ արեւն Հայրենի :

Յուսոյ հրեշտակ մերթ սրբանայր ,  
Այն քընարին աշխոյժ տալու .  
Բարէ և նա թըռաւ յերկինս ,  
Յիւր ոսկեհոյլ ամպոց խորանն .

Եւ քնարն արդ կայ անխօսիկ :

ՈՇ Եւս կուսանըն փափկամէջ ,  
Յաւուրս տօնից մեր բերկրաւէտ .  
ՈՇ Եւս 'ի պար նոքա հրձուին ,  
Հայ՝ լուսարփի աստեղց ներքեւ .  
Անմիսիթար Հայրենիք :

ՆՈՐ Ա.ՑԳ

Գ.

Ահա ցոլաց նոր առաւօտ ,  
Դիմեալ 'ի ժպիտ գեղածիծաղ .  
Մեր նախահարց սուրբ շիրմաց մօտ՝  
Այլ թէ ծաղէ՞նոր լոյս խաղաղ .

Ցողէ՞ շընորհքդ ով Երկինք :

Յաւերժասցի մեզ ցանկալի ,  
'Նզ ամանորիս՝ նոր կեանք ու ոգի .  
Զքնաղ անդրէն սէր ծաւալին ,  
Եւ քաղցրալուր՝ 'ի Հայաստան .  
Հնչէ՞ քընար միութեան :

Եւ դու յայնժամ , կոյս գեղուհի ,  
Ցոյց հէ քո դէմքըդ հրաշագեղ ,  
Փշրէ՞ շղթայդ

Ու ազատութիւն փայլեցուր Աստղ .  
Զի դու ինքն ես կեանք Հայրենեաց ,  
Դու ինքն ես փառք Հայաստանեայց ;  
Թռչուն

ԶԵՓԻՒՐ ՄԱՆԿԱՆՑ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ ,  
Աղբերց վրայէն լուսակարկաջ .  
Անուշ հոտով ծաղկանց սիմիւռ ,  
Ի՞նչպէս թուչիս ինձ ընդ առաջ .  
Ու խունկ և զով ընծացելով ,  
Զիս ողջունես հեղիկ շընչով :

Ո՛հ կը սիրեմ զքեղ հողմիկ ,  
Երբ կը փութաս ինձի գալու .  
Ի պար 'ի թուիչ 'ի սոյլ մեղմիկ ,  
Այրած ճակտիս ինձ այցելու .  
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած ,  
Ծիլ ծիլ բացուի 'ի լոյս կենաց :

Ալացիր փափկիկ դու սուրհանդակ ,  
Լուր տուր հովոին ու ծործորին .  
Ու անտառաց բարձրադիսակ ,  
Ուր երանով սոխակը թառին :

Թէ մտերիմն իւրեանց եկաւ ,  
Բիւր զմայլմանց յիշատակաւ :

Ո՞հ կորուսած իմ հաճցքներ ,  
Հոս վերստին գտնեմ զձեղ .  
Ծառոց շըքով էք ծածկուեր ,  
Ու փրփուրով առուտակին հեղ .

Ահա կայտուէք ՚ի յայս ծըմակ ,  
Ի յայս թըրփուտ հուանոցակ .

Հոս գառն հոգեր մէկիկ մէկիկ ,  
Ճակտէս ՚ի բաց հեռանային .  
Եւ հոյլք ժամուց գեղապարիկ ,  
Սիրտս թեթեւ օրօրէին .

Եւընութիւն՝ մայր որդեսէր ,  
Քնքուշ գրկաց մէջ մեզ չես գդուեր :

Հոս ճեմէին երեկոյեան ,  
Ի զով ըստուեր պար մի կուսից .  
Մազերը հովուն բազմաբուրեան ,  
Սիրտք ընծայուած հեշտ վայելից .

Շող , լուսնակին կոյսն ու ծաղիկ ,  
Զիրար շոյեն սիրատարփիկ :

Մտերմութիւն , սէր կրակուբոց ,  
Ի՞նչ անուշ էք յայս տեսարան .  
Ուր դալարիք ձեզ հանգստոց ,  
Ու անհուն դաշտեր զբօսարան .

Մըտերմութիւն , ինձ երանի ,  
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի :

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ ,  
Ազերը վրայէն քաղցրակարկաջ .  
Անուշ հոսով ծաղկանց ըսփիւռ ,  
Թըրիք , թըրիք ինձ ընդ առաջ .

Ու խունկ և զով ընծայելով ,  
Իմ շուրջ պատէ հեղիկ շընջով :

→→→○←←←

## ՀՐԱՒԵՐ

Արեք աղատ կովկաս Մասիք ,  
Արեք որդիք յաւիւն կրօնից .  
Միահամուռ մահ յաչս դիք ,  
Ցադուրդ վրիժուց դիւապաշտից :

Օն անդը յառաջ մանկունք հայկայ ,  
Օն վառ ՚ի վառ ՚ի նոր խրախոյս :

Զի արդ՝ Գրիգոր ընդ Տրդատայ ,  
Մալախմբից յառին ՚ի խցս :

Եատ ու շատ են մեր Հայրենեաց ,  
Հայեր , աղէտ դառն ու վիշտ .  
Առատ առատ հէտ հայկազմանց ,  
Աչերն արտառուք հոսեց միշտ .

Խօսէ , հնչէ , անուշ կիթառ ,  
Հայ սրտերուն միսիթար :

Սուրբ Հայրենեաց հին յիշատակք ,  
Մեր սրտերը թէ վառեն .  
Ա՛հ սրտերուն եթէ յատակք ,  
Վեւ հառաջանք մը հանեն .

Խօսէ , հնչէ , անուշ կիթառ ,  
Հայ սրտերուն մըսիթար :

Վ էպն այս ԱԶԳԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ,  
Կիթառ , հարցուր Արեւուն .  
Հարցուր Լուսնին . որ արդ պահպան ,  
Ե Հայրենի շիրմերուն .

Հեծէ , հնչէ , անուշ կիթառ ,  
Հայ սրտերուն միսիթար :

Հայրենախօս դու ո՛վ կիթառ ,  
Հայոց ծիծուան տուր տւիւն .

Հայոց բաղդին տուր զուարթ լուր ,  
Ժըպիտ Հայոց սարերուն .

Երդէ նոր երդ , անուշ կիթառ ,  
Մեր Հայրենեաց մըսիթար :

ՀԱՅԱԶԱՆՔ ՀԱՅԻՐԵՆԵԱՅ

Ա.

Որպէս հէք ստրուկ , Հայրենեաց կարօտ ,  
Աղեկէլ սրտիւ նայի ծով և օդ .  
Անհամեր մընայ , Հայրենի աստղին ,  
Նոյնպէս ես , որդեակ , հըսկեմքո բաղդին :

Դու իմ հըեշտակ , ո հոգի երկնատուր ,  
Ի՞նչ վիճակ տընտրես , յերկիրքեզ տրիտուր .  
Այր կրօնական՝ թէ պաշտօնաւոր ,  
Գրադէտ կըլլառ՝ ապա թէ զինուոր :

Նիրհէ դու արդ՝ անուշ զաւակ ,  
Նիրհէ դիրկըս սիրուն հըեշտակ :

Բ.

Փո փայլուն աչքերդ , ինձ աւետիս տան ,  
Թէ ուզես կանգնիլ , Հայրենեաց վահան .  
Բայց , աւաղ , որդեակ , ուր է Հայատան ,

Ուր մեր գահ , խորան , դարձան մահարձան :  
 Յաղթական ճակտիդ , ծաղկեայ պսակներ ,  
 Զունի Հայաստան , այլ սգոյ փուշեր .  
 Դեռ նոր լցո տեսած՝ դու ալ իմ հոգիս ,  
 Տի թոթովես “մայր , տուր ինձ հայրենիս :  
 Նիրհէ դու արդ՝ իմ որբ հայկիկ ,  
 Նիրհէ գիրկըս , անուշ թռչնիկ :

Գ.

Ի՞նչ ճակատագիր ունի Հայն երկիր ,  
 Այլ միայն աղէտք և սիրտ տարագիր .  
 Զի օտար փառօք պանծող գլուխներ ,  
 Զեն կարող ըլլալ որդւցոյ քաջալեր :  
 Դու պիտի ճճես կաթող իմ յստակ ,  
 Հայկական ոգին որ ծնաւ Սահակ .  
 Դու պիտի գրկես մեր քաջաց դամբան ,  
 Որ կայ դարէ դար հիներու կոխան :  
 Նիրհէ դու արդ՝ յցո իմ հեղիկ ,  
 Նիրհէ գիրկըս , սիրուն Յուսիկ :

Գ.

Գերագցն էին հզօր հովանին ,  
 Գեղ համար մաղթեմ , սէր իմ սրտածին .

Քո անբաղդ Աղդիդ աւեր խորանին ,  
 Թողքեղ նուրիբեմ մատաղ՝ լալագին :  
 Քո հարցդ վշտաց եղար դու ժառանդ ,  
 Յաշխարհ քեղ համար կայ մի մեծ պարծանք .  
 Ապրիլ հայապէս , ըլլալ սուրբ պսակ ,  
 Հայրենի սիրոյն մեռնիլ նահատակ :  
 Նիրհէ դու արդ՝ անմեղ դառնիկ ,  
 Նիրհէ գիրկըս զուարթ Աստղիկ :

—◇◇◇—

Ա.Ռ

ԿՈՅՄՆ ՈՒԽՏԱՆՈՐ

Ո՛չ , քաղցր է քո սէր , և կցո ,  
 Խոնջ և լըքեալ սարէ սար .  
 Լեռ , ձոր և դաշտ և ծըմակ ,  
 Ծաղկունք գեղցդ սիրահար .  
 Նըեշտակդ ամբիծ իմ սիրուն ,  
 Քո ինձ կըրկնեն քաղցր անուն :

Լոկ մեղուակն յիս նայուածք ,  
 Զայն արծաթի և թըրթըրուն .  
 Իմս զարթուցին նախկին սէր ,  
 Այլ այն օրէն էք համբուն .

Հրեշտակդ ամբիծ իմ սիրուն ,  
Քո ինձ կը կնեն քաղցր անուն :

Ի զուր հաղցի դիւր սըրտիս ,  
Զով զեփիւռիս ու առուակաց .  
Ֆիլոմէլին լրուց երգ ,  
Եւ բնութիւն իսկ տրտմած .

Հրեշտակդ ամբիծ իմ սիրուն ,  
Քո ինձ կը կնեն քաղցր անուն :

Համբոյր հեղիկ , գեղ ժըպիտք ,  
Ուռուցիկ լանջ , գիրգ հասակ .  
Չըտան ջրնջել , ո՛չ , մըտքէս ,  
Եւ գիսակաց վառ հիւսակ .

Հրեշտակդ ամբիծ իմ սիրուն ,  
Արմենուհւոյդ քաղցր անուն :

Զը կայ տերեւ , վարդի թերթ ,  
Խորհրդաւոր ծալք բնութեան .  
Որոց վրայ կարօտով ,  
Սրտիս հառաչք ըը կարդան .

Հրեշտակդ ամբիծ իմ սիրուն ,  
Արմենուհւոյդ քաղցր անուն :

Թէ աչերուդ սիրարկու ,  
Խոստու մն անշնորհ քեղ գրեցաւ .  
Ո՛հ , գէթ սիրով ինձ ներէ ,  
Հընչել առ իմս ցուրտ շիրմաւ .

Հրեշտակդ ամբիծ իմ սիրուն ,  
Արմենուհւոյդ քաղցր անուն :

ԱՌ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԵՐՆ

ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՒՑ

ՈՂՋՈՑՆ

Թէ 'ի հրացան դրօշ մահաբեր ,  
Ա.Ա.Ք ողջունեն իւրեանց տէրեր .  
Կամ 'ի գոռիւն թնդանօթաց ,  
Ա.հեղ ողջոյն տան իշխանաց .  
Մենք մեր սըրտից 'ի բաբախին ,  
Խոնարհ այլ չերմ տամք քեղ ողջոյն .  
Եւ թէ չունիմք դրօշ արեան ,  
Զեղ ձիթենիք և մեր նշան :

Օն Հայրիկին ընդ առաջ ,  
Երթամք հայեր քաջալանջ .  
Հերիք կոհակը անջատեն ,

Զափըն որդւոց հօր լաստէն .  
Պատռեմք Վոսփորն քաղցր 'ի ձայն ,  
“ Ողջյն , քեզ ո՛ Խրիմեան ” :

Հրեշտակիր յուսոյ , թըռիր առ մեզ ,  
Եատ թառեցար , բո՞ւ սրտակէզ .  
Համբ 'ի նոճիս աւերակաց . . .  
Թէ բարեկամ ես ամայեաց .  
Մեր սիրաք ալ են աւեր , թափուր ,  
Լից դու զանոնք՝ ոգւսդ ՚ի հմւր . . .  
Բոցմիդ աչաց՝ սառն հրդեհես ,  
Անըգգայից սիրտն ե՛կ , վառես . . . :

Օ՞ն , Հայրիկին ընդ առաջ ,  
Դիմեմք , Հայեր , քաջալանջ .  
Հերիք կոհակը անջատեն ,  
Զափըն որդւոց հօր լաստէն . . .  
Պատռեմք Վոսփորն քաղցր 'ի ձայն ,  
“ Ողջյն քեզ , ո՛ Խրիմեան ” :

Փաղցր Աստուծոյ մ'անոյշ պատդամ ,  
Դո՞ւ , խաչակիր խաղաղութեան .  
Եանթից փոխան՝ մեղը հոսէ մեզ ,  
Հեզութեամբդ , ո՞հ , բարձրացն զմեզ . . .  
Եւ մութի մէջ , Հայաստանցին ,  
Թէ կորնչի հեծեծագին .

Հասցուր անոր՝ ջահ լուսաւոր ,  
Զես մի լուսոյ դու վեհ զինուոր . . .  
Օ՞ն , Հայրիկին ընդ առաջ ,  
Վազեմք , Հայեր , քաջալանջ .  
Հերիք կոհակը անջատեն ,  
Զափըն որդւոց հօր լաստէն . . .  
Պատռեմք Վոսփորն քաղցր 'ի ձայն ,  
“ Ողջյն քեզ , ո՛ Խրիմեան ” :

Բաղդն այս անգամ բանայ զաշեր ,  
Մըթին արժեքն հանէ ՚ի վեր . . .  
Եւ թէ թաւշէ տայ քեզ գահցոյս ,  
Լոռուտ զաւերս ածէ ՚ի յուշ .  
Եւ գաւազան թէ տայ սոկի ,  
Դու նոյն հովիւն ես պարզ ւարի .  
Որ ջաղիսեցիր ՚ի ցուպդ անփուտ՝  
Գայլու վայրի , և զանարդ Քուրտ . . . :

Օ՞ն , Հայրիկին ընդ առաջ ,  
Թռչիմք , Հայեր , քաջալանջ .  
Հերիք կոհակը անջատեն ,  
Զափըն որդւոց հօր լաստէն . . .  
Պատռեմք Վոսփորն քաղցր 'ի ձայն ,  
“ Ողջյն քեզ , ո՛ Խրիմեան ” :

Ապրդ , որ հզօր է ՚ի պատժել ,  
Զի՞ անզօր է ՚ի վարձատրել . . .  
Երկու տերեւք , մինչ մեծ արք կեան ,  
Քար մ' երբ մեռնին , — այս իր վարձան .  
Այլ լոկ այս չէ , Հայրիկ , քո վարձ ,  
Դէմ սլաքաց , զոր որէ նախանձ .  
Գընդակաց . զոր ցուլէ խաւար ,  
Սիրոք մեր լրտին քեզ միշտ ասպար . . .

Օ՞ն , Հայրիկին մեք առաջ ,  
Սփռեմք մեր վիշտ , իղձ , հառաչ .  
Մեր երակաց գիլէ թինդ ,  
Ճանչէ սրտից խոց ու խինդ . . .  
Պատուեմք Վասիլոն քաղցր ՚ի ձայն ,  
“ Ոզդյն քեզ , ո՛ Խըրիմեան ” :

Ե Բ Գ.

Վ.Ս. Վ.ԵՐԱԴԱՐՁԻ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ

Ա.ՊՏ ԻՒԼ Ա.ԶԻԶ ԿԱՅՍԵՐ

Եւհինշահը զէման Ապախւլ Ազիլ Խան ,  
Պիր աղ միւտտէթ նազարտէն օլտի բինհան .

Միւքէտտէր իտի ճիւմէլ զլորի տէսթան ,  
Իսթամպօլ դալմբշ Էտի ճիսմի պի ճան :  
Նագարաթ

Գուտտումիլէ հաեաթը թաղէ կէլտի ,  
Նէշաթ ու շավքը պի էնտաղէ կէլտի :

Վ իճուտի կէլմէրի քեանի ատալէթ ,  
Գէֆի տէրեայի իհսան ու ինայէթ .  
Հէլէ էվսաֆրնէ եօդտուր նիհայէթ ,  
Պու քէրրէ եիւմի թէշրիֆինտէ էլպէթ :

Գրատէմ պաստըտէ օլ Շահը քէրէմքեար ,  
Ատէմ ապատէտէք տէֆ օլտու իբաւար .  
Լիսանը հալ իլէ հէր զէրրէ հէր պար ,  
Իտէր իխլաս իլէ պու պէշթի թէքբար :

Խիւտա իգպալ ու էօմրիւն իտէ միւզտատ ,  
Մէմալիք սայէսինտէ օլտի ապատ .  
Սունուֆը զլորի տէսթան օլաբադ շատ ,  
Իտէրլէր շիմտի պու մանայի իրատ :

# ԵՐԳ

## ՊԱՏԵՐԱՋՄԱՆ

Վրեժ կը գոռան շիրմաց խորէն ,  
Գոռ դիւցազանց ստուելքն ահեղ .  
Վրեժ կը մռմռան արդ տիրօրէն ,  
Մեր հէք եղբարց արեան հեղեղ :

Մասեաց ժեւուտ սարն բոցավէժ ,  
Մեր սրտերուն խոր ժայթքէ վրէժ . . .  
Օ՞ն , անվեհեր վանենք զրկանք ,  
Որ Հայաստան առնէ նոր կեանք :

Բիւր սուր՝ հուր՝ մահ ,  
Զազդեն մեղ ահ . . .  
Արդ քաջալանջ՝  
Նետուինք յառաջ :

Սուր մեր յագուրդ ,  
Վատ և անգութ՝  
Թող թշնամւցն ,  
Խմէ արիւն . . . :

ՆՈՐԱՅԻՐ

Կայծակնահար թող կորնչին ,  
Որ կը մատնեն հայրենիքնին :

\* \* \*

Ի ԽՆՁՈՅՑ

ՍԱՀԱԿԵԱՆ ՍԱՆՈՒՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի՞նչ քաղցր ու սիրուն մէկ մօր զաւակաց ,  
Լսել շուրթն ՚ի շուրթն ուխտերն փոխադարձ .  
Մէկն իր աշերուն ժըպտող դարդերովն ,  
Միւսն անխէթ սըրտին սիրոյ զարկերովն .  
Ի՞նչ քաղցր ու սիրուն տեսնել ձեռք ձեռքի ,  
Լըքեալ Հայրենեաց մաղթել կեանք հոգի .  
Որ զիրենք ծընաւ սընյց և գըգուեց ,  
Բնութեան էն չքնաղ ձիքերով զինեց :

Ո՞վ մայրդ հանուց մարդկութեան ,  
Անձկալիդ մեր Հայաստան .  
Ալ թող սըրտիդ վշտալից ,  
Դադրին հառաչք սուդ կըսկիծ .  
Զի ձեռք Սանուցս հարազատ ,  
Կապին ՚ի քո սուրբ Ճակատ .  
Պըսակ սիրոյ անըսպառ ,  
Թէպէտ ծաղկամբք քեղ օտար :

Օ՞ն սաներս Սահակեան ,  
Բարեկամք Հայ անուան .  
Սըլանանք թեւ թեւի ,  
Յաւերակո Հայրենի :

Կանգնել հոն մեր դրօշակ ,  
Անկործան յիշատակ .  
Միութեան սիրային ,  
Մեր ուխտի պըսակին :



## Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

ԶԵՅՑ Թ-Ռ Խ-Ա-Ն-Ց-Ց-Ց

ՊԱՏԱՆԻՈՅ

## ԵՐԳ

Դու զով խնդրես մայր իմ անուշ ,  
Ե'կ մի՛ դողար , մօտեցիր հոս .  
Անլաց աչօք դիտէ զորդիդ ,  
Ու իւր վէրքերն արիւնահոս :  
Թըբքաց մայրեր թող լան ու դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

Ի՞նչպէս երբեմն օրրանիս մէջ ,  
Կակուղ ձեռամբ փայփայելով .  
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր ,  
Իբրեւ հըեշտակ նուագելով :

Զիս հանգչեցուր ՚ի հող ու դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :  
“ Աորեկ որդւոյս կենաց արեւ ,  
Զեզի համար փայլի Հայեր ” .  
Այսպէս յայնժամ դու երգէիր ,  
Օրօրոցիս նստեալ քովիր :

Անոնց համար շիջաւ և դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

Կարմիր կայլակք ցայտեն վէքքէս ,  
Սակայն , մայր իմ , նայէ չորս դիս .  
Զարիւնըուշտ Քիւրտերն տե՛ս ,  
Հազարներով վուած դետին :

Կերաւ զանոնք սուը մեր ու դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

Ինչպէս վիշտակ մըուընչելով :  
Ցանկարծ մեր վրայ յարձակեցան .  
Ցընցեց Զէյթուն գլուխն ժայռոտ ,  
Իւր վեհից մէջ թօթափեցան :

Կարմիր ներկաւ քոյքք մեր ու դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

Ու ծափ զարկին մեր Հարց ըստուելք,  
Զի չէ մեռած Հայոցս կրակ .

Ու ցնծացին այնչափ զոհեր ,  
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ :

Խնդաց Մասիս , մայր իմ և դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

Վերջին համբոյր տամբեղ մայրիկ ,  
Հատուցանես զայն սիրուհւոյս .

Վերջին անդամ գրկեմ մեր հող ,  
Ոյր արդ կիշնեմ ՚ի ծոցն անլոյս :

Խաչ մի տնկէ վըրաս՝ ու դուն ,  
Ուրախ լուրեր տար ՚ի Զէյթուն :

### ԹԱՂՈՒՄՆ

### ԶԵՅԹՈՒՄՆԵՑԻ

### ՊԱՏԱՆԻՈՅՆ

ՊԱՐ ԶԵՅԹՈՒՄՆԵՑԻ

Ու վող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ ,  
Սարէ ՚ի սար չարաշըշուկ տարին լուր .  
Ու չերգեցինք ողբոց երգեր պատասցող ,  
Երբ պատանւոյն բացինք մըուայլ վոսին դուռ :

Գիշերական մունչ ըստուերներ շուրջ կային .  
Երբոր սըրով բըրով զհող փորեցինք .

Լուսին միայն դողդով շողար մեր գլխին ,  
Սուգ էր պատեր ըզդաշտ բըրուր և երկինք :

Պէտք չէր դադաղ , և ոչ ձերմակ պատանքներ ,  
Շըրով գոցուէր ազատորդի Զէյթունցին .  
Նա յետ մարտին կարծես հոգնած կու հանդչէր ,  
Ու վերարկուն կարմիր , բաւ էր իւր անձին :

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց ,  
Մերքաջ տէրատէրն , զինուոր Հայոց՝ Աստուծոյ .  
Գովեց զմահն և զքաջութեան իւր օրհնեց ,  
Թշլ չի տուաւ հառաչ մ'ուճիկ հանելոյ :

Բայց երբ գըլուխն ՚ի բարձ դըրինք հողաշն ,  
Տէսանիք զդեղ ձակտին ու վէրքըն պայծառ .  
Ով պատանեակ ըսինք ամենքս մէկ բերնէն ,  
Վասն հայրենեաց մեռար , դու շատ ապրեցար :

Գընա զրուցէ հայկազարմից մեծ ոգւոց .  
Որ կան այս տեղ ակատ ու քաջ դեռ Հայեր .  
Որոնք ՚ի բիւր պատերազմաց թէպէտ խոց ,  
Մէջ ամնիրոպաց ՚ի ժայռ կանդուն են կեցեր :

Մէյ մ'ալ քամի յանկարծ փըսեց ցրտաշունչ ,  
Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ .

Ու մեր սարերն զերդ ուրուականք անմըռունչ ,  
Սեւ գըլուխնին տնկած դիտեն ապշութեամբ :  
Յայնժամցուրացուրտ հողլեցուցինք իւր վրան ,  
Խաչ մի դըրինք , ինչպէս իւր մօր պատուեր ետք :  
Ոչ այլ ըքեղ արձանադիր ոչ տապան ,  
Զէնքըն մինակ Ծողուցինք իւր փառքին հետ :

Մ. Պէտական Ազգական

### Հ Ա Յ Ն

## Ի ԶԵՅՑԹԱՌԻՆ

### Ե Ր Գ

Աստեղն Հայկին կրակէ հետքեր ,  
Նշմարեցաւ յեթերն ՚ի վեր .  
Սաւառնաթեւ հուր հետ ուներ ,  
Թուեր վարամ օրհասաքեր .  
Ում ժողովուրդք ահիւ մընան ,  
Կարծեալ հասեր զերկրի կործան :  
  
Յիշեց զորդիս և հայեցաւ ,  
Սիրտն և աղիք գալսրեցաւ .  
Դէմք բոցագոյն գարձաւ ՚ի յայտ ,  
Տիգով աչաց կայծակնացայտ .  
Շամբուրքն նետ յաջ ձախ շարժեց ,  
Եւ առափիւն յաստեղս հընչեց :

Ազատ Մասեաց ՚ի սար սրացաւ ,  
ԶՀայաստան բոլոր տեսաւ .  
Ի Կովկասայ մինչ ՚ի Տաւրոս ,  
Եւ ՚ի կասբից ցԱլիւս Պոնտոս .  
Լեռներ , ձորեր , դաշտ ու գետեր ,  
Դուն օտարին բաժին եղեր :

Զըկայր պատառ մի հող միայն ,  
Ուր հանգուսէ գգլուխն Հայն .  
Հարբըն թափուբ , որդիք ցըռւեր ,  
Պարսիկն ու Քիւրտ են տիրացեր .  
Հոգւոց հանեց սրտից խորոց ,  
Հայոց աչեր քաղեց յիւր ճոց :

Հըրով բացով հասաւ Զէյթուն ,  
Սիրուն զաւկաց ընտրեալն ՚ի տուն .  
Կեցաւ կանգուն ժայռից վերեւ ,  
Ծագեց իւրոց կենաց արեւ .  
Եւ զիսաւար գարձոյց գիմաց ,  
Ժանախց որդւոց դէպ երեսաց :

Երբար տեսաւ եկեր պատեր ,  
Անթիւ անհատ վայրենիներ .  
Զազատութեան զՍուրբ լեռներ ,  
Կուզեն դընել յաւար յաւեր .

Զէ' այս մանկան չէ' օրօրոց ,  
Այլ առիւծուց է սա բայոց :

Ուստի օձի պէս սողալով ,  
Եւ նենգաւոր վատ խորհրդով .  
Զի զկարեանց ձիրան թափեն ,  
Սրով յետոյ խաղ արասցեն .  
Եթէ կամիք զհաշտութիւն ,  
Թողէք զզէն և զօրութիւն :

Հոդիս թէ տամ զէնքս չիտամ ,  
Զէնքն է կենաց մերոց պահպան .  
Ի զէնս ճնած , ՚ի զէն մեծցած ,  
Զէն առ ՚ի զարդ , զէնի կազմած .  
Երդուեալ լերանցս ՚ի ծոց երկաթ ,  
Դայեակ հարսանց մարց որտակաթ :

Սա՛ իմ կորիւն , հա իմ եղբայր ,  
Մընաս բարեաւ ծերուկ իմ հայր .  
Մայրիկ մի լար զաշերդ սրբէ ,  
Տուած կաթըդ հէլլալ արէ .  
Խօսեցեալդ իմ համբար մի քեզ ,  
Քոյր չեմք մինակ Աստուած ընդ մեզ :  
Երթամ խառնեմ քաջաց ՚ի պար ,  
Ոտից կոխան դընեմ հաւսար .  
Ապստամբից բիւր գըլխըներ ,

Գնտակ առնում տամ վար ու վեր .  
՚ի արիւն թաթաղ լեզուաւ սըլոյս ,  
Զվրէժ երգեմ իմ հայրերուս :

Ահա ելնեն սարերն ՚ի վեր ,  
Սովալըլուկ անյագ դայլեր .  
Գիւրտն ու գողեր են ձաշակեր ,  
Իբրու ժանտախտ մեր վրայ հասեր .  
Լերանց կատարեն ամպեր վարեր ,  
Մոայլ մըրիկ մարտից փրթէր :

Որոտացին լեռներ ու ձոր ,  
Եւ արձագանք յանտառս ՚ի խոր .  
Յորժամ կրակէ կարկուտ տեղաց ,  
Եւ կապարեայ երկին չեղաց .  
Շուառեցաւ թաց թշնամին ,  
Մահաշըլուկ փակեալ յամպին :

Հասէք հովեր , հասէք ծովեր ,  
Առէք տարեք դուք մեր քայլեր .  
Լեռներ դուք մեր վրայ ինկէք ,  
Եւ քարանձաւք մեզ ծածկեցէք ,  
Զի Զէյթունցւոց մէն մի դնտակ ,  
Պաղ մի փոէ մինէ դիակ :

Ի՞նչ են ներկեր մեր սարն ու ձոր ,  
Է՞ր զայրացեր գետք ընդ ծոր ծոր .

Ա՞հ ի՞նչ աղուոր որդիքն Հայոց ,  
Զծիրանին արկեալ կրկնոց .

Լերանց արիւնն գետոց յորդել ,  
Նոցա զարարս են մեղ պատմել :

Ո՞վ Զէյթունցի կըտրիք ու որայք ,  
Բարեաւ գնայցէք բարեաւ դառնայք .  
Կարմիր ստիւք ընդ մէջ արեան ,  
Իբր ՚ի հնձան դսիեն թնդան .

Եւ պարակից իւրեանց կարդան ,  
Զորդիս Հայկայ տուն Յորդումեան .  
Կեցցէ յաւերժ մեր վեհ Սուլթան ,  
Կեցցէ նա միշտ ՚ի յաւիտեան :

ԷՄՄԱՆՈՒԵԼ ԵՍԱԹԵԱՆ

## ՄԱՅՐՆ ԵՒ ՈՐԴԻ

Մայրն

Անուշքունիկն աշերն առեր ,  
Անուշ հովերն ալ տարսուբեր .  
Իմ տատրակիս քունն է եկեր ,  
Անուշ երգով ըսեմ օր օր :

Որդին

Ես քուն չունիմ անգութ մարիկ ,  
Հերիք աչքս կապես , հերիք .

Մէկ պահիկէն կ'ընեմ պաճիկ ,  
Իս արձըկէ , մ'ըսեր օր օր :

Մայրն

Մինչեւ չի լան մատաղ մանկիկ ,  
Ծիծ չեն իտար անոր գառնիկ .  
Դուն չի լացած իմ մէկ հատիկ ,  
Ես ծիծ կուտամ , կ'ըսեմ օր օր :

Որդին

Խղճուկ սրտով ձայն եմ ձըգեր ,  
Կը ձըգձըվամ , դուն չես լսեր .  
Անուշ ձայնիդ ես զմայլեր ,  
Ես կուլամ , դուն կ'ըսես օր օր :

Մայրն

Արցունիքներդ մարդարտի պէս ,  
Երեսդ ՚ի վայր ի՞նչ կը թափես .  
Մի լար ծագուկ , մի՛ լար , մեղք ես ,  
Ո՞վ կ'ուղես , ան ըսէ օր օր :

Որդին

Գիրկդ ինձի հանգստարան ,  
Ծիծերդ բերնիս անուշ ծորան .  
Իրիկուան դէմ պառկիմ օրրան ,  
Աչքս կապէ , ըսէ օր օր :

Մայրն

Փընացնեմ իմ աղաւնիս ,  
Մեծացնեմ սիրով սըրտիս .  
Կարմիր վարդի նըման բացուիս ,  
Շուքդ նըստիմ , ըսեմ օր օր :

Որդին

Փիչ մը թուլցներ թեւերս ոտքերըս ,  
Ալ թըմբեցաւ փափուկ մըսերս .  
Անուշ մըբախն առնէ աչքերս ,  
Հապա ոըխմէ կարդա՞ օր օր :

Մայրն

Այդ սուտերովդ չեմ խաբուիր ես ,  
Կուղես որ զիս նըստեցնես .  
Զի քընանաս , ծիծըս ուտես ,  
Դատարկ տեղը ըսեմ օր օր :

Որդին

Փիչ մը ձոր ձոր , քիչ մը ձար ձար ,  
Քիչ մը տան տան , քիչ մը պար պար .  
Քիչ մ'ալ պապան , առ հոպապա տար ,  
Քիչ մ'ալ մէն մէն , ետքը օր օր :

Մայրն

Ամ քու յեզուդ կուտեմ հիմայ ,  
Քու կանգունովդ կըտաւ չի կայ .

Տան տան , մէմէ , ալ հաբաբայ ,  
Աչուկ պահ պահ , ըսեմ օր օր :  
Որդին

Սիրտդ քար է , ալ հասկըցայ ,  
Լացի լացի , շահ չի գտայ .  
Ալ քնանամ , ճարը չի կայ ,  
Երկան երկան ըսէ օր օր :



## ՆՈՒԱԳ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Ողջն հրեշտակդ աւետաբեր ,  
Ողջն զուարթունդ երկնային .  
Սիրտք անձկայրեաց մեր անհամբեր ,  
Քել ընդ երկար մնային .

Խնդա Հայաստան ,  
Հայոց օրօրան :

Լուսափետուր իջաւ յերկնից ,  
Սէլն ՚ի ժըպիտ հայրենեաց .  
Լցաւ քաղցրիկ յոյսեր աղդիս ,  
Ծագեց արեւ խնդութեանց .

Ցնծա Հայաստան ,  
Փառաց օթեւան :

Ահա այժմիկ վարդէ պսակ ,  
Կը բոլորէ քո ճակտին .  
Սիրտ առ և քայլ առ համարձակ ,  
Առջիդ բացուած յասպարիզին .

Ոյժ առ Հայաստան ,  
Քաջաց գերեզման :

Հայեր՝ լուսոյ ժամն է հասեր ,  
Օն՝ վառեցէք ձեր ջահեր .  
Զեր քով առաս իւղ ունեցէք ,  
Զի խաւարին չի մնաք երբէք :

ԱԼ ԵԼ Հայաստան ,  
Կանդնէ յաւիտեան :

Ա. Մ. Մ.



Սիրոյ չքնաղ պերձ հրեշտակ ,  
Զեռն ՚ի մատեան սուրբ օրինաց .  
Անդրէն յերկնուստ գայ երկնառաք ,  
Մեղ պարդեւել Սահման և Կարդ .

Սէրն ու միութիւն ,  
Սահմանադրութիւն :

Ժպտի զուարթուն գեղածիծաղ ,  
Ես եմ, գոչէ, ձեր փրկութիւն .

Ես Հայոց փառք , Ես սիրտ խաղաղ ,  
Դարձեալ անդրէն գտմաւետել .

Սէրն ու միութիւն ,  
Սահմանադրութիւն :

ԱԼ մերկացէք խեռ նախանձու ,  
Զար մախանաց կեղծ վերաբկու .  
Հեռմւ ոգին ատելութեան ,  
Եւ առաջնորդ թող ձեղ ըլլան .

Սէրն ու միութիւն ,  
Սահմանադրութիւն :

Փառք Յոյս և Լոյս Հայոց Ճակտին ,  
Զերդ գարնայնի արեւ փայլին .  
Հաշտ են երկինք ընդ ձեղ , Հայեր ,  
Զեր հետ ըլլան անծայր դարեր .

Սէրն ու միութիւն ,  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ :

Ա. Մ. Մ.



ԵՐԳ

ԱԼԱՐՊՈՎԱՆ

ՄԱՄԻԿԱՆԻ

Հիմի՞ էլ լըռենք, եղբարք, հիմի՞ էլ,  
Երբ մեր թշնամին իւր սուրն է դըրել.  
Իր օրհասական սուրը, մեր կըրծին,  
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին.  
Ասացէ՞ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,  
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին.  
Զընջեց աշխարհքից Հայկայ անունը,  
Հիմքից կործանեց Թորդոմայ տունը.  
Խըլեց մեզանից թագ, և խոսք, և զէնք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,  
Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին.  
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,  
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց.  
Վայ մեզ, շղթայով կապած դերի ենք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,  
Սոսկալի զէնքը բըռնած մեր գլխին.

Կուլ տալ է տալիս արտասուք առատ,  
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.  
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պըտուենք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,  
Լիրբ գոռողութեամիք լըրած էր հոգին.  
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,  
Արտաքառում է մեզ մեր բընիկ երկրից.  
Պանդուխտ, հալածեալ եղբարք, ուր դիմենք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,  
Անդոհ մեր բերած ծանր զոհերին.  
Իւր միրբ, նըզոված ձեռքը կարկառեց,  
Ազգութեանս վերջին կապը պատառեց.  
Հայի կորուսոր մօտ է, ի՞նչ անենք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,  
Արհամարհէլով մեր փառքն աղդային.  
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,  
Գայլազգեստ գառին մեզ գըլուխ դըրաւ.  
Ուրբ խորան չունինք, արդ ուր աղօթենք,  
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, մարդիկ ի՞նչ կասեն,  
Երբ մեր տեղ քարինք, աղառաժք խօսեն.

ԶԵ՞Ն ասիլ որ Հայք արժանի էին ,  
Այդ ստըրկական անարդ վիճակին .  
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք ,  
Մինչեւ ե՞րբ լըռենք :

Թա՞ղ լըռէ մունջը , անդ ամալցջը ,  
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը .  
Բայց մենք , որ ունինք հոգի ու սիրտ քաջ ,  
Ե՛կ անվախ ենենք թըշնամու առաջ .  
Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք ,  
Ու այնպէս լըռենք :

Թ. Տ. Գ. ՊԱՏԱԽԵԱՆ

---

ՄԱՍՆ Բ.

### ԸՆԿԵՐԻՔ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ԵՐԳՈՅՆ

Հայ եմք մեք անուամբ դիւցազն սուրբ ար  
եամբ ,  
Առինք մեք դրօշ արտսուրք քաջութեան .  
Յաղթենք զինահար երկըսոտ դրացիք ,  
Ուր հոս այցելու են վատ գուեհիկ .  
Մեզ կանանչ դափնի և ծաղկանց պսակ ,  
Հիւսին կարմրորայք , կուռեցէք տղայք .  
Եեշտ սուր հարուածոյ կոտրեցէք նիզակք ,

Ըլլայ վատին սիրտ լերդ խառնորակ :  
Ի սուր , ՚ի սուր մղենք ՚ի բաց ,  
Այն Պարսիկ յազդաց :

—\*—

ՀԱՅՐԵՆՍԵՐ ԶԻՆՈՒՈՐԻ ՄԸ ԵՌԱՆԴԻ  
Զինուորը

Ահա մարտին փողը հնչէ ,  
Զիս պատերազմ կ'հրաւիրէ .  
Երթամնետուիմ բոցերու մէջ ,  
Զի իմ փառքս միայն այս է :

Կեանքս արիւնս անձկայրեաց ,  
Զոհեմ թափեմ վասն հայրենեաց .  
Զարնեմ ջարդեմ վաս թշնամին ,  
Թող մարմինս բերուի մեռած :

Հիմք

Օ՞ն ընդ յառաջ երթ անվեհեր ,  
Տուր թշնամոյն վէրս կարեվէր :  
Զինուորը

Թշնամին մեզ կը մօտենայ ,  
Քաջ արանցո դէմ կ'յոխորաց .  
Վայրագ գաղանն արիւնարբու ,  
Մեր հայրենեաց մահ կ'սպառնայ :

Օ՞ն ընդ յառաջ գիմենք անխուով ,  
Ցրուենք վանենք սուբներով .  
Ռումբ և կայծակ տեղանք գլխուն ,  
Փախչի իսպառ վատն ամօթով :

Կիճը

Գնա՞ քաղդ իմ վեհ անվրդով ,  
Վատ թշնամին վանէ փութով :  
Զիճուռը

Զինուոր եմք մեք երկիւղ չունիմք ,  
Վասն հայրենեաց միշտ կ'զոհուիմք .  
Արիւն և կեանք չեմք խնայեր ,  
Ազատութեան համար կ'մեռնիմք :

Հուր կը ցայտէ մեր աչքերէն ,  
Արիւն հոսի մեր սրտերէն .  
Երբ սուրն շողայ մեր ձեռքին մէջ ,  
Կը սարսին անոր շողզողումէն :

Կիճը

Հայրենիք է մեր պահապան ,  
Ազատութեան անխոց վահան :  
Զիճուռը

Մեք հայրենեաց նահատակ եմք ,  
Թշնամոյ դէմ կը խիզախիմք .  
Պատերազմի երբ փողն հնչէ ,  
Սուր ՚ի ձեռին հոն կ'վազեմք :

Վայ անոր որ կ'խրոխտայ ,  
Ազատ քաջաց կուրծք կ'բանայ .  
Շանթաձիգ մեր գնամակներէն ,  
Կ'սատկի շան պէս անխնայ :

Կիճը

Վայ վատին այն որ իբր երէ ,  
Առիւծ քաջաց դէմ խիզախէ :  
Զիճուռը

Մնացիր բարեաւ քաղցրիկ մերդ իմ ,  
Զիս կը կոչէ հայրենիք իմ .  
Պատերազմի դաշտին վրայ ,  
Յիշէ զիս միշտ թէ իսկ մեռնիմ :

Ազատութեան է մեր դրօշը ,  
Հայրենիք է մեր կրօնքը .  
Մեռնիմք զոհուիմք ամենքնիս ալ ,  
Թող վրկուի մեր վեհ Ազգը :

Ի միասին

Հապ օն յառաջ ՚ի զէն ՚ի վրէժ ,  
Հայրենիք մեր կեցցէ յաւ երժ :

թ. նախան

→→→♦♦←←←

## Ե Բ Գ

Հայեր , մինչեւ Երբ արտասուենք ,  
Լանք յուսահատ , յիշենք , հեծենք .  
Կընող անկ է ողբալ , կոծել ,  
Մեզի՝ քըրտինք , արիւն թափել :

Կ'ուզե՞նք փըրկութիւն ,  
—Սիրենք գիտութիւն .

Սիրենք միութիւն ,  
Ու ազատութիւն .

Սիրենք Հայութիւն ,  
Սահմանադրութիւն :

Միթէ ողբով կանգնի՞ն , Հայեր ,  
Մեր բազմազգի աւերակներ .  
Արի՝ կենանք , գործե՞նք փութով ,  
Լցո ծաւալենք ջերմեռանդով :

Կ'ուզե՞նք փըրկութիւն ,  
—Սիրենք գիտութիւն .

Սիրենք միութիւն ,  
Ու ազատութիւն .

Սիրենք Հայութիւն ,  
Սահմանադրութիւն :

Թող մեր աչեր հուր արձակեն ,  
Ու մեր լանջեր թընդան , տրոփեն .

Երակաց մէջ , փոխան արեան ,  
Հայրենասոէր բոցք ընթանան :

Կ'ուզե՞նք փըրկութիւն ,  
—Սիրենք գիտութիւն .

Սիրենք միութիւն ,  
Ու ազատութիւն .

Սիրենք Հայութիւն ,  
Սահմանադրութիւն :

Անցան , անցան սուգի գարեր ,  
Սէր , յոյս ու լցո խայտան յեթեր .

Օ՞ն , շարժեցէք , ճակատք արի ,  
Զարթիք , առինձք Հայաստանի :

Կ'ուզե՞նք փըրկութիւն .  
—Սիրենք գիտութիւն .

Սիրենք միութիւն ,  
Ու ազատութիւն .

Սիրենք Հայութիւն ,  
Սահմանադրութիւն :

1872 մայիս 16

ր. 2.

## Ն Ո Ւ Ա Գ

ՀԱՅՈՐԴԻ ԱՅՑ

Ա՛հ դու միայն Սէր իմ սրտին ,  
Որբացեալըդ Հայաստան .

Քեզմով եռանդ , խանդ կաթոգին ,  
Երակացըս մէջ խայտան :

Յօտարութեան մեռած եմ ,  
Ի տեսք քոյին վառված եմ :

Դու խանձարուր ես մարդկութեան ,  
Հայոց ձակտին սուրբ պարծանք .  
Դու ես իմ քաջ հարց գերեզման ,  
Քեզմով լիցի ինձ բերկրանք :

Թոյն և մահ է օտարին ,  
Փառք և գոհար թանկադին :

Հերեք այսչափ թշուառութիւն ,  
Իմ սեաւ աւուրց մանկական .  
Հերեք այսչափ շանթեր Հայուն ,  
Արցունք , հառաչք ողբաձայն :  
Ես չ'մուզեր օտար կեանք ,  
Ո՛չ ալ պատիր սփոփանք :

Երքեղ գարուն ինձ խոստանայ ,  
Վարդ և զեփիւռ նուիրել .  
Այլ իմ սրտի բաժին մնայ ,  
Յաւերժ ողբալ , հառաչել :  
Ինձ համար չեն սէր , ժըպիտ ,  
Ա՛հ ուր է իմ հայրենիք :

Հայրենիքու հեռու չիք ինձ ,  
Ջընջին նշոյլ , զուարթ կեանք .  
Ա՛լ մաշեցան իմ ոսկրներ ,  
Յօտար աշխարհ մըթութեան :  
Պանդըստին յոյս , միթիթար ,  
Է նըրբաթել իւր քընար :

Ես մինչ տեսնեմ զՆայաստան ,  
Ամպոտ Մասիս ողջունեմ .  
Զուարթ ձայներ ազատութեան ,  
Ուրախութեամբ մինչ լսեմ :  
Այն ատենէն կըսկըսի ,  
Յիս նոր եռանդ և ոգի :

Անմահ առքեզ իզձ իմ ուղղեմ ,  
Դու միակ Յոյս թշուառին .  
Յօտար ժայռեր այս տարադէմ ,  
Լուր աղօթից պանդըստին :  
Այս ամայի վայրերէն ,  
Երկինք փրկեա զիս մէկէն :

Մ. Միռսան

## ԵՐԳ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Զինուորին երգերը ,  
Եղբարք լսեցէք .

Աշխարհիս դեպքերը ,  
 Լաւ ըմբռնեցէք :

Ոմանք հոյակապ ,  
 Պալատներ ունին .  
 Ոմանք շեն դղեակ ,  
 Խաղաղ բնակին :

Զգեստն զարդարուծն ,  
 Բայց փորբ քաղցաց .  
 Կարի տայ ձիուն ,  
 Ինքն ուտէ սոսկ հաց :

Բայց դշվառ զինուորը ,  
 Զունի ոչ մի բան .  
 Ոչ հանդիստ ցերեկն ,  
 Ոչ քուն գիշերուան :

Զինուորին դատարկ ,  
 Զկայ աշխարհի .  
 Խնդրէ բարեւոր ,  
 Ու ապաստանի :

Թմէ քաջ մարտնչին ,  
 Կառնու մի պարգեւ .  
 Երբ վիրաւորուի ,  
 Կ'սէ մնաս բարեւ :

## ԵՐԳ

ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ

Ո՛վ հայր մեր . հայր որ ես յերկին ,  
 Սուրբ եղիշի անուն քցին .  
 Եկեսցէ մեզ , Աստուած հըդօր ,  
 Աքայութիւն քո երինաւոր .  
 Եղիշին կայք քո խընկելի ,  
 Որպէս յերկինս և աստ յերկրի :  
 Ը՛զ հաց հոգւցն մեր և մարմնց ,  
 Տուր և այսօր շընորհիւ քց .  
 Եւ թնդ մեզ թողլ ըզ մեր պարտիս ,  
 Որպէս և մեք թողումք յաստիս .  
 Ամենեցուն որ մեզ մեղմն ,  
 Կամ մնացին մեզ պարտապան :

Ո՛հ , մի՛ թողուց ՚ի փորձութիւն ,  
 Այլ հանապազ հաս յօդնութիւն .  
 Եւ յամենայն չարին մըրցմանց ,  
 Փըրկեա ըզմեզ Տէր գըմութեանց .  
 Զի քո է միշտ Աքայութիւն ,  
 Քո փառք պատիւ և զօրութիւն :

## ԻՂՋ ՊԱՆԴԻԽԻՆ

Թողէք զիս անէծք , ոճիրք մշտատեւ ,  
ՎՃիռք անողոք բաղդին անարեւ .  
Թողէք որ փշրեմ շղթայք իմ ոտից ,  
Յոր դարք աստուածոց հեծեն վշտալից :

Զիս զիս մայրական կարօտ տանջէ յար ,  
Թողէք որ երթամ հասնիմ յԱւարայր :

Թողէք զիս օտար ափունք մի անգամ ,  
Թողէք , որ սար , ձոր անցնիմ ու դամ .  
Վաղեմթեւաբաց , դեռ աչերս ՚ի լոյս ,  
Տեսնեմ ամսամած արեւն իմ հոգւոյս :

Զիս զիս մայրական կարօտ տանջէ յար ,  
Թողէք որ երթամ մանեմ յԱւարայր :

Թողէք , զիս անգութ աստղեր ու լուսին ,  
Ծաղիկ ու զեփիւռ արցունք պանդխտին .  
Թողէք , որ ծածկիմնոձեաց շուքին տակ ,  
Ուր Վարդան հանդչի , ու փառաց վրտակ :

Զիս զիս մայրական կարօտ տանջէ յար ,  
Թողէք , որ երթամ նստիմ յԱւարայր :

Թողէք , որ գրիչս առնեմ ու քնար ,  
Սրտիկսու հոգիս լարեմ վշտահար .  
Երդեմ , ոչ երդեմ հառաչանքս ու սէր ,  
Յաշխարհն Աստուծոյ , յԵրկիրս իմ աւեր :

Զիս զիս մայրական կարօտ տանջէ յար ,  
Թողէք , որ երթամ ու լամ յԱւարայր :

Թողէք մէն մաղերս շուրջ ածիմ կարօտ ,  
Տեսնեմ Եղեմիս կենացն առաւօտ .  
Տամ անդ սիրահար շնջիկս յետին ,  
Զոր Հայուն բաժակ դրած է երկին :

Բաւ զիս մայրական կարօտ տանջէ յար ,  
Թողէք , ալ թողէք , մեռնիմ յԱւարայր :

1872 ապրիլ 12

Ս. Ֆելիքսան

## ՆՈՐ ՏԱՐԻ

Եղանակ (ԼաՄարտեն)

Օն , փութացէք հասեալ է ժամ ,  
Հարեք մարտի փողերն ու ժգին .  
Մեղ ահարկու կայ պատերազմ ,  
Արեամք զինեալ է թշնամին :

Փշեմք ազատ , բանամք դռներ ,  
Զար նախանձուն մեր ոխերիմ .  
Որ դարերով է մեղ փակեր ,  
՚ի կուրութեան ՚իբանտ մթին :

՚ի զէն , օն , փութացէք ,  
Գունդ ՚ի գունդ Հայ դատերք .  
Լուսովն այս նոր տարւոյ վանեմք ,  
Բռնութիւն դաւ ու նենդ :

**ՄԵՐ** մարք , մեր քորք խոցեցան շատ .  
Շղթայակապ ՚ի գերութեան .  
Մինչդեռ մեր հարք , եղբարք աղատ ,  
Անփոյթ էին կոյր զկուրայն :

**ԱՐԴ** և սոքա լուսովն ուսման ,  
Տեսան վէրքերն իրենց ազդած .  
Ուստի լինին մեզ օգնական ,  
Առնել նախանձն արտահարած :  
՚ի զէն , օն , փութացէք , եւլն :

**ԱՂԱՍՊՈՒԹԵԱՆ** կանգնեմք դրօշ ,  
Մեր իդական փափուկ սեռին .  
Տեսնեն մեր քաջ ընկերք անցուշ ,  
Թ'այնու իրենց է մեծ բարին :

**ԱՌՈՐ** տարւոյ զէնք առէք զինուորք ,  
Մեր բառն ընկենք Հաւատք , Յոյս , ՄԵՐ .  
Իմաստութեան դստերք եմք , քորք ,  
Այս մեզ փառք , պատկ , այս ձեզ հրաւեր :  
՚ի զէն , օն , փութացէք , եւլն :

\* \* \*

ՀԱՌԱՋԱՆՔ ԱՐՄԵՆՈՒՀԻՈՑՆ

## ՚Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Երբ կը լսեմ Հայաստանիս անունն , գնտայ սիր-  
ալս ուժգին ,  
Երբ կը յիշեմ իր տառապանքն , արտասուօք  
աչքի կը թրջին .  
Միթէ անոր նըման թշուառ կայ հայրենիք  
մալ արդեօք ,  
Որուն ձայնին լըսո՞ղ չի կայ , կուլայ կ'ողբայ  
դառն ցաւովք :

Ելէք Վարդան , Տիգրան , Արամ , տեսէք ձեր  
մայրն միանդամ ,  
Թող իր ողբերն արթնցունեն ձեզ ձեր շիրմաց  
մէջ անդամ .  
Տեսէք , ինչչէս վտարանդի կը թափառի տուն  
Հայկայ ,  
Ամեն կողմէն կը հալածուի , կը հարուածուի  
անխնայ :

**ԱՇ** , Հայաստան , դու սիրուն մայր , մինչ Երբ  
այսպէս քու որդիք ,  
Քեզնէ հեռու պիտ' հառաչեն . իսկ դուք մինչ  
Երբ թափառիք .

ԱՌՆՀ ԵՐԲ և ես մայրակարօտ Արմենուհիս քու  
սուրբ գիրկ ,  
Զի գամ պիտի որ արտասուօքս թանամ ձեռ-  
քերդ քու փակկիկ :

ԹԹէ կարէի թուշիլ Երթալ գլխիկ դնել իմ մօր  
ծոց ,  
Ուրախութեան արտասուօքս հոն շիջուցանել  
սրտիս բոց .  
Գէթ միանգամ փայփայանօք գուռիլ անկէ ,  
տալ համբոյր ,  
ԱԼ թող զիս զոհ ընէր հոն տեղ թշնամւոյն  
սուր սայրասուր :

Եկէք , Եղբարք և սիրուն քորք , ձեռք ձեռքի  
տանք ու գործենք ,  
Մեր թշնամին տգիտութիւնն է ուրիշ տեղ չը  
փընտուենք .

Այդ թշնամին զմեղ թշուառ ըրաւ բաժնեց  
մեր մօրմէն ,  
Պէտք է որ զայն ՍԻՐՈՎ , ՈՒՍՄԱՄԲ յաղթենք  
վանենք մեր մէջէն :

ԱՌՆՀ , Հայ Եղբարք , Հայկաղն քոյրեր , մինչ Երբ  
այսպէս անտարբեր ,  
Թողուք որ գան որոմ ցանել սիրոյ , ուսման  
մեր արտեր .

ԱՌՆՀ , այն ատեն պիտ' արթննաք , Երբ ամեն  
բան թշնամին ,  
Քանդէ , ցըուէ , տայ հովին որ յիշատակաց  
ըլ մնայ մին :

Արմենուհի , ալ յուսահատ ձղքէ սիրտդ որ  
գուրս թուչի ,  
Տիսուր գեշ գեշ հառաչքիդ ձայն , ամեն կող-  
մեր թող հընչի .  
Երթայ հասնի մինչ Հայաստան , լսէ քու մայրդ  
և գթայ ,  
Թերեւս զքեշ միսիթարէ . ալ ուրիշէն յոյս  
չի կայ :

ԱՌՆՀ , այս ցաւով վախնամ թէ ես պիտի մըտ-  
նեմ գերեզման ,  
Արձագանք մ'ալ տուող չի կայ , Երբ կը պօ-  
ռամ Հայաստան .  
ԱՌՆՀ , ամեն կողմ լուութիւն է , կարծես մահն  
է թագւաւորեր ,  
Մեռելոց ու աւերակաց մէջ ալ ես բու եմ  
դարձեր :

ԱՌՆԻ , Հայաստանո , սիրտս ու հոգիս քեղնուի-  
րեմ , ընդունէ ,  
Թէ կորելի , թող ես մեռնիմ ու Հայաստանս  
ոտք ելնէ .

Անոր սիրոյն բանտն ալ տրուիմ, պալատ է ան  
ինձ համար,  
Ոտքերս ձեռքերս շղթան զարնեն, երջանկու-  
թիւն է ան ալ:  
  
Թէ մինչեւ իսկ աքսորուիմ, զիս թափառա-  
կան ընէ բաղդն,  
Հայաստանիս սիրոյն համար ամեն տեղ ինձ  
կ'ըլլան դրախտ.  
Նպատակիս հանիմ միայն, թող զիս հանեն  
կախաղան,  
Կախաղանէն ալ խղդուկ ձայնս պիտի կանչէ  
ՀՍ. ՅՈ. ՍՍ. ՞ն:

Մ. ՓՈՐԹՈՒԹՎԱԼԵԱՆ

~~~

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ովսուրբ վայրեր, անհոգ ժամեր իմկենաց,
Որ մտացս մէջ քաղցր յիշատակ մ'էք թողած.
Ըսէք ինծի, չէ կարելի ետ դառնաք,
Այրած սրտիկս զովացունել գալ փութաք:

Ինչ քաղցր է սէրն դպրոցական ընկերաց,
Որով մարդիկ մանկութենէն հետ միմեանց.
Գաղափարաց սերտ կապով մը կը կապուին,
Եւ այդ կապով միմեանց եղբարք կը մինին:

Բարեկամաց մէջ ամենէն քաղցրնէրն ,
Են դպրոցի ու պատերազմի ընկերներն .
Որոց սիրուն յիշատակներ քան զայլոցն ,
Թողուն ի սիրա՝ կարօտոյ հուր . բոց և խոց :

Ո՛չ, երջանիկ էք դուք մանկունք դպրոցաց ,
Որ ձեր անմեղ ժամերն ուսման նուիրած .
Մեղուի մը պէս ծաղիկներէն մեզր քաղէք ,
Եւ աշխարհիս ոչ հոգն ոչ վիշտն կը էք :

Կար ատեն մ'որ ես ալ ձեզ պէս երջանիկ ,
Դպրոցին մէջ զաշխարհն և զիմ հայրենիք ։
Այլ իմըն կերպ կերազէի և չէի ,
Գիտեր թէ ի՞նչ մեծ ցաւ սրտիս տան պիտի :

Բայց երբ անձամբ ի Հայաստան դիմեցի ,
Եւ հայրենեացս թշուառութիւնըն դիտեցի .
Երջանէութեան յօս , խինդ թռան իմ սրտէս ,
Հառաջանօք միշտ ևահա լսուի ալ բերնէս :

Ա՛հ, Հայրենիքս, ինչու այդ պէս կաս թշուառ .
Զը մնաց մէկն որ հոգայ գրտնելքեղ մէկ ճար .
Ա՛հ, ամենքն ալ կը տեսնեմ որ անզգայ ,
Անդութ դարձեր , ողբերդ լսող մ'ալ չի կայ :

Երանիթէ ես ալ մանուկ մ'ի դպրոց ,
Եւ կամ տղայ մ'որ դեռ հանգչի յիւր մօր ծոց .
Ըլլայի և չզգայի այս բիւր ցաւերն .
Մինչ հայրենեացս այսպէս անկար եմ յօդնել :

Մ. ՓՈՐԹՈՒԹՎԱԼԵԱՆ

~~~~~

## ՎՏԱՐԱՆԴԻՆ

**Թէպէտ** վտար քաղքէ քաղաք կամ թաւ  
փառ ,

բաղդնու մարդիկ զիս հալածեն անգթաբար .

**Ա.յլ** արդէն իսկ սջԱ.ՏՈՒԹԵԱՆ երբ լին ձայնն ,

թռաւ բերնէս , յանձն առի զայս վիշտո համայն :

Աղատութեան ես անձնուէր ,

վիշտ ցաւ սիրով եմ յանձն առեր :

**Թէպէտ** հեռի եմ սիրելեաց գրկերէն ,  
Հեռի անոնց գոլորիկ ձայնէն , երգերէն .

Տիսուր քնարս նոճիներէն վար կախած ,

Լոիկ ողբամ խեղճ ազգիս բաղդն մտայած :

Աղատութեան ես անձնուէր ,

վիշտ ցաւ սիրով եմ յանձն առեր :

**Թէպէտ** յաշացս դառըն յորդեն արտասուք ,

Յայտնել սրտիս կարօտն ու սուդ և պասուք .

**Ա.յդ** արտասուք սրտիս վէրքերն լուանան ,

Վէրքեր զորոնք ազգիս ցաւերն հոն բանան :

Աղատութեան ես անձնուէր ,

վիշտ ցաւ սիրով եմ յանձն առեր :

**Վատանդին** , թէպէտ դառն են այս օքեր ,

Օր մ'ալ տեսնես , նպատակիդ ես հասեր .

Աղատութեան յաղթանակը քու ձեռքիդ ,

Վարդն ու շուշան պսակ պՃնելդան ձակտիդ .

Աղատութեան երբ անձնուէր ,

Վիշտ ցաւ սիրով ես յանձն առեր :

Մ. ԳՈՐԾՈՒԳԱՆԱՆ

## ԱՐՏԱՍՈՒՔ ԿՈՒՍԻՆ

### ՅԱ.ԻԵՐԱԿՍ ՀԱՅՐԵՆԵԱԾ

Աւերակաց երկրի մը մէջ ուր գահերու  
բեկորներ ,

Եկեղեցեաց և պալատանց շքել շէնքեր ու

թագեր .

Տապաստ յերկիր կարծես կ'ողբան իրենց  
նախկին փառքն լոիկ ,

Ո՛հ , կը տեսնեմ մելամաղձոտ տիրագէմկցու

մի փափկիկ :

Բայց ի՞նչ այս ձայն հառաշանաց որ կ'ար-  
ձակէ իւր սրտէն ,

Ա.յս ի՞նչ հեղեղ է արտասուաց ոքք կը հոսին

աշերէն .

Եւ կը թանան կարմիր այտերն ծածկուած  
հերովք քաջաթուիր :

Ինչպէս այդուն ցող՝ տերեւովք ծածկեալ վար-  
դին դողդոջ գլուխ :

Ո՞հ, այնչափ յորդ են արտասուք որք կը  
թափին յիւր աչաց,  
Մինչ բըբաց վրան, ահ, ի՞նչ սոսկում, ար-  
եան հետքեր են թողած .  
Զուարթունք երկնից, դուք որ տեսնէք այդ  
արտառքներն, գթացէք,  
Դի իջէք յերկիր, բաժակի մ'մէջ մողվէք զա-  
նոնք վեր տարէք . . . :

Բայց ոչ թողէ՛ք, շիթքդ արտասուաց մար-  
դարիոք են մեզ համար,  
Եւ յաւերակսդ հոսող պղտոր ու դառն գե-  
տոց քաղցրարար .  
Թողէք, կուսին արտասուքներն աւերակացգ  
մէջ թափին,  
Որ այդ մէն մի կաթիներէն սպիտակ շու-  
շանք հոն ծին :

Անցած տեղերն իբրեւ գարնան զեփիւռ  
թողու քաղցրիկ բայր,  
Եւ դողդոջուն շրթամբք ահա աւերակաց  
տայ համբոյր .  
Ի գուճս իջեալ և հերարձադ արտասուա-  
թորմ աչքն յերկինս ,

Թեւերն պարզած, գետինն փոռուած ողբեր  
կարդայ ցաւագինս :

Ո՞հ, թող լուէ համայն բնութիւն, լսենք  
կուսին հառաչանք,  
Ինչու արդեօք այսպէս կ'ողբայ, ի՞նչ են իւր  
ցաւք, ականչ տանք .

Ո՞ր սիրտ կրնայ չը քստմնել ի լուր ։ Ճայնիդ  
դողդոջուն .

Որով կարծես թէ յուսահատ պատմէ ցաւե-  
րն իւր անհուն :

“Աստուած, գոչէր . մինչ երբ այսպէս խո-  
պսն թողուս այս երկիր,  
Մինչ երբ այսպէս անթիւ ցաւովք լցուի ուր-  
աիկս վշտակիր .

Ո՞ր մէկն ողբամ, ու երակներս թէ եղբարց  
կոիւ պդդալի ,

Որք միշտ զիրար կը հարուածեն . այս ի՞նչ օ-  
րեր ցաւալի ու :

“Այս ի՞նչ խեղճէ վիճակն Ազգիս որ բաղ-  
մաթիւ աղէտներ,  
Դըրսէն օձեր, ներսէն օձեր չորս կողմէն զինքն  
պաշարեր .

Մատնիչ որդիք, ոհ, իրենց ՄԱՅՐ-ՀԱՅՐԵՆՆԱՅ  
դէմեն զիներ ,

Կաշառաբեկ վատթար գրիչք, աղդ, խիղճ  
ծախել են ելեր „ :

“Ա՛հ, անդութներ, Աստուած, կրօնք, միւ  
թէ սո՞ւտ են ձեզ համար .  
Չիկայ երկինքն մէկն որ ձեզնէ պահանջէ օր  
մի համար .

Ոսկին է ձեր Աստուած, գիտեմ. անոր զու-  
հէք ամեն բան .

Բայց բնաւ զձեզ չը տանջէր գէթ խղճմը-  
տանքնուդ ձայնն անդամ : ”

“Ա՛հ, այս ցաւեր բանի վէրքեր բայցած  
են իմ սըրտիս վրայ, ”

Որ յորժամ լամ արտասուաց տեղ սրտէս գէպ  
աչքս արիւն գայ, ”

Երբ կը խորհիմ Ազգիս վիճակն, իմ ձմրուած  
այս սրտէս, ”

Կաթիլ կաթիլ կարմիր արիւն կը կաթիթի,  
Տէր, գիտես :

“Ու Տէր, ինչպէս նուիրական Մասեաց  
լերան այս դադաթ, ”

Մերթ կաղմեցիր ծիածան մը . այս արտառք-  
ներս ալ չէն շատ .

Որ գթութեան արև գականդ նշցյլքն անոր  
մէջ շոլ տան, ”

Եւ այս արտառք ծիածան մը կազմեն՝ ինչան  
հաշտութեան . . . :

Երբ զայս ըսաւ, ալ իմացայ թէ երկիրս է  
ՀԱՅԱՍՏԱՆ,

Եւ փափկիկ կցսն ԱՐՄԵՆՈՒՀԻՆ որ հոն շրջի  
ողբաձայն .

Թռայ իւր բոլ մսիթարիլ. բայց իր նման  
սրտացյզ,

Իրենին հետ սկսայ խառնել իմ արտառք  
ալ յորդահոս :

Մ. ԳՈՐԾՈՒՔԱԾԵԱՆ

→→→←←←←

## ՄԵՌՆԻՆՔ ԱԼ ԶԱՊՐԻՆՔ

Հայեր, ալ մեռնիք, մահն է մեր բաժին,  
Զապրինք ալ բնաւ, յաղթեց թշնամին .  
Զունինք ոչ դրօշ, ոչ թագ, գահ և սուր,  
Շղթապատ գերի, ցերբ ապրինք՝ ի զուր :  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

Զունիք՝ ոչ պաշտպան, խելք, սիրտ, մէր և ջան,  
Այս է մեր ներկան . . . թէ այս ապագան .  
Թող բացուին հողեր, քարեր ծածկեն մեզ,  
Աքեւ մեր աչք, լուսին շատ է մեզ :

Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Չ**ունինք՝ ոչ փափաք, գիւտ, արհեստ և գանձ,  
Աղքատ ենք ըստրուկ, մուրամք մեր զհաց.  
Փետուենք մեր մաղեր, պատռենք մեր կողեր,  
Արժան է մեզի, մենք մեզէն դործեր։  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Չ**ունինք մի «կղեր», աղքասէր, արի,  
Զկան և զինւորք, պաշտպան Հայ աղքի .  
Զի օտար շուքեր, փառքեր ընդունայն .  
Փոխեցին սրտերն, եղան մեզ դրուժան։  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Չ**ունինք ոչ կրօն, միութիւն և կապ,  
Քակեց մեզ «դաղանն» , եղանք ուժաթափ .  
Հայն՝ Հայուն դոգես խարդախ և օտար,  
Հայ կանայք օտար, լեզու, սիրտ օտար . . .  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Չ**ունինք խիղճ, հաւատք, չենք վստահ յիրեար,  
Կործանեմք զիրեար, պառակտեմք զիրեար .  
Անօդուտ լինին, դործ, ձեռնարկ Հայոց .

Որպէս ցեցք, ուտիչք, վերջ տամբ մեր դործոց:  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Չ**ունինք ափ մի հող, ջուր, օդ և մարմանդ,  
Փուշ, տատասկ դժնիկ, ցանուերէ մեր դաշտ .  
Քրտանց տեղ արիւն հոսեն մեր ձակատք,  
Մաշեց մեր ոսկելիք ընտանի խեռ, դաւք .  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Չ**ունինք մի օրբան, կորաւ Հայրենիք .  
Թափառինք չուառ, մեղ բարձ են քարինք .  
Չունինք գերեզման, ցօղն է մեր պատանք,  
Չունինք հոգի ալ, կղերն է մեր հըեշտակ .  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Ո**ւր այն Հայրենիք մեր դրախտավայր,  
«Գայլք» գառնազգեստ տուին զայն յաւար .  
Ազգութիւն, կրօնք իրար խառնեցին,  
Օտարաց երկիք մեղ ցիր ցան ըրին .  
Մեռնիք, ալ չապրինք մահն է մեր բաժին,  
Ո՛հ, այս մեռնիք, թող խնդայ երկինք . . .

**Ո**ւր այն փրկարար Հայկեանց «սկզբունք»,  
Չունինք արդար արհեստ անարատ ուսմունք .

Կղերն է յամառ , ժողովուրդն յիմար ,  
Չունինք հանգիստ հաց և ջուր զովարար :  
Մեռնինք , ալ չապրինք մահն է մեր բաժին ,  
Ո՛հ , այս մեռնինք , թող խնդայ երկինք . . . :

Վերցաւ կարդ , օրէնք և գործ Ազգային ,  
Չունինք Ազգապետ , ծառայ են բաղդին ,  
Չունինք մեծ ժողով . . . մուր Անդամք Ազգին ,  
Ինչ արդիւնք տեսանք , բայց թէ վատնեցին :  
Մեռնինք , ալ չապրինք մահն է մեր բաժին ,  
Ո՛հ , այս մեռնինք , թող խնդայ երկինք . . . :

Արհեստ օտարին և շահ ու վաճառ ,  
Օտարին Զատիկ , խոկ Հայոց աշխար .  
Ո՛հ , դժբաղդ վիճակ , անմիիթար կեանք ,  
Կոծ , աղէտք , սուդ , վայն , են Ազգին ժառանգ :  
Մեռնինք , ալ չապրինք մահն է մեր բաժին ,  
Ո՛հ , այս մեռնինք , թող խնդայ երկինք . . . :

Բայց չէ , չէ Եղբարք , տակաւին ապրինք ,  
Ապրինք՝ որ բառնամք այս վատ նախատինք .  
Թէ յօս մը չունինք , գէթ շարժում մ'ունինք ,  
Ասով թող սատկին մեր օձ թշնամիք :  
Ապրինք , ոհ , եղբարք դեռ հոգի ունինք ,  
Սուրբ է մեր վրէժ . առնունք ու մեռնինք :  
Բանամք դպրոցներ , փորձեմք միանդամ ,  
Վերջինն է այս փորձ , վերջին ճգնաժամ .

Քանի մը միլիոն Հայոց փրկութեան ,  
Ա՛յս է դեղ , դարման , այս է այս Ճամբան :  
Բայց թէ մի վայրկեան , մի օր յապաղենք ,  
Ամօթ մեղ Հայեր , մեռնինք , ալ չապրինք :  
Գ. Հ. ՌԵՏՈՒՆԻ

ԵՐԳ.Բ ԹԱՏԵՐԱԿԱՆ  
ՊԱՐԵՐԳ  
ԳԵՂՋԿՈՒՀԵԱՅ

Խոռոչին ամբողջ

Գարունն եկաւ զուարդ դէմքով ,  
Լեցուց դաշտերն հազար բերքով .  
Գարի վարսակ ցորենն ունինք ,  
Ալինչ կուզենք պէտք է հրձուինք :  
Այժ ու ոչխար հաւ սագ և բադ ,  
Գերուկ կովեր որ տան մեղ կաթ .  
Մեր տարեկան պարենն ունինք ,  
Ալինչ կուզենք պէտք է հրձուինք :  
Զմռան համար տաք հանդերձանք ,  
Կըլլան մեղի բուրդն ու բամպակ .  
Շերամ , մետաքս , զարդեր ունինք ,  
Ալինչ կուզենք պէտք է հրձուինք :

Աշխոյք տղայք կարմրուկ աղջիկք ,  
Պարգեւած է մեզի երկինք .  
Երբ զգացում սիրտ սէր ունինք ,  
Աւ պէտք է որ սիրենք սիրուինք :  
Դերասանք

Եկէք տղայք մէկ խօսքով ,  
Շարուինք զցդ զցդ քովիք քով .  
Սրտերնուս սիրածն առնենք ,  
Մինչ առ տու խնդանք պարենք :  
Դերասանուիլք

Ահա գտանք ընկերնիս ,  
Երթանք շարուինք տեղերնիս .  
Գրկենք զիրար և սլարենք ,  
Սուրբ սիրով զիրար սիրենք :  
Թիողացի մը

Նստինք սեղան մեր գեղջկական ,  
Ուտենք համով հացն ու ջաման .  
Մարսենք ինչ որ պատրաստ ունինք ,  
Կարագ մածուն և դարմ հաւ . . . կիթ ,  
Զը խմենք գինին առանց ջրի ,  
Ու ըզ զարկած դաւաթ բաժկի .  
Թռաք թռիք թռաք

Զի առանց ջրոյ թոյն է գինին . . .  
Ու մեծ վնաս ստամոքսին . . . ստա . . . մոք . . . սին :  
Դերասանք  
Հրձուինք տղայք այս ալ օր մ'է ,  
Զի կարճ կեանքին մահն յաջորդէ .  
Ապրինք ուրախ , չըլլանք մոլի ,  
Գէշ ախտերէն ըլլանք հեռի :  
Դերասանուիլք

Քաղաքացւոց սէրը պիղծ է ,  
Մէկ համբոյրնին մահը կարժէ .  
Հեռի ըլլանք զեղիսութենէ ,  
Որ խեղճ աղջկանց գերեզման է :  
Խոսմին ամրող  
Աիրենք ,  
Բայց միշտ .

Աիրենք զիրար չըլլանք մոլի ,  
Գէշ ախտերէն ըլլանք հեռի .  
Կեցցէ կեցցէ մեր գիւղապետ ,  
Օրհնութիւննիս այս ըլլայ գէթ :  
( պատ )  
Խոսմին ամրող

Երթանք տղայք զի վաղն ՚ի դաշտ ,  
Մէկ կսպասէ ցորենի սանդ .

Անուշ զեփիւռն առաւօտուն ,  
Կուզէ ըլլալ մեղ միշտ արթուն :

**Ե**թեծենք , մանրենք , մաղենք , մենք անդադար ,  
Ցորեանն , գարին , վարսակն , բրինձն ու հաճար .  
Երթանք երթանք լսւ քնանանք ,  
. Որ վաղն առտու կանուխ ելլանք :

Գ. Հ. ԱՇՏԻՔԻ

### ԶԻՆՈՒՈՐԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Աս ի՞նչ կորուստ ինչ մեծ ցաւ ,  
Բանթէլոնիս կոճակը .  
Կոճկելնիքէն բրթեցաւ ,  
Գնաց մտաւ որ ծակը :

Ահ կ'աղաչեմ պարոններ ,  
Թէ որ տեսաք նէ տեղ մը .  
Իմացուցէք որ ծակն է ,  
Երթամ հանեմ զայն շուտ մը :

Ոչ պղտիկ էր ոչ մեծ էր ,  
Զափաւոր ալ չէր ըսուէր .  
Ինչ գոյն ըլլալն ալ մոռցայ ,  
Կարմիր էր թէ սեւի վրայ :

Ահ մի՛ ինդաք պարոններ ,  
Այս կորուստս քիչ բան չէ .

Յիսնապետս իմանայ նէ ,  
Վերջը բանիկս բուսած է :

Գտէք գտէք ,  
Կոճակս գտէք .  
Գտէք գտէք ,  
Կամ տաս փարա տուէք :

Միտքս կուգայ թէ վրան ,  
Արծիւ մը կար խոշորկէկ .  
Եւ կորուսեալ այս կոբճան ,  
Գամված էր հոս ամուրկէկ :  
Ահ մի՛ ինդաք պարոններ , եւլն :  
Խանութները չեն ծախեր ,  
Եւրոպայէն չեն բերէր .  
Շունշանորդի կոճակին ,  
Ծառն ու արմատն է չորցէր :  
Ահ մի՛ ինդաք պարոններ , եւլն :

Բրուսիացւոց կոխւր ,  
Իմ գլուխս ալ պայթեցաւ .  
Քանդի Լորէն և Ալզաս ,  
Կոճակիս հետ մէջ խաղաց :  
Ահ մի՛ ինդաք պարոններ , եւլն :  
Զինափորձին աստենը ,  
Կը գիտեն մէր չորս կողմը .

Ոտքէս բռնէ մինչեւ վեր ,  
Կը խառնեն տեղ չեն ձգեր :

Ա.Հ մի՛ խնդաք պարոններ , եւլն :

Կուտան ձեռքս հրացան ,  
Շալկէ կըսեն ուսիդ վրայ .  
Ի՞նչպէս կայնիմ դուք ըսէք ,  
Բանթէլոնս վար կիյնայ :

Ա.Հ մի՛ խնդաք պարոններ , եւլն :

Բարեկամացս հանդիպիմնէ ,  
Հարկաւ պիտի բարեւ տան .  
Զեռքս հօսկէ պակաս չէ ,  
Պիտի տեսնեն ու խնդան :

Ա.Հ մի՛ խնդաք պարոններ , եւլն :

Աղջկանց ալ բան մը պէաք է ,  
Երբոր տեսնեն կը խնդան .  
Ճամբաս հատաւ փոխելով ,  
Թուչելու է պալօնով :

Ա.Հ մի՛ խնդաք պարոններ , եւլն :

Պառաւ կանանց բերանն ալ .  
Կրնաս գոցեր նէ գոցէ .  
Ա.Նանկ բաներ կը մաղեն ,  
Որ կոճակս բանբասեն :

Ա.Հ մի՛ խնդաք պարոններ , եւլն :

Սէրուհիս ալ Աստուած տայ ,  
Աս փորձանքս չիմանայ .  
Քանզի գիտեմ վախիոտ է ,  
Պզաթիկ բանէն դող կելլայ :

Ա.Հ մի՛ խնդաք պարոններ , եւլն :

Կեցէք միտքս բան մ'եկաւ ,  
Վաղեմ երթարձոր չ'կայ .  
Տիօժէնը ուր որ է ,  
Գուցէ կոճակս այն դանայ :

Ա.Հ կ'աղաչեմ պարոններ ;  
Զըլլայ երբէք զիս ծաղրէք .  
Օր կ'ըլլայ որ բրցունէք ,  
Գուք ալ կոճակի տէր էք :

Գ. Հ. Աշտուած

## ՇԻՆԱԿԱՆ Փ

Աղջիկ

Ինչ աննման առիթ մը նէ ,  
Զը փախցընենք ձեռքէ .  
Նստինք սա հովանոյս տակը ,  
Պատմեմ պատահածը :

Կաբալդ մը նէ սրտիս մէջը ,  
Անտանելի կզգամ ցաւ մը .  
Սրտէս կելլէն հառաչանքներ ,  
Ասանկ բան մ'ինձ չէր պատահեր :  
Ա՛խ , վա՛խ :

ՏՂԱՅ

Ինչ որ կզգաս հոգդ մընէր ,  
Բան չէ կանցնի ցուրտ ես առեր .  
Տաք լաթով մը սիրտ գոցէ ,  
Դթէդ 'ի վեր պաղ ջուր գաշէ :  
Հաղալ փռնքտալ թէ որ կուգայ ,  
Զի հաղանէ կ'անցնի կ'երթայ .  
Գիթդ ու բերանդ ուռեցեր է ,  
Ոիրտիդ ցաւը հարբուխէթ է :

ԱՂՋԻԿ

ԻՄ ցաւս այդ չէ .

Երբ քեզ տեսայ անցաւ ցաւս ,  
Հրճուանիք մը ազդեց սիրտս .  
Բայց դուն ինձմէ երբ հեռանաս ,  
Ցաւեր կուգայ վրաս :

Ոչ հաց կուտեմ ոչ կը ինդամ ,  
Միս մինակուկ կուլամ կողբամ .

Պատճառն ինչ է ես ալ չիտեմ ,  
Բայց լաւ գիտեմ որ հիւանդ չեմ :  
Ա՛խ , վա՛խ :

ՏՂԱՅ

Տուր ձեռքդ ինձի լեզուդ հանէ ,  
Լանկէկ շունչ առ շիտակ կայնէ .  
Բան չէ կ'անցնի ցուրտ ես առեր ,  
Ստամիքսդ շատ է լեցուեր :

ՄԵՂՐԻՆ միսէն զգուշացիր ,  
Շաբաթ մ'աբողջ ապուր խմէ .  
Բայց ասոնցմէ առաջ քեզի ,  
Լուծողական դեղ մը պէտք է :

ԱՂՋԻԿ

ԻՄ ցաւս այդ չէ :  
Երբ դուն կերգես հովտին մէջը ,  
Սիրտս է արձագանքը .  
Տիրութիւն մը զիս կը պատէ ,  
Քու ահդ զիս կ'ոթափէ :

Գլխուս տաք պաղ ջուր մը կ'իջնայ ,  
Զիղերս բոլոր կը սարսուայ .  
Ուժէ ինկած ու անզգայ ,  
Ոտքս ձեռքս կը դողդուայ :

Ա՛խ , վա՛խ :

ՏՂԱՑ

Հարցուցածիս պատասխան տուր ,  
Ըսէ , կուգայ վրադ սարսուռ .  
Աչքդ դեղմը կը պաղի՞մի ,  
Լալու ատենդ կը խնդաս մի :  
Յանկարծ մէկը կը խածնես մի ,  
Բարձր ձայնով կը պոռաս մի .  
Աս չէ , ան չէ , հապա ի՞նչ է ,  
Աս բացէ 'իբաց խենդութիւն է :

ԱՂՋԻԿ

Իմ ցաւս այդ չէ :  
Գիշերները չեմ քնանար ,  
Քեզ կը յիշեմ անդադար .  
Երբոր քիչ մը ոչքերս գոցեմ ,  
Ահով վեր կը ցատկեմ :  
Սիրսս ուժին կը բարախէ ,  
Սաստիկ կրակ մը գլուխս կերէ .  
Ահ բարեկար ըսէ ինձի .  
Այս ցաւերուս պատճառն ի՞նչ է :  
Ախ , վախ :

ՏՂԱՑ

Թշուառական հիմայ գտայ ,  
Քու ցաւդ աղէկ մը հասկցայ .

Մի՛ դանդաղիր բաղսք վաղէ ,  
Սուլֆաթօյի դեղ առ խմէ :  
Ջերմդ կ'անցնի շուտ կը ռնտնաս ,  
Մեր իշուն չափ ուժ կունենաս .  
Միտքս չեկաւ երկու ժամէ ,  
Քու ցաւդ ամրան սաստիկ ջերմէ :

ԱՂՋԻԿ

Իմ ցաւս այդ չէ :  
Թոէեւ այդպէս ախտեր չունիմ ,  
Սակայն պիտի մեռնիմ .  
Գերեզմանս ձեռքովդ փորէ ,  
Զիս մէջը տեղաւորէ :  
Գրթա ինձի ա՛հ սիրելիս ,  
Կեանքո , գանձո , արեւս հոգիս .  
Թէ քեզ ինդրէմ , միշտ քեզ ողբամ ,  
Ախտս սէրն է , ալ լաւ կ'զգամ :  
Ա.ին , վախ ,

ՏՂԱՑ

Այդ քու ախտիդ խելք չը հասնիր ,  
Գնա հինգ ժամ լիճը մտիր .  
Թէ որ ատով ալ չանցնես ,  
Ուղես չուղես պիտի քաշես :  
Կը զարմանամ թէ ի՞նչ է սէր ,  
Մինչեւ հիմայ չէի լսեր .

Զգացածդ շուտով պատմէ ,  
Գուցէ սաստիկ կաթուած մը նէ :

Ա.Դ.ԶԻԿ

Իմցաւս այդ չէ :

Տուր ձեռքդ ինձի , գիր սիրտիս վրայ ,  
Տես թէ ինչպէս կը դողայ .  
Միթէ քեզ ալ ատանկ չըլլա՞ր ,  
Զիս տեսներ բան չե՞ս զգար :

Աւելի ձգէ այդ դեղերը .  
Եկուր գրկէ զիս անդամ մը .  
Կանցնին ցաւերս կառողջանամ ,  
Ուրախ զուարթ տուն կը դառնամ .  
Ա՛խ , վախ ,

ՏՂ.Ա.Ց

Թոէ օր ատով կըսնտնաս նէ ,  
Այս շատ դիւրին ճամբայ մը նէ .  
Եկուր ամէն օր քեզ գրկեմ .  
Բայց չէ կեցիր ես ի՞նչ կ'ըսեմ :

Ինքիր գլխուս բան չեմ ըներ ,  
Գուցէ գրկելն օգուտ չընէր .  
Երթանք հարցնենք մեր բժշկին ,  
Սիալ բան մը չընենք կրկին :

Ա.Դ.ԶԻԿ

Քահանային :

Դ. Հ. ԱՇՏՈՒՆԻ

→→→♦♦♦←←←

## ԾԵՐՈՒՆԻՒՆ

Ես էի առօդ պատանի ,  
Թռչնոց նման թռչտէի .  
Ուր կամէի անդ բունէի ,  
Հանդիստ ու Ճոխ կեանք վարէի :

Այս ամենը երբ կը յիշեմ ,  
Արդի վիճակս կը բաղդատեմ .  
Ետիս դառնամ կը բնտուեմ ,  
Ո՛հ կ'զգամթէ ծերացեր եմ :

Այն պտղալից ծառոց վրայ ,  
Զայլանօք թռայ հասայ .  
Մին կծծէի մին խզէի ,  
Այս ամենուն ես տէր էի :

Ո՛հ ասոնց ամենքն ալ անցան ,  
Վարդակապատ թռչնոց նման .  
Թռչիմ սրանամ միշտ նոյն տեղն եմ ,  
Ու ամեն օր նոյն հաց կուտեմ :

Թռչտելով թռչտելով .  
Հանդիպեցայ ոստ մը մեղբով .  
Ընդունեցի ես զայն սիրով ,  
Մեղքը հատաւ մնացի փայտով .

Փետուրներս մեղբոտեցան .  
Եւ այն ոստին վրայ փական .

ԱԼ ԹԱՅԻՆ ինձ արդիլուեցաւ ,  
Ազատութիւնս կորսուեցաւ :

Կը տեսնեմ զծեղ ով պատանիք ,  
Զի վայելէք ամեն բարիք .  
Ազատութեան յարդը ճանչցիք ,  
Մեղք ոստին վրայ մի' նօտիք :

Յ. Ազնենն

~~~

ՊԱՐԵԲԳ

ՊԻՍԳԱԼԵ ԱՆՑ

~~~

ԳԵՐԻՔ

Գիշերն անցաւ , լոյն ծագեց արդ ,  
Աշխատութեան ժամ է տղայք .  
Օն երկաթաց շոինթ և պայթ ,  
Պսակեն օրուանս այս աշխատանք :

Զի գերութեանս այս դառն կեանք ,  
Է անփոփոխ բաղդ եւ կտպանք .  
Թէ չիք մեղ յոյս ոչ վարձ , պասկ ,  
Իբաց հոդ , վիշտ , պարենք տղայք :

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Անհոդ անփոյթ և ձեռնունայն ,  
Ի պարապոյ վատնէք դուք ժանդ :

Բայց ի դարձիս միւսանգամ ,  
Տի ձաշակէք այս գաւազան :

Օն , մի՛ ծոյեր , անհոդ անփոյթ ,  
Այլ գործեցէք , դուք փոյթ ի փոյթ .  
Բայց ի դարձիս միւսանգամ ,  
Տի ձաշակէք այս գաւազան :

ԿԻՆ

Մի՛ , գու երբէք , խիզճ այս գերեաց ,  
Լըանես սիրս մէ անձկայրեաց .  
Զնմանիս ծանիը սոքա ,  
Աէրդ իմ , մէ , տես , մարդ են սոքա :

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Զի են գերութեան ենթակայ :

ԿԻՆ

Ինչ պէտք դոցա կապանք շղթայ :

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Զի են գերութեան ենթակայ ,  
Պէտք են դոցա կապանք շղթայ :

ԿԻՆ

Զէ են գերութեան ենթակայ ,  
Պէտք չեն դոցա կապանք շղթայ :

ԳԵՐԻՔ

Օն այս երկաթ ծեծենք մենք .  
 Որ զուր տեղը ծեծ չուտենք .  
 Զարնենք կարգաւ , թռաք , թռաք , թռաք ,  
 Ծեծենք , զարնենք , թիք թաք թռաք :  
 Բայց բռնաւո՞ն ալ գնաց ,  
 Պատեհ առ իթ մեզ մնաց .  
 Գրկենք զիրար և պարենք ,  
 Երկաթ վերջը կը ծեծենք :

Օն երգենք մենք տղայք ,  
 Պարպենք գինուց զուարթ բաժակ .  
 Օն գրկենք մենք զիրար ,  
 Պարենք անփոյթ անդադար :  
 Գերութեանս այս դառն կեանք ,  
 Անփոփօխ չէ և կապանք .  
 Գոհ սրտով և զուարթ ,  
 Օրհնենք զԱստուած մեր արդար :

Թեւ թեւ սիրտ սիրտ ՚ի մի տալով ,  
 Պարենք ցնծանք մենք խայտալով :

(Պար)

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Թէ գաւաղանս այս ձեզ բաւ չէ ,  
 Եւ ոչ կանոնս ձեզ խրատէ .

Ապա թէ ոչ դուք համակամ ,  
 Պիտի երթաք բանտ այս վայրկեան :

Օն կարգացէք միաբերան ,  
 Տուէք շուտով ինձ պատասխան .  
 Ապա թէ ոչ դուք համակամ ,  
 Պիտի երթաք բանտ այս վայրկեան :

ԳԵՐԻՔ

Հինգերորդ յօդուած ,  
 Գերիք Պիսգալեանց .  
 Տուժեն ծեծ ու բանտ ,  
 Թէ ըլլան ծոյլ և վատ :

Փոքրիկ Պիսգալեան ,  
 Ուտէ գաւաղան .  
 Թէ բնաւ չաշխատի ,  
 Բանտը պիտ' ձգուի :

Բայց մեծ Պիսգալեան ,  
 Ոչ թէ խարազան .  
 Այլ թէ ծուլանայ ,  
 Անօթի մնայ :

Օն այս երկաթ ծեծենք մենք . . և լն :  
 Գ. Հ. ԱՇՏՎԵԴԻ



## ԱՆԽԵԼՔ ՇՈՒՆ

Ճշմարիտը ահ պարսններ ,  
Գիշեր ցորեկ քունս եմ ծախեր .  
Ինձի յարմար կին մը կուղեմ ,  
Կը մինտուեմ ու չեմ գաներ :

Տարի մ'է որ դուռ չը թողի ,  
Հարուստ աղքատ ամենքն զարկի .  
Ո՞ր աղջկան որ հաւնեցայ ,  
Մէկէն բերնիս չափը առի :  
Անխելք շունը անմոօրէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :

Թռէ որ տարիքս է պատճառը ,  
Նոր պիտի կոխեմ վաթսունը .  
Ինչ անխելք են սա աղջիկներ ,  
Որ չեն ձանչնար եփուն մարդը :

Աս տարիքն է որ էրիկներ ,  
Լաւ կը ձանչնան կնկան յարգը .  
Շատ կը սիրեն միշտ կը սիրեն ,  
Բայց կիները տես ինչ կըսեն :  
Անխելք շունը անմոօրէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :

Յոսս կտրած ձարս հատած ,  
Կարգուելէն ալ վազ անցած .

Երբ յուսահատ տուն դառնայի ,  
Կը մօտենայ մէ կը ինձի :

Եղբայր կըսէ ։ ինչ ես եղեր ,  
Պէտք է պատմես ցաւդ ինձի .  
Ահ բարեկամ թող զիս կըսեմ ,  
Ցաւս մեծ է դուն ինչ կըսես :  
Աղջիկները զիս չեն հաւնիք ,  
Կըսեն ծերերը չեն սիրուիք :

Աս որ լսեց բարեկամն ,  
Քիչ մը խնդաց , բոնեց ձեռքս .  
Ըստ ատ շատ դիւրին բան է ,  
Բայց լսւ բոնէ սա խրատս :

Արդի տղաք ինչ որ կընեն ,  
Նշնը դուն ալ ըրէ մէկէն .  
Կը յաջողիս , կը կարգուիս ,  
Տա խօսքէն ալ շուտ կազատիս :  
Անխելք շունը անմոօրէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :

Օր մը ելայ Մահմուտ փաշա ,  
Խաթ մը լաթով ես ձօվինա .  
Ելայ դացի աղջիկուեսի ,  
Ալ ով չտար աղջիկ ինձի :

Բայց բանթէլօնս այնչափ նեղ էր ,  
Որ յատակը կը պատռաէր .  
Աս ձայնիս վրայ մայրը եկաւ ,  
Ականջս ՚ի վար ոս խօսքն ըստ :  
Անխելք շունը անմորէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :

Ուզեցի որ դէմքս ալ փոխեմ ,  
Կարմիր ճերմակ լաւ մը ծեփեմ .  
Լայն բանթէլօնն , մեծկակ փալթօն ,  
Հագնիմ երթամ աղջիկն առնեմ :

Բայց ներկն այնչափ քսեր եմ որ ,  
Ալտոտեցի լաթերն բոլոր .  
Աղջիկները աս կը տեսնան ,  
Կը փափան կըսեն ինդան :  
Անխելք շունը անմորէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :

Կը բարկանամ թէ պար չյտեմ ,  
Սիրթօ , հօրա միայն գիտեմ .  
Կէս ոսկիով գատրիլ բոլգա ,  
Արդեօք սովորիմ Զափրաստձեանէն :

Չորս ամիսէն կը յաջողիմ ,  
Շօթիս , լանսիէ կը սորվիմ .

Կերթամ գրկել աղջիկները ,  
Նորէն կառնեմ բերնիս չափը :  
Անխելք շունը անմորէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :  
Թութեւ հաւկիթ ըլլալ կուզեմ ,  
Որ աղջկանց աչքը մտնեմ .  
Բառտօն , մէռսի , պօն ժուռ մուզէլ ,  
Գիշ մալ մանի , եանըխ կազէլ :

Չորս հինգ օրուան մէջ կը սորվիմ ,  
Որ սուառէները գտնուիմ .  
Շունշանորդի բաղդս գէշէ ,  
Ամէն աղջիկ միշտ ոս կըսէ :

Անխելք շունը անմորէն ,  
Մաս կը յուսայ կարկանդակէն :

Ես վաղ անցայ կտրգուելէն ,  
Բերանս երեցաւ կիներէն .  
Ինչ որ ըլի չաջողեցաւ ,  
Ստակ տալով բանս բուռաւ :

Հիմայ ձեզի կը խրատեմ ,  
Քսնզի ձենէ փորձառու եմ .  
Թէ որ կնիկ առնել կուզէք ,  
Սա խրատիս լաւ ուշ դրէք :  
Հասակ պղոփիկ ,  
Ունիք հատիկ .  
Կարգու եցէք , կուտան կնիկ :  
Գ. չ. թէթունի

ԹԵԹԵԽՍՈԼԻԿ ՍԻՐԱՀԱՐԸ

Փայլուն աչքով փոքր ոտքով՝  
Կարմրուկ աղջիկ մ'երբ տեսնեմ.  
Չեմ գիմանար ու փութով,  
Սիրտս իրեն կը բանամ:

Փաշուիլն ինչ է չեմ գիտեր,  
Ետիս առջիս չեմ սեպեր.  
Թէ և ելլէ զիս չախէ,  
Կուզեմ մ'է յ մը զայն գրկել:

Խնձոյք հարսնիք անուան տօն,  
Պարսհանդէս կամ թատրոն.  
Հրաւէրի չեմ նայիր,  
Ներս կը նետուիմ սանֆասօն:

Փաշուիլն ինչ է չեմ գիտեր,  
Քաւալիեռն ալ չեմ սեպեր.  
Թէ և հրէ ու մշտէ,  
Կուզեմ քոռթէս սղմուտել:

Գիշերները քուն չունիմ,  
Փողոցները կը շրչիմ.  
Կը քսվատիմ աղջկանց,  
Խօսք կը նետեմ հեռուանց:

Փաշուիլն ինչ է չեմ գիտեր,  
Պատիւն ինչ է չեմ սեպեր.

Թէ և կիցով թուրս նետէ,  
Կուզեմ զանոնք կամտել:

Ամեն աղջկանց ծանօթ եմ,  
Շաքար բունջէր զրկած եմ.  
Ամենուն ալ նամակով,  
Կեանքս ուխտել զրհած եմ:

Փաշուիլն ինչ է չեմ գիտեր,  
Խիպ ու ամօթ չեմ սեպեր.  
Թէ և երեսս թուքնեն,  
Կուզեմ զանոնք համբուրել:

Դեռ մեկալիօր նոր հարս մը,  
Որ երկանն հետ կը վընէր.  
Քայի ըսի կամաց մը,  
Աղւոր երիկ չես առեր:

Փաշուիլն ինչ է չեմ գիտեր,  
Մահը ինչ է չեմ սեպեր.  
Զի ամեն օր շարունակ,  
Ես սովորած եմ ծեծ ուտել:



Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Երբոր վարպետը զանիկայ ծեծէր,  
Իմին որտէս ալ արիւն կը քալէր.

Մէկանեղ կուլայի մէկանեղ խնդայի,  
Չիտեմ որ ինչու ասանկ կը նետի:

Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Երբոր հայլիին գէմը կայնէ ինք,  
Իրարու երես միշտ կը նայէ ինք.

Նայելով բնաւ չէի կշանար,  
Չիտեմ որ ինչու ձեռքս կը դողար:

Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Ճաշի ժամանակ մէկանեղ նստէ ինք,  
Սոխ սխոտոր, պանիր համով կուտէ ինք.

Բայց երբոր ինքը հոն քովս ըլլար,  
Չիտեմ որ ինչու փորս կուշտ կը լլար:

Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Հիմայ ամիս մ'է որ դուրս գացեր է,  
Գիտես թէ ինձի երառն տարի է.

## Սիրելն ի՞նչ բան է

Պետրոսն ինձ կ'ուգար մէկանեղ կ'է Ալինք,  
Դաշտին վրայէն ծաղիկ ժողուեինք.  
Բայց թէ որ օր մը չիկար զիս տեսնէր,  
Չիտեմ ինչու սիրտս կը կոտրեք:

Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Կայիս օր մ'ալ վարդ մը ինձ բերաւ,  
Աղւոր հոտ ունի հոտուրտայ ըսաւ.  
Երբոր ինդարով գլուխս ալ դրաւ,  
Չիտեմ որ ինչու սիրտս բան մ'եղաւ:  
Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Երբոր անկողին մտայ քնացայ,  
Վարդը յիշելով նորէն արթնցայ.  
Աչքէս անդադար արցունք կը վազէր,  
Չիտեմ որ ինչու քունս չէր տանէր:  
Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հսկը կ'աղաքեմ արդեօք հիւանդ եմ:

Կուզէի առտուն Պետրոսը տեսնել,  
Գլխուս եկածը իրեն ալ պատմել.  
Բայց երբոր առտուն եկաւ զիս դտաւ,  
Չիտեմ որ ինչու լեզուս կապուեցաւ:

Թէ որ քառսուն ալ անցնի չը տեսնամ,  
Զիտեմ որ ինչու չը պիտի մունամ։  
Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Ըսէք կ'աղաչեմ արդեօք հիւանդ եմ։

Մոքէս ըսի սա թուղթը գրեմ,  
Ըսէմ թէ զինքը շատ կարօտցեր եմ.  
Ու թէ որ ինք ալ պատասխան գրէ,  
Հօրըս ու մօրըս ձեռքը չի դրկէ։  
Սիրելն ի՞նչ բան է բնաւ չ'գիտեմ,  
Հիւանդ եմ արդեօք, մօրըս հարցընեմ։

Գ. Հ. ԱՇՏՈՒՆԻ

---

### ՆՈՐ ԳԵՂ Ա.ՏԵՆ

Մարկոս

Բարեւ պարոն Ղուկաս,  
Ինչու կ'աճապարես։  
Թէ որ շուկա կերթաս,  
Պարապ ետ կը դառնաս, վայ։  
  
Գէշ ատեն հա հա հա,  
Անշահբան հա հա հա։  
Գէշ ատեն, իրաւ շատ անպիտան։

Ղուկաս

Եռկային գոները,  
Շատ ուշ կը բացուին կոր.  
Կամաց կամաց ան ալ,  
Ամբողջ գոցուի պիտոր։  
Գէշ ատեն և այլն։

Մարկոս

Արդէն գործ չէր մնացեր,  
Լաւ քուն կը քաշէինք,  
Հիմայ կովէն ՚ի վեր։  
Արթննալիք չունինք։  
Գէշ ատեն և այլն։

Ղուկաս

Եթէ ասկէց առաջ,  
Զէինք շահեր ալ նէ։  
Գոնէ գործ մ'ունէինք,  
Աս ան կը խաբէինք։  
Գէշ ատեն և այլն։

Մարկոս

Դիւրին վաստակ մը կար,  
Թէ որ ծեր չըլացինք։

Փարատեան սովորելով ,  
Տէրտէր մը կըլլայինք :  
Գէշ ատեն և այլն :

Ղուկաս

Հինգ հատ զաւկի տէր եմ ,  
Մսխող կին մ'ալ ունիմ .  
Մօտա պօմպէ կուզէ ,  
Ես հին ֆէս մը չունիմ .  
Գէշ ատեն և այլն :

Մարկոս

Հասկա աղջիկս ըսես ,  
Վեց տարի դպրոցն է .  
Սիրեմ բայը աղէկ ,  
Քիչ մ'ալ բառաօն դիտէ :  
Գէշ ատեն և այլն :

Ղուկաս

Իմին լակոտներս ալ ,  
Ժամ ու աղօթք մոռցան .  
Թղթի ստակ կուզեն ,  
Կառնեն թատրոն կերթան :  
Գէշ ատեն և այլն :

Մարկոս

Տան մէջ եղածները ,  
Բոլորն ալ ծախուեցան .  
Կնկանս քօղքը մնաց ,  
Աչքս անոր եմ տնկած :  
Գէշ ատեն և այլն :

Ղուկաս

Տանտէրս առջի որ զիս ,  
Տունէն վռնտեց նէ .  
Նայեցայ որ արդէն ,  
Ամեն բան կըրուեր է :  
Գէշ ատեն և այլն :

Մարկոս

Վաղն անունիս օրն է ,  
Զգել փախչելու է .  
Օրացցց շինողը ,  
Բռնել կախելու է :  
Գէշ ատեն և այլն :

Ղուկաս

Ամեն փողոց պարտք կայ ,  
Թէնհայ ճամբայ չունիմ .  
Թէ որ ասանկ երթայ ,  
Օդէն պիտի թռչիմ :  
Գէշ ատեն և այլն :

Մարկոս

Գաղղիացւոց չափ չըլլանք ,  
Անոնք ալ օդն ելան .  
Սակայն ըրին չըրին ,  
Նորէն ծակը մտան :  
Գէշ ատեն և այլն :

Դուկաս

Չըսէս՝ ալ մեզ համար ,  
Յուսալը փուձ բան է .  
Ասանկ խեղճ ապրելէն ,  
Ոտքը տնկելու է :  
Գէշ ատեն և այլն :

Մարկոս

Թէ որ ինձ հարցնես ,  
Ան ալ աժան բան չէ .  
Արդէն մեռած կըսուինք ,  
Պատանքնիս պակաս է :  
Գէշ ատեն և այլն :

Դուկաս

Եկուր վճիռ մը տանք ,  
Միջոց մը մտմտանք .

Անօթի ապրելնուու ,  
Խեղտըլինք չ'մուրանք :  
Գէշ ատեն և այլն :

Մարկոս

Խեղտըլինք համար ,  
Զուվան պէտք ըլլայ նէ .  
Ուսկից պիտի գտնենք ,  
Անոր ալ կուտ պէտք է :  
Գէշ ատեն և այլն :

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ

Մարկոս և Դուկաս միասին

Գիտեմ մեզ կը կանչէք ,  
Գուցէ խրատ մը տաք .  
Շատ շնորհակալ ենք ,  
Արդէն մենք գործ գտանք :

Ո՛հ , ինչ աղէկ հա հա հա ,  
Այս միջոց հա հա հա .  
Ինչ աղէկ , իրաւ շատ ,  
Աղէկ գործ , հա հա հա :

Թաղսկան անդամներ ,  
Գործ վաստակ չեն գիտեր .  
Գուէն մեզի տուէք ,  
Հարիւրին վեց առէք :  
Ոհ . ինչ աղէկ հա հա հա և այլն :

Քէհրիպարն ու նէօպէթ շէքէրն ,  
Օգուտ չունին աղէկ գիտեմ :

Փաղցրիկ ձայնիկս ուլ մարեցաւ ,  
Զունչական բան մը եղաւ .  
Երդ մը երգելու կամչնամ կոր ,  
Կըսեն էշը կը զըռայ կոր :

Չատ աղջիկներ առ աջ ինծի ,  
Կանչել տային շարդի մանի .  
Հիմայ երբոր բերանս բանամ ,  
Երկու բառին կը բռնդտամ :

Դեղ մը ըսէք երթամ ընեմ ,  
Խաթուն տիկնայք շատ կաղաչեմ .  
Օխուտ ջունին աղէկ գիտեմ ,  
Օգուտ չունին աղէկ գիտեմ :

Սիրուհւյս ալ աչքէն ելայ ,  
Երբ քովի երթամ , կըսէ դնա .  
Զիս ալքեղ հետ կը պլշկես ,  
Զիս պատնելլէ յայտնի կըլլայ .  
Խեղձ ու կրակ տուն կը գառնամ ,  
Լոիկ անկողին կը մտնամ .  
Բայց հարբուխս այնչափ կատղեր ,  
Որ գիթս մտեր ու դուրս չէներ :  
Դեղ մը ըսէք երթամ ընեմ ,  
Ա՛հ , պարոններ շատ կաղաչեմ .

Մէջ մը տաքէն , մէջ մը պաղէն ,  
Կուգայ այս գէշ ախտը կըսես .  
Բայց ես կըսեմ որ այս ցաւուն ,  
Բուն պատճառն է գօգօղութիւն :

Առ աղէկ է որ չըռնտնամ ,  
Մինչեւ մեռնիմ այսպէս մնամ .  
Երբ պարտատերս ստակ ուղէ ,  
Երեսն ի վեր դուքնեմ , բռնդտամ :

Դեղ չեմ ու գեր ցաւէս գոհ եմ,  
Բարեկամներէս շնորհակալ եմ.  
Գինի օղին և սիկառը ,  
Երթամ տնկեմ , ծխեմ , թքնեմ :  
Գ. Հ. ՌԵՏՈՒՆԻ



## ԾԱԾԿԵԱԼ ԱՂՔԱՏՆԵՐ ԽՈՍՔ ԵՒ ԵՂԱՆԱԿ Գ. Հ. ՌԵՏՈՒՆԻՈՅ

Ծածկեալ աղքատն ենք մենք ճանչցէք .  
Զեռքի տակէ ողորմեցէք .  
Այն մուրացող աղքատները ,  
Մէնէ հարուստ են լաւ ճանչցէք :

Թէ լայն գուազաթ դնենք ակնոց ,  
Գոլան բանթոլ ու սե ձեռնոց .  
Ֆոխզէ բաձկոն , չըլլայ խաբուիք ,  
Ամերիգա չունինք շապիկ :  
Ծածկեալ աղքատ և այլն :

Թէ սոնգալով ճեմենք ուռած ,  
Սիրուհինիս թև ագրկած .  
Փութամք քաշուիլ տեղ մը մինակ ,  
Զի խարճելու չունինք ստակ :  
Ծածկեալ և այլն :

Թէ զվարդերէս բառնամք ծիծաղ ,  
Սիրոյ երգեր , ցցց է , աւաղ .  
Ներսիդինիս արեան լիճ է ,  
Հաց չենք կերած երեք օր է :  
Ծածկեալ և այլն :

Թէ հստաւէտ սիկառ ծխենք ,  
Կուշտի նման ակոայ խառնենք .  
Ախորժակնիս կուզենք գոցել ,  
Զի պարզ տեղել ճաշ չենք ըներ :  
Ծածկեալ և այլն :

Թէ շաբաթներ այսպէս անցնի ,  
Մնանք ծարաւ խեղճ անօթի .  
Բան չենք ըսեր բնաւ մէկուն ,  
Զի կը դպչի մերին պատույն :  
Ծածկեալ և այլն :

Թէ մուրացկան մը մեզ մօտենայ ,  
Լալով հացի ստակ մուրա .  
Կուզենք ծածկել մը ցաւն արտասուք ,  
Գնա կըսենք , չունինք մանրուկ :  
Ծածկեալ և այլն :

Մինչեւ անգամ շատ ամիսներ ,  
Տուներնուս մէջ ենք բանտարկուեր .  
Զի ծանօթի մ'որ հանգիպինք ,  
Բարեւելու երես չունինք :

## ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻ

Կրամբամբուլին զայն օղին է ,  
Որ ամենուս ծանօթ է .  
Որուն յարդը չը գիտնալը ,  
Գինեմոլաց պատիւ չէ :

Ի բաց վերմութ դօնեադ գինին ,  
Խմենք կըլլենք Կրամբամբուլին :

Թէ տէրտէրներն մեղ պատուիրեն ,  
Ու օղին պահք դընեն .  
Գաւալթ մ'աւել պէտք է տնկենք ,  
Իրենք մեզմէ շատ կը խմեն :  
Օրէնքն այն է որ ոսկին ,  
Տեղը պաշտենք Կրամբամբուլին :

Թէ բէրային կրակին համար ,  
Խնձի հինգ վեց մէջիտ տան .  
Շիտակ գինետուն ես կը վազեմ ,  
Որ սրտիս կրակը մարեմ :  
Ո՛հ բռնկած տունին սրտին ,  
Պուռուճին է Կրամբամբուլին :

Թէ սա կոր մէջք աղջիկները ,  
Մեղուն մատի վրայ կառնէ .  
Մօտայի տեղ օղի խմեն նէ ,  
Նայինք ասոր ինչ կըսէ :

Խերն անիծես այդ Մեղուին ,  
Որ չետովեր Կրամբամբուլին :

Թէ ես երկրի մ'իշխան ըլլամ ,  
Թատրոն դպրոց կը գոցեմ .  
Թէ ամիս մ'ալ կրամբամբուլին ,  
Գինետուններ կը կանգնեմ :  
Աէր միութիւն հոն թող սովորին ,  
Դասատուն է Կրամբամբուլին :

Թէ գրպանս կուտ մը ըլլայ ,  
Ամենեւին հոգս չէ .  
Գինեպանը ինձ կը հաւտայ ,  
Բայց մէկին տեղ չորս կառնէ :  
Հազար ապրի թօրալ Եօրկին ,  
Երբ ինձ կուտայ Կրամբամբուլին :

Թէ կոտրտուող աղջիկները ,  
Էրեն մրկեն մանչերը .  
Մէջ մը լացնեն մէկ մը քծնին ,  
Զուջուը ձուկին կը նմանին :  
Հազար աղջիկ ինձ գին չունին ,  
Հազար ոսկի Կրամբամբուլին :

Բայց չըլլալու չար մանչերն ալ ,  
Աղջիկներէն վար չեն մնար .  
Նախ կը սիրեն յետոյ կռուեին ,  
Մարտ հավասի կը նմանին :

Հոգիս կուտամ մէկ կաթիլին ,  
Որ նազ չընէր կրամբամբուլին :

Թէ բարեպաշտ մարդիկ ենեն ,  
Մեր սիրածը բամբառեն .  
Ինչ որ ըլլայ աստիճաննին ,  
Բերներնուն չափը կառնեն :  
Աղէկ նայինք աստիճաննին ,  
Որ վար չըլլայ կրամբամբուլին :

Պ. Հ. ԱՇՈԽՆԻ

## ՊԱՐ ԱՒԱԶԱԿԱՑ

Վառեց երկինք իւր մամերն ,  
Աւաղակաց համար :  
Թրալլալլա ( առէց ) :

Սահի զուարթ թող գիշերն ,  
Մեր պալատն է անտառ :  
Թրալլալլա ( առէց ) :

Երդեն հողմունք փոթորիկք ,  
Աւաղակաց համար :  
Թրալլալլա ( առէց ) :

Գինւով լեցուին մեր փորիկք ,

Եկէք օն դուք՝ ի պար :  
Թրալլալլա ( առէց ) :

Երբոր մեռնիմ ես ով ընկերք ,  
Հարիւր գինւով խոսք տուին որ՝  
Կի բաժակներ ամենուն ձեռք ,  
Գան ու պարեն շիրմիս բոլոր .  
Եւ առ ՚ի զոհ մեծ քաւութեան՝  
Ոգւցյս հանդիստ պաղատելով՝  
Պիտի ցողեն իմ գերեզմանն ,  
Հարիւր պուգալ դինիներով :

→→→Չ◀◀◀

## ԵՐԳ ԱՎՏԱՆԻ

Մենք ունինք պեխեր մօրուք սոսկալի ,  
Մենք ունինք եղջիւր պոչիկ սատանի .  
Ուր երթանք ամէն մարդ որ մեզ նմանի ,  
Եկէք միաբան խնդանք մէկ բերան :

Դուք անպիտան քաջեր և դու սատանայ ,  
Մեր շուքը ուր վայլէ և ծեծ անինայ .  
Կորիք չենէ պոչերնիդ կտւենք հոս մնայ ,  
Եկէք միաբան խնդանք մէկ բերան :

Եւ դու կապկաձեւ նոյուածքդ ծիծաղի ,  
Քալուածքդ շարժվածքդ նմանիս թոսպաղի .

Կիր չի կերտած ծեծ չուտած շուտով դուրս  
փախի ,  
Տանք մենք ձեռք ձեռքի խնդանք մէկ  
բերան :

Ականջներդ երկայն խելքդ ի՞նչ կարճ է ,  
Ափրիկէի մէջ ասիկայ արջ է .  
Ելք խաղայ նէ մեր շունէն վոր չէ ,  
Եկէք բարձրաձայն խնդանք մէկ բերան :

Կուկկուլիկ պօռայ անի խոռոզ է ,  
Չեռքերը մէջքը ան ալ սոլոզ է .  
Հպարտ հոգիին սիրտը գոռոզ է .  
Եկէք ասոր վրայ խնդանք մէկ բերան :

Բաժակք ձեռքերնիս իրար զարնուի ,  
Բերաննիս դնենք թող վար պարպուի .  
Անուշ մը հասուր մէզէ ըլլուի .  
Բանանք բերաննիս խնդանք մէկ բերան :

Այս տեղս հինգ մարդ չորս հատ ալ աղջիկ ,  
Սատանի նման երկուք ալ մանչիկ .  
Դուռն ամուր գոցեմ չըլլայ որ փախչիք .  
Հահ հահ պօռալով խնդանք մէկ բերան :

## ՔԹԻՆ ԴԺԳՈՀ ԱՂՋԻԿ ՄԸ

Մի ծաղրէք զիս ով պարոններ  
Հարցուցէք թէ ինչ եմ եղեր  
Անտանելի ժանո ցաւէ մը  
Հանդիսոտ չունիմ մէկ բոպէ մը

Սոխակի պէս ձայն մ'ունէի  
Ուրախ զուտը միշտ կ'երգէի  
Քաղցրիկ ձայնիկս ո՛հ մարեցաւ  
Ագուափ ձայնին նմանեցաւ :

Վարդի նման աղջիկ մ'էի  
Անուշ հոտեր կը բուրէի  
Վարդի մը պէս շուտ բացուեցայ  
Վարդի նման ալ թոռմեցայ

Ով որ տեսներ զիս կը սիրէր  
Հետո նստիլ խօսիլ կուզէր  
Հիմայ երես կը դարցունեն  
Գիթդ զուռնայ չալէ կըսեն

Պարոնի մը շատ սէր տուի  
Հոգիիս պէս կը սիրէի  
Նա ինձ համար ես ալ անոր  
Պատտու մ'էինք կլոր աղուոր

Պարոնը ինձ սրդողեցաւ  
Տուած երդումներն ալ մաս ցաւ



Ուրիշի մը գնաց փակտու  
Քիթդ խաւալ չալէ ըստ

Ա. փսոս սէրն ալ իմ կեանքիս պէս  
Գնաց անցաւ շուտ մը պյովէս  
Առանց սիրոյ կինը ի՞նչ է  
Աղւոր տեպօվ խակ տանձ մնէ :

Կը սիրեն զիս և կը գգուեն  
Աղւորիկ ես լսւ ես կըսեն  
Բայց մէյ մը որ ձայնս լսեն  
Վայ վայ աս ի՞նչ բան է կըսեն .

Ես միշտ սիրել սիրուիլ կուզեմ  
Խաղալ խնդալ շատ կը սիրեմ  
Գեղեցիկ մէկը որ տեսնամ  
Անոր համար հոգի կուտամ

Զիս սիրողներ խիստ շատ ունիմ  
Գործի գալիք մէկը չունիմ  
Շատերն գիտեմ որ զիս կուզեն  
Սակայն քիթը կաւըէ կըսեն :

Դրացիս օր մը զիս ստիպեց  
Իրեն տունը հրաւիրեց  
Աղջիկ տղայ լեցուե՞ս էին  
Հոն ինձ երգ մը կանչէ ըսին

Բայց երբոր ես բայցի բերանս  
Եւ սկսայ հնչել ձայնս  
Քա վույ ըսեն աս ինչ ձայն է  
Կարծես քիթը խաւալ չալէ

Կաղաչեմ ձեղ ՚ պարոններ  
Ըսէք ինձ ինչ պէտք է ընել  
Ռոքս ջուրը դնեմ, ինչ ընեմ  
Թէ ոչ քիթէս արիւն առնեմ

Ասանկ երթայ բանս գէշ է  
Վախնամ մէկը զիս չը պիտի առնէ  
Խերն անիծեմ այս քիթին որ  
Ամէն տաեն գործս կաւըէ .

թ. ՆԱԽԱՆ



# ՅԱՆԿԵՐԳՈՑ

Աղատ Աստուածն այն օրից . . . . .	11
Ա՛խ Հայաստան, Հայաստան . . . . .	7
Ակոռիխն մեծ կարասին բոլորտիքն են բազմեր	15
Ահա աղաւնին, նոյեան տապանին . . . . .	29
Ահա բաժակ ուրախութեան . . . . .	16
Ահա հրեշտակ ոսկեփետոր թոռոցեալ բար .	18
Ահա մարտին փողը նչէ . . . . .	229
Ահա յերկնից ժաղով Աստուած քաջը առ մեզ .	15
Ահա ցորայ նոր առաւօտ . . . . .	196
Ա՛ն դու մրայն սէր, իմ սրտին . . . . .	233
Անի քաղաք նստէր՝ կուլայ . . . . .	20
Անուշ քնակն աշերն առեր . . . . .	220
Առ ընկալ 'ի գիրկդ մայրդ Հայաստան . . . . .	22
Առ բնչ կորուստ ինչ մեծ ցաւ . . . . .	258
Աստեղն Հայկին կրակէ հետքեր . . . . .	216
Արթնցիր ո՛չայ, նոր արշալուսով . . . . .	26
Արիք աղատ կովկաս մասիք . . . . .	199
Արիք Հայկագունք, յառաջ ընթանանք . . . . .	9
Արիք Հայկայ քաջ սերունդք . . . . .	25
Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ . . . . .	25
Աւերակաց երկրի մը մէջ . . . . .	247
Բամբ . . . որտուսն բարձուստ բոմբիւնք . . . . .	51
Բարեւ Պարոն Լուկաս . . . . .	280
Բարձրացն Տէր 'ի յերկրի զփառս Օսման . . . . .	165
Գարուն Հայաստան գայ ծաղկապսակ . . . . .	55
Գարունն եկաւ զուարթ դէմքով . . . . .	255
Գարունն էր կենացս դեռ . . . . .	55
Գետինն անցնի սա ձմեռուան . . . . .	286
Գիշերն անցաւ, լոյսն ծագեց արդ . . . . .	268
Գարանամուտ կամ վաղուց ես լըսիկ . . . . .	57
Դու զնվ խնդրես մայր իմ անուշ . . . . .	212

Բ	
Դու նոր Հայրենիք, դեռ նոր ազգութիւն .	58
Դու վասիկաթեւ մանկիկ զեփիւռ . . . . .	197
Դուք մէջէն ես քովէն . . . . .	40
Ես դալար ծառ մի անկեալ 'ի Հայկայ .	44
Ես էի առոյգ պատանի . . . . .	267
Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին . . . . .	47
Եղբայր, մինչեւ երր այսպէս լուռ տիուր .	49
Երբ կը լսեմ Հայաստանս անուն . . . . .	241
Երբոր բացուին դռներն յուսոյ . . . . .	46
Երգ սիրոյ, երդ Հայրենի, քեզ կուզզուի .	55
Երկիր քաջաղանց, քանի՞ սուզ աչեր .	185
Զերկնաբերձ զիլով սառնապատ լերին .	57
Զինուորին երգերը եղբարք լսեցէք .	255
Եյ սէրվէրի կէրտուն մէգամ . . . . .	55
Եր դու այսպէս ո՞ սեւա զիւեր . . . . .	59
Ընկերք յաղթութեան ժամն արդ հասէ .	65
Ընցաւտարին, Հայոց էլ փառք Ընցաւ հիետ .	176
Թեւ 'ի թեւ օն ընկերք . . . . .	195
Թէ 'ի հրացան դրօշ մահարեր . . . . .	205
Թէ իմ ալեւոր հերքս սեւնային . . . . .	65
Թէ իմս Հայրենեաց քնար սդաւոր . . . . .	65
Թէ Հայկաղանց ոսկի դարուն ոսկի քնարք .	70
Թէ ալէտ ես մեծ տան նշան եմ . . . . .	69
Թէ պէտք վտար քարքէ քաղաք . . . . .	246
Թողէք վլա անէծք, ոճիրք մշտատեւ . . . . .	258
Ժամէէ, Հայեր, արիք ձեր բաղդըն ողջունել .	71
Ժամէէ, Հայեր, արիք ձեր բաղդըն ողջունել .	75
Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ . . . . .	75
Ի զուր ամպերն որոտացին . . . . .	80
Ի խումբ 'ի պար . . . . .	77
Իմ Հայրենիքս վլս կը կանչէ . . . . .	78
Իմ սիրելի զաւակունքս . . . . .	261
Ինչ աննման առիթ մը նէ . . . . .	211
Ինչ քաղցր ու սիրուն մէկ մօր զաւակաց .	

Իջէք զուարթունք՝ եւ 'ի Զեր թեւս ապաս.	81
Ի քեզ անկայ Հայաստան . . . . .	85
Լացէք պատանիք եւ կուսանք Հայոց . .	179
Ծածկեալ աղքանն ենք մենք ճանչցէք . .	288
Լուռ եւ տիսուր դաշտեր գեղեցիկ . . . .	85
Կար ժամանակ, որ եւ Հայերն . . . . .	87
Կրուռնկ ուստի կուգաս ծառայ եմ ճայնիդ . .	87
Կրամբամբուլին այն օդին է . . . . .	290
Հայաստանեաց սեւ տիսրագին օրերը . .	94
Հայաստան երկիր զրախտավայր . . . .	90
Հայաստանի բարձր ու շքեղ սարերէն . .	91
Հայաստան քաղցր իմ Հայաստան . . .	101
Համտ ու սէնա օլ Խիւտայի գատիրէ . . .	105
Հայ եմք մեք անուամբ դիւցաղն սուրբ ար .	228
Հայեր, ալ մեռնինք, մահն է մեր բոտին .	251
Հայեր, մինչեւ Երր արտասուենք . . .	252
Հայիշաղն որդիք հապ' օն 'ի դաշտ . . .	191
Հայկազունք պար բոնենք . . . . .	117
Հայուն աշքէն ալ չը հոսէ դառն արցունք .	98
Հայրենեաց սիրով վասոււած վեհ սրտեր .	92
Հիստեսիլ դէմքիդ գեղոյն . . . . .	194
Հիմի Էլ լրուենք, ելքարք, հիմի Էլ . .	226
Հովիտ ծածկեալ 'ի ծոց լերանց . . . .	106
Հուր քարկութեան համայն հայոց . . .	100
Հրեշտակ Մասեաց մրտենիներ 'ի ձեռին .	96
Հրձուին երկինք, խայտայ երկիր անթերի .	189
Ճշմարիտ ահ պարոններ . . . . .	272
Մայր-Արաքսի ափերով . . . . .	107
Մանկութեան օրեր, երաղի նման . . .	112
Մենք ունինք պեխեր . . . . .	295
Մեր Հայրենեաց փափուկ հողեր . . .	114
Մեր սիրուն հայրենեաց . . . . .	116
Մի ծառուր ուս պարոններ . . . . .	225

Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին . . .	118
Մինչ ծովամած կան 'ի խշտիս . . . .	125
Մինչ հայրենի զուարթ յափանց տարագիր .	119
Մնացես բարեաւ սէր իմ սէր . . . .	120
Մուսայր մասեաց ելէք 'ի դաշտ . . . .	121
Յազան ՚ի վեր 'ի Մասիս . . . . .	127
Յաւուր միում մէկ քարահատ . . . .	129
Նուազեալ կենաց իբրեւ յոյս . . . .	155
Նուրու ֆէրրի միհրումահըն . . . .	159
Նստիր Նիրին, ասեւ քեզ . . . . .	154
Շէնչահու գէման Ապտիւլ ապիզ խան .	208
Ո՞չ ինչ անուշ եւ ինչպէս զով . . . .	145
Ո՞չ ինչ անուշ ինչ գեղեցիկ . . . .	144
Ո՞չ, քաղցր է քո սէր, ո կոյս . . . .	205
Ո՞ջն ընդ քեզ Հայաստան . . . . .	146
Ո՞ջոյն հրեշտակդ աւետարեր . . . .	225
Ո՞ջոյն քեզ ո դաշտ եւ սիրուն ափունք .	141
Ո՞ջոյն քեզ, ով երջանիկ օր . . . .	175
Ո՞չ այնպէս հրծուի յօրրանի մանկիկ .	186
Ո՞չ զուարթ զարուն, ոչ օր մի սիրուն .	142
Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ .	214
Ո՞սգատերեւ յեցեալ նոնցոյ ՚ի ստորոտ .	149
Ով հայը մեր, հայր որ ևս յերկին . . .	257
Ո՞վ մեծասքանչ գու լեզու . . . . .	151
Ո՞վ սուրբ վայրեր, անհնդ ժամեր . . .	244
Ո՞վ քաջազունք, ձեզ հրաւեր . . . .	148
Ո՞վ քաջազունք, որդիք փառաց . . . .	155
Որդիք Հայկայ, որդիք փառաց . . . .	201
Որպէս հէք ստրուկ, հայրենեաց կարօտ .	156
Չեն օրերո մեզ օր խնդութեան . . . .	278
Պետրոսն ինձ կուգար . . . . .	157
Պիր թագըմ ստոէ եիւրէք մուասուն .	158
Սա տիսուր վիճակ տարաբաղդ ազգիս .	292
Վառեց երկինք իւր մոմերն . . . . .	

Տանն օսմանեան արեւ պայծառ . . . . .	165
Տարի մ'ալ անցաւ . . . . .	161
Տէր կեցո դու զՀայս . . . . .	159
Տուր ինձ ճերմակ ճախրասլաց . . . . .	160
Փայլուն աչքով փոքր ոտքով . . . . .	276
Փարատեցաւ երկնից կապոյտ . . . . .	187
Քու ցուրտ շիրմիդ վրայ ուր վմհ . . . . .	165
Օն մեր նախնի դարուց կարդամք հրաւէր . . . . .	167
Օն փութացեք հասեալ է ժամ . . . . .	239
Օտար ափունք ցրուած 'ի սիփիւռ . . . . .	178
Օտար երկիր թափառած . . . . .	166

20065

2  
3  
4

